



*Հեղափոխական խմբի ղեկավար՝
ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
յնպեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

*Հեղափոխական խմբի անդամներ՝
ԴԱՎԻԹ ՀԱԽՎԵՐԳՅԱՆ
յնպեսագիտության դոկտոր, դոցենտ
ԳՐԻԳՈՐ ՆԱԶԱՐՅԱՆ
յնպեսագիտության թեկնածու, դոցենտ
ՖՐԻԴԱ ԲԱՀԱՐՅԱՆ
յնպեսագիտության թեկնածու, դոցենտ
ՏԱԹԵՎԻԿ ՀԱԿՈՒՅԱՆ
յնպեսագիտության թեկնածու, դոցենտ
ԱՐԹՈՒՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
յնպեսագիտության թեկնածու
ՀԱՄՄԻԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
սապիրանտ
ԶԱՐՈՒՀԻ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
մագիստրանտ*

**ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ
ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄԱԿՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

ՀՏԴ 338
ԳՄԴ 65.9(5Հ)-1
Հ 247

*Հրատարակության է երաշխավորել
ՀՊՏՀ գիրական խորհուրդը*

Մասնագիտական խմբագիր՝
Մկրտչայն Թ. Մ.
տ.գ.թ., դոցենտ

Գրախոսներ՝ Ավետիսյան Ս. Ս.
տ.գ.դ., պրոֆեսոր
Գրիգորյան Ա. Վ.
տ.գ.թ., դոցենտ

Խմբագրական խորհուրդ՝
Աթոյան Կ. Լ. (նախագահ)
տ.գ.դ., պրոֆեսոր
Սուվարյան Յու. Մ.
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆեսոր
Վարդանյան Գ. Ի.
տ.գ.դ., պրոֆեսոր
Ավետիսյան Ս. Ս.
տ.գ.դ., պրոֆեսոր

ՀՀ տնտեսության ոլորտային զարգացման և հարկաբյուջետային քաղաքա-
Հ 247 կանության հիմնախնդիրները Մաքսային միության անդամակցության պայ-
մաններում / Մ.Ս. Մելքումյան և ուրիշներ.- Եր.: Տստեսագետ, 2015 –104 էջ.-
(«Ամբերդ» մատենաշար):

Հետազոտական աշխատանքում քննարկվում են ՀՀ ներդրումային և հարկային առանձնահատկությունները Մաքսային միության անդամակցելու պայմաններում:

Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության միանալու տնտեսական էֆեկտը հնարավոր չէ միանշանակ գնահատել, կապված այնպիսի գործոնների հետ, ինչպիսիք են սահմանների բացակայությունը ՄՄ անդամ երկրներից որևէ մեկի հետ, արդյունաբերության զարգացման վրա ազդող տնտեսական գործոնները, վերջին տարիներին ՀՀ արտահանման դինամիկան և կառուցվածքը, ԱՊՀ միջև գործող համաձայնագրերը, և Ռուսաստանի հետ այլ երկկողմ համաձայնագրերը:

Սակայն այսօր ամբողջ աշխարհը մտնում է զանազան ինտեգրացիոն նախագծերի զարգացման փուլ, քանի որ սա է համարվում լիակատար գոյատևման պայմանը ժամանակակից իրականության մեջ, այդպիսին է պետության տնտեսական հաջողության այսօրվա բանաձևը:

ՀՏԴ 338
ԳՄԴ 65.9(5Հ)-1

ISBN 978-9939-61-122-8

© «Ամբերդ» հետազոտական կենտրոն, 2015 թ.
© «Տստեսագետ» հրատարակչություն, 2015 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	5
Ընթացիկ վիճակի համառոտ վերլուծությունը և առկա հիմնախնդիրները	9
1. Տարածաշրջանային ինտեգրման դինամիկան ԱՊՀ տարածքում	19
2. Եվրասիական ինտեգրումը ժամանակակից փուլում	30
3. Եվրասիական ինտեգրման առավելություններն անդամ երկրների համար	32
Հետազոտական մաս	
1. Հարկային համակարգերի ներդաշնակեցումը.....	35
2. ՀՀ և Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների հիմնական հարկային դրույքաչափերի համեմատական վերլուծությունը.....	42
3. Մաքսատուրքերի փոփոխությունների հնարավոր ազդեցությունը ապրանքների գների վրա.....	47
4. Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցության տնտեսական հետևանքների գնահատումը.....	50
5. Հայաստանի Հանրապետության համեմատական առավելությունները Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների առևտրային հոսքերի համադրության մեջ.....	58
6. Հայաստանի Հանրապետության տնտեսության միջազգային տնտեսական ինտեգրման քանակական գնահատականը գրավիտացիոն մոդելի կիրառմամբ.....	63
Եզրակացություն.....	81
Օգտագործված գրականության ցանկ.....	86
Հավելվածներ.....	91
Համառոտագրեր	101

"После формирования Таможенного союза, в который входят Россия, Белоруссия и Казахстан, появилось мощное объединение, позволяющее создавать новые полюса для мировой экономики и в перспективном развитии изменять все мировое экономическое пространство".

Президент РФ Владимир Путин

Ժամանակակից իրականության կարևորագույն բնութագծերից է տարբեր երկրների տնտեսությունների փոխադարձ կախվածության աճը, ինտեգրացիոն գործընթացների զարգացումը միկրո և մակրոմակարդակում, անցումը ներփակ ազգային տնտեսությունից բաց տնտեսության: Երկրների փոխադարձ կախվածությունը դառնում է վճռորոշ իրողություն: Աստիճանաբար ձևավորվում և սերտանում են տարածաշրջանային տնտեսական կապերը՝ ներառելով բազմաթիվ երկրներ: Միջազգային տնտեսական ինտեգրումը ստանում է լայնատարած գործնական կիրառում՝ նախանշելով հետագա զարգացման հեռանկարները:

Միջազգային արդի զարգացումները, գլոբալացման գործընթացները, միջպետական ինտեգրման միտումները հանգեցրել են նրան, որ երկրները դիմում են առավել խորը փոխշահավետ գործակցության՝ ի նպաստ իրենց ժողովուրդների և քաղաքացիների բարօրության, համատեղ լուծելու տնտեսական, բնապահպանական, սոցիալական, մարդկանց անվտանգության ապահովման ու համարժեք այլ խնդիրներ: 21-րդ դարի աշխարհակարգին բնորոշ են հատկապես տնտեսական ոլորտում վերազգային կորպորացիաների գերիշխանությունը, գլոբալ աղետների դեմ պայքարի համաշխարհայինացումը, մարդու իրավունքների ոլորտում միասնական չափորոշիչների սահմանումը, արժեհամակարգային ինտեգրման խորացումը: Այս գործընթացները պահանջում են նաև գործակցության նոր ձևեր, որոնցից է միջազգային և տարածաշրջանային համագործակցության տարբեր ձևաչափերի ակտիվ զարգացումը:

Հետազոտությունները փաստում են, որ, մի կողմից, տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումների ստեղծումը գլոբալացման բացասական հետևանքների բնական արձագանքն է, որոնք հատկապես խորանում են համաշխարհային տնտեսական համակարգի անորոշության պայմաններում, մյուս կողմից՝ իրավահավասար գործընկերության ամբողջական համակարգի ստեղծմանը տանող օբյեկտիվ միտման դրսևորում:

¹ Բ. Հուսեյնով, Գլոբալացման մարտահրավերները և ինտեգրացիոն գործընթացների ուժեղացումը, «21-րդ դար», 2013, թիվ 4 (50), էջ 56:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ այսօր առավել սուր հնչեղություն են ստանում տնտեսական ու սոցիալական անվտանգության հիմնահարցերը, գլոբալացման գործընթացները հաշվեկշռվում են տարածաշրջանային ինտեգրացիոն միավորների աճող ներգործությամբ, սրվում է արդյունքների նկատմամբ վերահսկողության անհրաժեշտությունը:

Միջազգային տնտեսական զարգացումների ընդհանուր միտումն այն է, որ ներկա՝ որակապես նոր, տնտեսական համագործակցության գլխավոր բնութագրիչը փոխհամաձայնեցված կամ միասնական քաղաքականության միջոցով ապրանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի ազատ տեղաշարժի ապահովումն է: Նույնիսկ զարգացած երկրները ներառված են այս գործընթացում, և նոր հազարամյակում այն այլընտրանք չունի:

Այսպիսով, 2013 թ. սեպտեմբերին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարեց մեր երկրի ՄՄ և ՄՏՏ միանալու որոշման մասին և պատրաստակամություն հայտնեց ձեռնարկելու որոշակի գործնական քայլեր՝ հետագայում նաև Եվրասիական տնտեսական միության ձևավորմանը մասնակցելու նպատակով: Հայաստանի Հանրապետության ՄՄ և ՄՏՏ միանալու որոշումը ողջունվեց Մինսկի Բարձրագույն խորհրդում 2013 թ. հոկտեմբերին: Կիրառելով Լրդգստանի Հանրապետության «Ճանապարհային քարտեզի» պատրաստման գործում ազգային կառավարությունների աշխատանքային փորձը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովն այս հարցում շարժվում էր բավականաչափ արագ: Կարճ ժամանակամիջոցում ազգային կառավարությունների սերտ համագործակցությամբ և մեր երկրի ներկայացուցիչների միջև ստորագրվեց Հուշագիր փոխազդեցության խորացման վերաբերյալ, ստեղծվեց աշխատանքային խումբ, և պատրաստվեց «ճանապարհային քարտեզի» նախագիծ: 2013 թ. դեկտեմբերին այդ փաստաթուղթը հաստատվեց Բարձրագույն խորհրդի կողմից, ըստ որի արդեն 2014 թ. Հայաստանը կարող էր մտնել ՄՄ և ԵՏՄ: Ի վերջո, 2015 թվականի հունվարի 2-ին Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես դարձավ Եվրասիական տնտեսական միության լիիրավ անդամ:

Հարկ է նշել, որ ԵՏՄ ներկայացուցիչները 2013 թ. բանակցություններ էին վարում մի շարք երրորդ երկրների և տարածքային միավորների հետ (ազատ առևտրի Եվրոպական ասոցիացիա՝ ԱԱԵԱ, Վիետնամ, Նոր Զելանդիա և այլն) ազատ առևտրի գոտիների ստեղծման վերաբերյալ: Ժամանակակից գլոբալ նախագծերին համապատասխան՝ այդ ձևաչափում քննարկվում է ոչ միայն մաքսասակագնային կարգավորումների թեման, այլև իրավական, տեխնիկական կանոնակարգերի, բուսասանիտարական վերահսկողության պրակտիկայի համահարթեցումը և տեխնոլոգիական, շինարարական և ենթակառուցվածքային քլաստերների հասանելիությունը:

Այսօր ամբողջ աշխարհը մտնում է զանազան ինտեգրացիոն նախագծերի զարգացման փուլ, քանի որ սա է լիակատար գոյատևման պայմանը

Ժամանակակից իրականության մեջ, այդպիսին է պետության տնտեսական հաջողության այսօրվա բանաձևը: Եվրասիական նախագիծը գտնվում է այդ գլոբալ շարժման հունի մեջ: Գլոբալ շուկայում տնտեսական անկայունության ֆոնի վրա տնտեսական ինտեգրումը մի շարք երկրների, այդ թվում նաև ՀՀ-ի համար կդառնա աճի, զարգացման կարևորագույն խթան: ԵՏՄ անդամ երկրների միասնական շահերի պահպանումը համաշխարհային տնտեսության նորովի ձևավորման շրջանակներում հնարավորություն կտա ստեղծելու համաշխարհային տնտեսության էական բևեռ:

2008–2009 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի դասերը վկայում են, որ ժամանակակից աշխարհում ոչ մի պետություն ի վիճակի չէ ինքնուրույն հաղթահարելու գլոբալ վտանգներն ու մարտահրավերները: Այդ իսկ պատճառով ժամանակակից պետությունների տնտեսական մրցունակության բարձրացման, քաղաքական ներուժի ամրապնդման կարևորագույն մեխանիզմներից է տարածաշրջանային ինտեգրումը: Համաշխարհային փորձը ցույց է տալիս ինտեգրացիոն նախագծերի բազմաթիվ հաջողված փորձեր, որոնցից են՝ ԵՄ, НАФТА (Հյուսիսամերիկյան ազատ առևտրի գոտի), МЕРКОСУР (Հարավամերիկյան ընդհանուր շուկա), ШОС (Шанхайская организация сотрудничества) և այլն: ԱՊՀ տարածաշրջանում ինտեգրումը, լինելով ներդաշնակ համաշխարհային միտումներին, օրինաչափ գործընթաց է:

Ներկայում հասնելով ազգային տնտեսությունների և քաղաքական համակարգերի զարգացման բավարար մակարդակի՝ ԱՊՀ երկրներն անցում են կատարում ինտեգրման որակապես նոր փուլի՝ Եվրասիական տնտեսական միության ստեղծմանը, որը կոչված է դառնալու արդյունավետ պատասխան գլոբալ մարտահրավերներին և վտանգներին: Նախ, եվրասիական երկրների ներուժի համախմբումը և միասնական տրանսպորտային համակարգի ձևավորումը տարածաշրջանի երկրներին հնարավորություն է ընձեռում իրականացնելու միջնորդի գործառնությունը եվրոպական և ասիական աշխարհամասերի միջև: Երկրորդ, Եվրասիան զբաղեցնում է Երկրի ցամաքային մակերևույթի 1/6 մասը՝ 290 մլն մարդ բնակչությամբ: Եվ, ի վերջո, եվրասիական տարածաշրջանը ամենաէներգահագեցածներից մեկն է աշխարհում:

Այսպիսով, ԵՏՄ անդամ երկրների զարգացման ընդհանուր ռազմավարության ձևավորումը կնպաստի նշված մրցակցային առավելությունների արդյունավետ օգտագործմանը: Այս համատեքստում, ԱՊՀ երկրների տնտեսագետներն ու քաղաքական գործիչները ինտեգրումը դիտում են որպես կարևորագույն միջոց պետությունների մրցունակության բարձրացման, դրանց արդյունավետ արդիականացման, ինչպես նաև համաշխարհային համագործակցության մեջ ներգրավման՝ առավել ուժեղ դիրքերով:

Գաղտնիք չէ, որ այնպիսի փոքր երկրների համար, ինչպիսին Հայաստանն է, ինտեգրումը երկարատև տնտեսական աճի ապահովման երաշխիք է: Զարգացած երկրների պարտադրած կոշտ մրցակցության պայմաններում արտաքին շուկա մուտք գործելը մեր երկրի համար գլոբալ խնդիր է, քանի որ քարձրորակ և մրցունակ արտահանման արտադրանք արտադրելը պահանջում է բարենպաստ պայմաններ հումքի ներմուծման համար, ինչպես նաև դյուրին ելք դեպի միջազգային տրանսպորտային գլխավոր ուղիներ: Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների և թեկնածու երկրների գլխավոր առանձնահատկությունն այն է, որ նրանք արտահանում են հանքային հումք, ինչն այնքան անհրաժեշտ է Հայաստանին: Մյուս կողմից, տարածաշրջանի գրեթե բոլոր երկրներին պատմականորեն կապում են սերտ տնտեսական և առևտրային կապերը, որոնք ձևավորվել են դեռևս ԽՍՀՄ օրոք, և Հայաստանը, գտնվելով կովկասյան տարածաշրջանում, ունի ռազմավարական նշանակություն, քանի որ հենց այս տարածքով են անցնում առևտրային կարևորագույն ճանապարհները: Այս տեսանկյունից, Հայաստանը կարող է դառնալ հուսալի գործընկեր, ինչպես նաև հանդես գալ որպես տնտեսական դարպաս Իրանի և ԵՏՄ անդամ երկրների միջև:

ԸՆԹԱՑԻԿ ՎԻՃԱԿԻ ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

"Я считаю, что Таможенный Союз - образец того, как соседи, союзники, партнеры должны общаться на благо народов".

Президент Казахстана Нурсултан Назарбаев

Տարածաշրջանային տնտեսական ինտեգրումը նոր երևույթ չէ: Տնտեսագետներն այս հարցը քննարկման առարկա են դարձրել վերջին մի քանի տասնամյակներին, ինչը պայմանավորված է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո գլոբալ ու տարածաշրջանային միջպետական ինտեգրացիոն կազմակերպությունների առաջացմամբ: Մակայն տարածաշրջանային տնտեսական ինտեգրումը սկզբնավորվել և ընթացել է համաշխարհային տնտեսության ձևավորմանը համընթաց¹:

Այնուամենայնիվ, ցայսօր չկա հետևյալ հարցի միանշանակ պատասխանը. տարածաշրջանային ինտեգրումը գլոբալացման շարժի՞չն է, արգելա՞կը, թե՞ տարբերությունները վերացնելու և թույլերին ուժեղներին ենթարկելու միջոց է: Իրականում, այս հարցի պատասխանը կախված է մնացյալ աշխարհից մեկուսացած խմբերի իրական տնտեսական կապերի ուժեղացումից կամ թուլացումից, առևտրային, ներդրումային, արտադրական և ֆինանսական հարաբերություններից, կամ էլ տեղի է ունենում շարժում դեպի ինտեգրման բարձրագույն ձևը՝ արդեն ոչ միայն առանձին ազգային տնտեսությունների, այլև տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումների խմբերի միջև: Ընդ որում՝ արդի պայմաններում այս խնդիրն առավել մեծ հրատապություն է ստանում²:

Տարածաշրջանային տնտեսական ինտեգրումը կարող է դիտարկվել երկու տեսանկյունից՝ և՛ որպես գործընթաց, և՛ որպես իրավիճակ: Տարածաշրջանային տնտեսական ինտեգրումը որպես գործընթաց այնպիսի միջոցառումների իրականացումն է, որոնք ուղղված են տարբեր պետությունների ազգային տնտեսությունների խտրականությունների վերացմանը, իսկ որպես իրավիճակ՝ ազգային տնտեսությունների միջև խտրականությունների տարբեր ձևերի բացակայությունն է³:

Տարածաշրջանային տնտեսական համագործակցության մակարդակը հիմնվում է համագործակցող պետությունների տարածքային սահմանների

¹ Ա. Մարկոսյան, Գ. Նազարյան, Դ. Հախվերդյան, Միջազգային տնտեսական հարաբերություններ, ուսումնական ձեռնարկ, Եր., ԵՊՃՀՀ, 2012, մաս II, էջ 491:

² Բ. Հուսեյնով, Գլոբալացման մարտահրավերները և ինտեգրացիոն գործընթացների ուժեղացումը, «21-րդ դար», 2013, թիվ 4 (50), էջ 57:

³ Balassa B., The Theory of Economic Integration, London, George Alien & Unwin, 1962, p. 1.

(սովորաբար, միավորվում են մեկ մայրցամաքում գտնվող և անմիջական հարևան երկրները, որոնք հեշտությամբ լուծում են տրանսպորտային և այլ հիմնախնդիրները), պատմական զարգացման, փոխլրացնող բնական ռեսուրսների, արտադրատնտեսական, տրանսպորտային-հաղորդակցային, սոցիալ-ժողովրդագրական ներուժի, ինչպես նաև տնտեսական հիմնախնդիրների, արտաքին տնտեսական և քաղաքական շահերի ընդհանրության վրա¹:

Ինչ վերաբերում է տնտեսությունների զարգացման միևնույն կամ մոտ մակարդակին, ապա այս նախադրյալի անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ տնտեսական համագործակցության վնասները համեմատաբար ավելի փոքր են և գրեթե հավասարաչափ են բաշխվում այդ երկրների միջև: Հայրենական ապրանքների մաքսային պաշտպանության պահանջների նվազմամբ սերտանում է տնտեսական համագործակցությունը²:

Փորձը ցույց է տալիս, որ տնտեսական զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրների միջև ձևավորված միավորումները, սովորաբար, սահմանափակվում են ազատ առևտրի գոտու ստեղծմամբ, համաձայնեցնում են ֆինանսական քաղաքականությունը՝ խուսափելով կառավարման վերալետական մարմինների ձևավորումից:

Տարածաշրջանային տնտեսական համագործակցության ներկա փուլի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրա շարժի վրա դրական ազդեցություն է թողնում նաև ինտեգրվող երկրների պատկանելությունը քաղաքակրթության միևնույն կամ համադրելի տեսակին, ինչը հիմքեր է ստեղծում տարածաշրջանային միության շրջանակում նոր, ոչ միայն միասնական տնտեսական, այլև մշակութային տարածության ձևավորման համար³:

Դրա հետ մեկտեղ, այս կամ այն ինտեգրացիոն միավորման անդամակցության կամ համագործակցության ժամանակ անհրաժեշտ է գնահատել, թե որքանով է այդ քայլը մեծացնում երկրի անվտանգության աստիճանը, մասնավորապես՝ նրա տնտեսական անվտանգության աստիճանը, որքանով է ինտեգրումը նպաստում ՀՆԱ աճին, նրա կառուցվածքի բարելավմանը, արտահանման աճին ու առևտրային հաշվեկշռի պակասուրդի հիմնախնդրի լուծմանը և, իհարկե, ինչպես է դա անդրադառնում զբաղվածության հիմնախնդրի լուծման վրա⁴:

¹ Исингарин Н., 10 лет СНГ. Проблемы, поиски, решения, Санкт Петербург, Паллада-медиа. 2001, с. 34.

² Фигурнова Н. П., Международная экономика. Уч. пос., М., ОМЕГА-Л, 2007, с. 200.

³ Европейская интеграция, Большая гуманистическая Европа и культура. Под. ред. Глухарева Л.И., М., УРСС. 1998.

⁴ Ա. Թավադյան, Ինտեգրացիոն գործընթացների իրական հնարավորությունները, «21-րդ ԴԱԲ», 2014, թիվ 5 (57), էջ 5–6:

Այս համատեքստում, Հայաստանի համար խիստ կարևորվում է քաղաքակրթական և աշխարհաքաղաքական կողմնորոշումներին համապատասխան ձևաչափեր տալու խնդիրը: Այդ անհրաժեշտությունը թելադրում է Հայաստանին առավել ակտիվ մասնակցելու եվրոպական և եվրասիական ինտեգրացիոն գործընթացներին, ինչն էապես կբարձրացնի Հայաստանի անվտանգության մակարդակը: Հարկ է, սակայն, նկատել, որ հայկական վերլուծաբանական հանրությունում երբեմն կարելի է հանդիպել կարծիքների, թե ԵՄ Արևելյան համագործակցության ձևաչափը և ԵՏՄ-ին անդամակցելու խնդիրը միմյանց հակասող են: Նման մոտեցումները, մեր կարծիքով, ժամանակավրեպ են և արտահայտում են «ոռուսական կայսրությունից փախչելու» հետխորհրդային առաջին տարիների մտայնությունը: Հատկանշական է, որ Հայաստանի քաղաքական շրջանակներում (որտեղ ավելի իրատեսական են մոտենում խնդիրներին) սկսել է գերիշխել այն մոտեցումը, որ եվրոպական և եվրասիական ձևաչափերում ինտեգրման գործընթացները միմյանց փոխլրացնող են, այլ ոչ՝ հակասող¹:

Եվրասիական ինտեգրման կարևոր կովաններից մեկն առնչվում է աշխարհագրական տարածքի կանխորոշիչ ազդեցությանն այդ տարածքի մշակույթների, պետությունների վրա, որի շնորհիվ էլ ձևավորում է քաղաքակրթական որոշակի, ինքնատիպ տեսակ²:

Ի վերջո, Հայաստանը կատարել է իր աշխարհաքաղաքական ընտրությունը և դրանով իսկ պարզություն մտցրել Հարավային Կովկասի քարտեզում: Այս իրադրությունում, երբ էներգակիրների պաշարների նվազման պատճառով Ադրբեյջանի հանդեպ որոշ չափով նվազել է Արևմուտքի հետաքրքրվածությունը, միանգամայն բնական է Թուրքիայի հետ Ադրբեյջանի հետագա մերձեցումը և, պայմանավորված իրանական հիմնախնդրով, համագործակցության զարգացումն Իսրայելի հետ: Վերջինը, եթե անգամ լիարժեք դերակատար չի դարձել տարածաշրջանում, ապա արդեն կարող է հավակնել գործուն դիտորդի կարգավիճակին:

Ինչպես միշտ, կարևոր է նաև Վրաստանի դերը: Մեր հարևանը գտնվում է անցումային իրավիճակում, և այդ իրավիճակը, թվում է, նախորդի համեմատ ավելի կառուցողական է և համարժեք: Վրաստանի՝ արդեն ավանդական դարձած արևմտյան կողմնորոշումը, ամենայն հավանականությամբ, դեռ կպահպանվի, բայց Ռուսաստանի հետ հարաբերությունների համեմատական կարգավորման ֆոնին այս հանգամանքն ավելի շատ հավասարակշռող, քան ապակայունացնող գործոն է:

¹ Գ. Հարությունյան, Հայաստանին ուղղված մարտահրավերները գլոբալացվող աշխարհում, «21-րդ ԴԱԲ», 2012, թիվ 6 (46), էջ 11–12:

² Ն. Կյուրեղյան, Միաբնեռ աշխարհ, թե՞ եվրասիական ինտեգրացիա, «21-րդ ԴԱԲ», 2013, թիվ 3 (49), էջ 101:

Նկատվող բյուրեղացումը (տվյալ պարագայում) դրականորեն է անդրադառնում տարածաշրջանային իրավիճակի վրա¹:

Այնուհանդերձ, 2013 թ. սեպտեմբերի 3-ից հետո, երբ Հայաստանը հայտարարեց Մաքսային միությանն անդամակցելու մասին, անհրաժեշտություն առաջացավ գնահատելու Հայաստանի համար Մաքսային միությանն անդամակցելու հետևանքները, ինչպես նաև անդամ երկրների հետ առանց մաքսատուրքերի առևտրի արդյունքում ՀՀ արտահանման ծավալների մեծացման հնարավորությունները:

Հատկանշական է, որ Ջ. Վիներից սկսած, տնտեսագետները ուսումնասիրել են երկրների միջև առևտրային համաձայնությունները (լինեն դրանք ԱՏԳ-ներ, թե Մաքսային միություններ) առևտրի ստեղծման ու առևտրի շեղման շրջանակներում: Առևտրի ստեղծումը տեղի է ունենում, երբ գործընկեր երկրներից ներմուծումը մեծանում է և փոխարինում անարդյունավետ ներքին արտադրողների արտադրանքին, իհարկե, եթե այդ ներմուծումը նույնքան էժան է, որքան երրորդ երկրներից ներմուծումը: Մյուս կողմից, առևտրի շեղում տեղի է ունենում, երբ երրորդ երկրներից արտահանվող արտադրանքը, որը հանդիպում է ներմուծման մաքսատուրքերի, ավելի արդյունավետ է, քան գործընկեր երկրների համանման արտադրանքը: Արդյոք ԵՏՄ տարածքում առևտրի ստեղծման փաստը պայմանավորված կլինի՞ նրանով, որ ԵՏՄ մաքսային դրույքաչափերը կգերազանցեն տվյալ երկրի դրույքաչափերը, թե՞ ոչ: Այս դեպքում մաքսատուրքերի բարձրացման սոցիալական հետևանքները կարող են մեծ լինել:

Հատկանշական է, որ Հայաստանի և ԵՏՄ մաքսատուրքերի համեմատությունը հիմք է տալիս ենթադրելու, որ մեր երկիրը ստիպված է լինելու մեծապես բարձրացնել սակագնային պաշտպանության մակարդակը: Մաքսատուրքերի մակարդակի բարձրացումը կրերի բյուջեի պակասուրդի նվազեցմանը և առևտրի վերակողմնորոշմանը, սակայն կարող են խնդիրներ առաջանել ԱՀԿ շրջանակներում:

Հայաստանում կիրառվող ներմուծման միջին կշռված մաքսատուրքը ամենացածրն է ԱՀԿ անդամ երկրների հետ համեմատած: Այն կազմում է 2.7% (ԵՏՄ-ում՝ 7.6%՝ 2013 թ., 6.9%՝ 2014 թ. և 6%՝ 2015 թ.): Միևնույն ժամանակ, երկիրը չի օգտագործում սակագնային քվոտաներ, սակագնային ուղղությունների 73%-ը չունեն մաքսատուրքեր, իսկ մնացածը՝ 10%-անոց մաքսատուրքով են իրականացվում: Հայաստանում միջին կշռված պարտադիր սակագինը 8.5% է (Ռուսաստանում՝ 10%): Շատ դրոսներում, հատկապես ծառայությունների առևտրում, առևտրային ռեժիմը շատ ավելի ազատականացված է, քան ամրագրված է ԱՀԿ պարտավորություններով²:

¹ Գ. Հարությունյան, Տարածաշրջանի վերաձևավորումը, «21-րդ դար», 2014, թիվ 1 (53), էջ 30–31:

² Демиденко М.В., Интеграция Армении в ТС и ЕЭП: Исходная Позиция и существенные условия, ЕЭИ - № 4 (21) ноябрь, 13, с. 67.

Տնտեսական համագործակցության հեռանկարների առումով կարևոր է նաև համադրել Հայաստանի և Ռուսաստանի կիրառած առևտրային ռեժիմները: Հայաստան ներմուծվող ապրանքների նկատմամբ հիմնականում կիրառվում է հարկման ադվալորային համակարգը: Ներկայումս կիրառվում է երկու դրույքաչափ՝ 0% և 10%: Ընդ որում, 10% դրույքաչափով մաքսատուրքերը ամրագրված են վերջնական սպառման համար նախատեսված ապրանքների (կաթ և կաթնեղեն, միս և մսից ենթամթերք, կաթ և կաթնամթերք), իսկ 0% դրույքաչափով մաքսատուրքերը կիրառվում են հետագա վերամշակման ենթակա ապրանքների նկատմամբ (սերմացու հացահատիկ, կենդանի կենդանիներ և այլն): Համեմատության կարգով նշենք, որ ԱՄՆ-ում հումքային ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսային միջին դրույքաչափը կազմում է 0.9%, կիսաֆաբրիկատների համար՝ 3.6%, վերջնական արտադրանքի համար 11.1%: Ճապոնիայում այս ցուցանիշներն են՝ համապատասխանաբար 0.6%, 3% և 19%:

Հայաստանում արտահանման մաքսատուրքերի դրույքաչափը 0% է: Ներմուծումը գրեթե զերծ է սահմանափակումներից, քվոտաներից և արտոնագրման պահանջներից, բացառությամբ առողջապահական, անվտանգության կամ բնապահպանական խնդիրներին առնչվող սահմանափակումների:

Ռուսաստանի ներքին շուկայի պաշտպանվածության աստիճանը, բնականաբար, ավելի բարձր է, քան Հայաստանում: Սակայն շատ արտադրատեսակների (մասնավորապես՝ սպառողական ապրանքների) նկատմամբ Ռուսաստանի Դաշնության կիրառած մաքսատուրքերի դրույքաչափերը 2–4 անգամ ցածր են զարգացած երկրների մաքսատուրքերի դրույքաչափերից: ՌԴ-ում մաքսատուրքերի նվազագույն թույլատրվող դրույքաչափերը սահմանվել են հումքային ապրանքների համար՝ 5%, վերամշակող արդյունաբերության արտադրանքի համար՝ 15%, գյուղատնտեսական արտադրանքի և մթերքների համար՝ 20%¹:

Այսպիսով, և՛ Ռուսաստանում, և՛ առավել ևս Հայաստանում կիրառվող առևտրային արգելքները բավական սահմանափակ են: Առևտրային սահմանափակումների ցածր նախնական մակարդակը, ռուսաստանյան շուկայի ահռելի ծավալները կարող են լուրջ խթան հանդիսանալ հայկական արտադրանքի արտահանման կազմակերպման գործում: Սակայն, դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է հիշել, որ ԵՏՄ անդամակցության դեպքում Հայաստանի համար հնարավոր է նաև որոշակի բարդությունների առաջացում:

¹ Назарян Г.А., Пахляян А.А., Проблемы реализации логистического потенциала Армении и России, **Управление логистическими системами: глобальное мышление – эффективные решения (том I):** Материалы международного научно-практического юбилейного X Южно-Российского логистического форума, 10-11 октября 2014 г., Ростов н/Д: Издательско-полиграфический комплекс РГЭУ (РИНХ), 2014, с. 271.

Այսպես, Հայաստանը, անդամակցելով ԱՀԿ-ին՝ ստանձնել է ներմուծման մաքսատուրքի սահմանման 10% առավելագույն դրույքաչափի պարտավորություն: Ռուսաստանում մաքսատուրքերը կազմում են միջինը 13–14%: ԵՏՄ տարածքում մի շարք ապրանքատեսակների գծով մաքսատուրքի դրույքաչափը հասնում է մինչև 23%-ի, որը, անկասկած, կհանգեցնի ՀՀ առևտրային հարաբերությունների վերակողմնորոշմանը, և երրորդ երկրների հետ առևտրի ծավալները կարող են կրճատվել: Ըստ որոշ գնահատականների՝ մաքսատուրքերի 2%-ով բարձրացումը բերում է երրորդ երկրներից ներմուծման ծավալների 2–3% կրճատմանը և մաքսային միության անդամ երկրներից ներմուծման 1–2% աճին¹:

Դրա հետ մեկտեղ, Հայաստանը և Ռուսաստանը, թեև աշխարհագրապես միմյանց մոտ են գտնվում, սակայն չունեն ընդհանուր սահման, այսինքն՝ մաքսատների վերացման հետ միաժամանակ, այնուամենայնիվ, այլ երկրների (մասնավորապես՝ Վրաստանի) մաքսային տարածքներից Հայաստանի կախվածությունը պահպանվում է:

Թուրքիայի և Ադրբեջանի կողմից տրանսպորտային շրջափակմամբ հանդերձ՝ ՀՀ-ի անդամակցումը ԵՏՄ-ին կնպաստի արտաքին տնտեսական գործունեության ծավալների աճին, պայմանով, որ կիրառվեն տնտեսական զարգացում ապահովող ֆինանսատնտեսական մի շարք լծակներ:

Առաջինը արտահանվող ապրանքների նկատմամբ խրախուսող տնտեսական լծակների կիրառումն է: Երկրորդը՝ տրանսպորտային մեկուսացման խնդրի լուծումն է, ծախսերի փոխհատուցումը: Այս կերպ կապահովվի արտահանման ծավալների աճ, նաև՝ տնտեսության ընդհանուր զարգացում: ՀՀ անդամակցումը ԵՏՄ-ին ենթադրում է Հայաստանի արտաքին առևտրային քաղաքականության մի շարք խնդիրների լուծում, մասնավորապես՝ արտաքին առևտրի ընդարձակում և ծավալների աճ, հայրենական արտադրողների պաշտպանություն, տրանսպորտային ապաշրջափակում և տրանսպորտային համակարգի բարելավում:

Անհրաժեշտ է նշել, որ արտաքին առևտրի ցուցանիշներն այլ կլինեին, եթե չլիներ տրանսպորտային հաղորդակցության խնդիրը, այսինքն՝ Հայաստանը չգտնվեր շրջափակման մեջ և հնարավորություն ունենար զարգացնելու տնտեսությունն առավել արագ տեմպերով: Կան բազմաթիվ հետազոտություններ, որոնք գնահատում են տրանսպորտային շրջափակման բացասական ազդեցությունը ՀՀ արտաքին առևտրի վրա: Այսպես, Համաշխարհային բանկի փորձագետների կարծիքով, տրանսպորտային ապաշրջափակումը և տրանսպորտային հաղորդակցության զարգացումը կկրկնապատկի ՀՀ արտահանումը, իսկ ՀՆԱ-ն կաճի ավելի քան 30%-ով: Ըստ ՀԲ-ի այլ փոր-

¹ Zsoka Koczan and Alexander Plekhanov, How important are non-tariff barriers? Complementarity of infrastructure and institutions of trading partners, *Working Paper EBRD No. 159*, Prepared in July 2013, p. 12.

ձագեւտների՝ տրանսպորտային շրջափակման վերացմամբ տրանսպորտային ծախսերը կկրճատվեն 30–35 %-ով¹:

Ուստի Հայաստանի համար առավել կարևոր և անհետաձգելի խնդիրներ են ենթակառուցվածքների կատարելագործումն ու տրանսպորտային համակարգի դիվերսիֆիկացումը: Այս համատեքստում բացառիկ նշանակություն է ստանում Ռուսաստանի հետ երկայնության հաղորդակցության վերականգնումը: Հետազոտությունները փաստում են, որ ՀՀ տրանսպորտային ծախսերը երկու անգամ գերազանցում են համաշխարհային միջին մակարդակը և տարածաշրջանում ամենաբարձրն են²:

ՀՀ-ից Աբխազիայի տարածքով ՌԴ բեռնափոխադրումների դեպքում ծախսերը կկրճատվեն ավելի քան 30 տոկոսով, այսինքն, եթե ներկայումս Երևանից Մոսկվա 1 տոննա բեռի փոխադրման ծախսը կազմում է 85–90 ԱՄՆ դոլար, ապա երկայնության կապի առկայության դեպքում՝ կկազմի 50–55 ԱՄՆ դոլար³:

Ներկայում Հայաստանի տրանսպորտային հաղորդակցության վիճակը կարող ենք համարել փակուղային, քանի որ բեռնափոխադրումներն ամբողջությամբ կախված են Վրաստանից և Իրանից, իսկ Հայաստանն ինքը բեռնափոխադրումների առումով վճռորոշ նշանակություն չունի իր հարևանների համար, ինչը, իր հերթին, մեծացնում է Հայաստանի միակողմանի կախվածությունը հարևաններից: Լուծելով տրանսպորտային հաղորդակցության խնդիրները՝ Հայաստանը հնարավորություն կստանա կրճատելու տրանսպորտային ծախսերը, ինչն էլ կնպաստի հայկական ապրանքների մրցունակությանը, արտահանման կառուցվածքի փոփոխությանը, արտաքին առևտրաշրջանառության ծավալների աճին և, որպես այս ամենի հետևանք, ՀՆԱ-ի աճին ու բնակչության կենսամակարդակի բարձրացմանը⁴:

Ըստ որոշ հետազոտողների՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ինտեգրման խորացումը կհանգեցնի անդամ երկրներում ՀՆԱ-ի տարեկան 2.5%-ով բարձրացման՝ շնորհիվ առևտրային կապերի խորացման, արտադրության կոոպերացման և տեխնոլոգիական մակարդակի զարգացման, իսկ Հայաստանի դեպքում կանխատեսվում է ՀՆԱ-ի 4% աճ⁵: ԵՏՄ-ին միանալն ապահովում է երեք առանցքային առավելություններ՝

¹ Bertelsmann, Transformation Index 2006, www.bti-project.de/uploads/tx_itao.../BTI_2006_Armenia.pdf, p.16

² Transportation intermediary survey: Georgia and Armenia, 1998 by Richard Beilock, Lasha Khonelidze, and Nara Melikian: Report prepared for USAID Caucasus by IRIS Caucasus October 1998. pp. 14-15

³ Гомця́н А., О некоторых аспектах обеспечения внешнеэкономической эффективности Армении, Финансы и экономика, октябрь 2013, с. 10.

⁴ Демиденко М.В., Интеграция Армении в ТС и ЕЭП: Исходная Позиция и существенные условия, ЕЭИ — № 4 (21) ноябрь, 13, с. 67.

⁵ <http://expert.ru/2014/01/16/oboyudnaya-vyigoda/>

տնտեսական անվտանգություն, ուղղակի ներդրումներ և զբաղվածության աճ: Տնտեսական անվտանգությունը նշանակում է, որ ներքին և արտաքին գների տարբերությունը հասցվելու է նվազագույնի: Այսինքն՝ առաջին փուլում գազի գինը կիջնի մոտ 30%-ով¹՝ մաքսատուրքը չգանձելու շնորհիվ և միայն գազի գնի մեջ նույն երկարաժամկետում, ասենք՝ 5 տարվա ընթացքում կունենանք 750 մլն ԱՄՆ դոլարի օգուտ (տարեկան՝ 150 մլն ԱՄՆ դոլար):

Տրանսպորտային համակարգի տարածաշրջանային ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման նպատակով 2012 թ. հունիսին ստորագրվել է «Եվրասիական Միության տրանսպորտային, էքսպեդիտորական և լոգիստիկ կազմակերպությունների ստեղծման մասին» հիմնադիր պայմանագիրը (ECTՅՈ), որ միավորում է Եվրասիական տնտեսական միության տրանսպորտային միությունները և ասոցիացիաները: Կազմակերպության հիմնական խնդիրներից է Եվրասիական տնտեսական միության տարածքում տրանսպորտի ոլորտի իրավական ակտերի ներդաշնակեցումը և հնարավորինս միասնականացումը²:

Դրա հետ մեկտեղ, սակագնային պաշտպանության բարձր մակարդակը կարող է շատ անարդյունավետ և ծախսատար լինել փոքր տնտեսությամբ երկրների համար: Փորձը ցույց է տալիս, որ սակագնային բարձր պաշտպանությամբ երկրները սովորաբար ավելի դանդաղ տնտեսական աճ են արձանագրում: Ընդհանուր մաքսատուրքի ներդրումը կարող է ծախսատար լինել մի քանի պատճառով.

1. ԵՏՄ անդամ չհանդիսացող խոշոր գործընկեր երկրները, հանդիպելով ավելի բարձր մաքսատուրքերի, կարող են բարձրացնել ԵՏՄ արտահանվող ապրանքների գները:

2. Քանի որ մնացած աշխարհից ներմուծումը ենթարկվում է ավելի բարձր մաքսային գանձման, առևտուրը կվերակողմնորոշվի դեպի ԵՏՄ, ինչի հետևանքով ի հայտ կգան երկու տեսակի ծախսեր.

ա) մաքսային եկամուտների կրճատում, քանի որ ԵՏՄ անդամ երկիրն այլևս ներմուծման մաքսատուրքեր չի գանձում մյուս անդամ երկրներից,

բ) սպառողները հաճախ ստիպված են ձեռք բերելու ոչ այնքան արդյունավետ, սակայն ԵՏՄ-ից ներմուծվող ապրանքներ:

Այդուհանդերձ, Հայաստանի անդամակցությունը ԵՏՄ-ին ցանկացած ռազմավարության ընտրության դեպքում նախընտրելի է հետևյալ պատճառներով: Առաջին, ներքին պահանջարկի հիման վրա երկրի տնտեսության զարգացման սցենարի դեպքում Հայաստանը մեծապես հետաքրքրված է

¹ <http://expert.ru/2014/01/16/oboyudnaya-vyigoda/>

² <http://bit-union.by/infocentr-0/novosti/obshchee-sobranie-chlenov-evraziyskogo-soyuza-transportnyh-ekspeditorskih-i>

համաձայնագրերով, որոնք կնպաստեն ներքին պահանջարկի ընդլայնմանը և ծառայությունների ոլորտի զարգացմանը, կերաշխավորեն աշխատանքային ռեսուրսների և կապիտալի ազատ տեղաշարժ: ԵՏՄ շրջանակներում այս համաձայնագրերը կարող են երաշխավորել երկրի տնտեսության կայուն աճ: Ներկայում, բազմաթիվ այլ պատճառների հետ մեկտեղ, Հայաստանի տնտեսությունը զարգացել է այն սցենարով, որը ենթադրում է ներքին պահանջարկի աճ (տնային տնտեսությունների և պետական հատվածի սպառումը կազմել է 98%) շնորհիվ արտաքին տրանսֆերտների և օտարերկրյա ներդրումների:

Ակնհայտ են նաև տնտեսության անհամամասնությունները, որտեղ գերակշռում են դեպի արտաքին շուկա կողմնորոշված հատվածները, այսինքն՝ ծառայությունների ոլորտը: Շինարարության, առևտրի, տրանսպորտի և ծառայությունների մասնաբաժինը երկրի ՀՆԱ-ում 2013 թ. կազմել է 55,5%¹: Ընդ որում, արդյունաբերությանն ու գյուղատնտեսությանը բաժին է հասնում 44,5%-ը, այն դեպքում, երբ 1996 թ. իրավիճակը տրամագծորեն հակառակն էր (40% և 60% համապատասխանաբար): Տնտեսության տվյալ կառուցվածքը խիստ կախված է տրանսֆերտների ծավալից, որոնք ակտիվացնում են ներկրվող սպրանքների վերջնական սպառումը (ուղղակի էֆեկտ) և հնարավորություն են ընձեռում սահուն զարգացնելու ծառայությունների, տրանսպորտի, շինարարության, առևտրի և ծառայությունների ոլորտը: Ներկրման նվազեցումն ու այս հատվածների (և որպես հետևանք՝ ֆինանսական հատվածի) փլուզումը կարող են ունենալ ամենաբացասական հետևանքները երկրի տնտեսության համար: Բացահայտ է, որ առանց ԵՏՄ-ին անդամակցելու Հայաստանը ստիպված է լինելու ընտրել զարգացման առաջին՝ առավել ռիսկային սցենարը: Երկրորդ, արտահանման ուղղվածության սցենարի ընտրության դեպքում Հայաստանի համար կբացվեն հնարավորություններ հետևյալ առանցքային պայմանների ապահովման դեպքում.

1. Հասանելիություն դեպի ԵՏՄ բավական ընդարձակ և պաշտպանված շուկա՝ բարձր ավելացված արժեք ունեցող սպրանքների իրացման համար (հումքը և գունավոր մետաղները կարող են և առանց դրա լավ վաճառվել միջազգային շուկայում, սակայն հումքի առևտրից առաջացած եկամուտը չի ծածկում փոխարժեքի նկատմամբ երկրի պահանջարկը):

2. Տրանսպորտային հիմնախնդրի լուծում, որը Հայաստանին կհանի տրանսպորտային փակուղուց: Իրան-Հայաստան երկաթգծի կառուցման դեպքում և արխազական տարածքում Հայաստան-Վրաստան-Ռուսաստան երկաթգծի բացման դեպքում կարող է ստեղծվել տարածքային և միջազգային նշանակությամբ ամուր հաղորդակցային հանգույց, որը՝

- կհանի Հայաստանին հաղորդակցային փակուղուց,

¹ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014, էջ 234:

- կատեղծի տրանսպորտային կապ ԵՏՄ անդամ երկրների, Պարսից ծոցի շուկաների և Հարավային և Հարավ-Արևելյան Ասիայի միջև:
- 3. ԵՏՄ շուկաներ ուղղորդված ոլորտներում ներդրումների հոսք: Անկասկած են ԵՏՄ-ի հետ ինտեգրման դեպքում կարճաժամկետ առևտային էֆեկտները՝
 - գազի գնի իջեցմամբ պայմանավորված դրական ազդեցություն (տարեկան մոտավորապես 150 մլն ԱՄՆ դոլար),
 - նավթի վերամշակման մեջ ներդրումների հնարավորություններ (նավթավերամշակող գործարանի կառուցում) և նավթի ներքին սպառման համար մատակարարում առանց արտահանման պարտավորությունների, ինչը հնարավորություն կտա Հայաստանի կառավարությանը լրացուցիչ հարկեր հավաքել:
 - Հնարավոր է բյուջեի անուղղակի սուբսիդավորում նավթամթերքների հաշվին: Օրինակ, բյուջեի համար աջակցություն կլինի նավթամթերքների մատակարարումը ԵՏՄ ներքին գներով, ինչը հնարավորություն կտա բյուջեում ապահովել լրացուցիչ հարկային մուտքեր:

Մաքսատուրքերի բարձրացումը ևս դրական ազդեցություն կունենա բյուջեի վրա: Բացասական հետևանքն են ԱՀԿ-ի հետ լուրջ խնդիրները, անհրաժեշտ ուղղումների գործընթացները (adjustment procedures)¹:

Անփոփելով, կարելի է նշել, որ ակնհայտ են ինտեգրման այն առավելությունները, որոնք կարող են ամրապնդել Հայաստանի դիրքերը՝ հաշվի առնելով մակրոտնտեսական խնդիրների լուծման անհրաժեշտությունը: Թե որքանով կհաջողվի իրացնել այս ներուժը, մեծապես կախված է առանցքային խնդիրների լուծումից՝ տրանսպորտ, էներգետիկա, «վրացական հարց», աշխատանքային միզացիայի օրինականացում և սահմանափակումների վերացում, ինչպես նաև երկրի ներդրումային գրավչության ավելացում:

¹ Демиденко М.В., Интеграция Армении в ТС и ЕЭП: Исходная позиция и существенные условия, ЕЭИ, № 4 (21) ноябрь, 13, с. 71–73.

1

Տարածաշրջանային ինտեգրման դինամիկան ԱՊՀ տարածքում

Համաշխարհային տնտեսության՝ վերջին մի քանի տասնամյակի զարգացման միտումները ցույց են տալիս, որ տնտեսական գլոբալացումն այն հիմնական գործոններից է, որոնք կանխորոշում են երկրների տնտեսությունների զարգացման տեմպերն ու օրինաչափությունները: Ընդ որում, գլոբալացման հատկապես բացասական ազդեցությունն ավելի մեծ է զարգացող և անցումային երկրների վրա, ինչպիսին նաև Հայաստանն է, քանի որ վերջիններս գտնվում են սոցիալ-տնտեսական և կառուցվածքային բարեփոխումների ընթացքում, ինչը զգալիորեն բարդացնում է նրանց մուտքը գլոբալ տնտեսություն:

Գլոբալացումը պայմանավորող կարևոր գործոններից է տարածաշրջանային տնտեսական ինտեգրումը: Վերջին տասնամյակներին գլոբալացման ինտենսիվացումը նաև տարածաշրջանային տնտեսական համագործակցության խորացման հետևանք է: Իր հերթին, գլոբալացումը հակադարձ ազդեցություն է ունենում տնտեսական համագործակցության վրա՝ խթանելով վերջինիս զարգացումը: Այսինքն՝ այս երկու երևույթները պատճառահետևանքային կապերով սերտորեն կապված են և փոխապայմանավորում են միմյանց զարգացումը:

XX դարի երկրորդ կեսին և հատկապես XXI դարի առաջին տասնամյակում համաշխարհային տնտեսության կարևորագույն գործընթացներից մեկը տարածաշրջանային տնտեսական համագործակցության զարգացմանը նպաստող միջպետական կազմակերպությունների երևան գալն էր, որը տնտեսագիտական գրականության մեջ ստացել է «տարածաշրջայնացում» անվանումը:

Տարածաշրջանային տնտեսական համագործակցության առաջընթացին զուգընթաց՝ ավելի է կարևորվում համագործակցության գլոբալ գործընթացների խորացման անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն է ընձեռում ավելի ազատականացնելու համագործակցությունը և սերտացնելու երկրների առևտրատնտեսական հարաբերությունները, ինչի արդյունքը կլինեն միջազգային առևտրի ծավալների ընդլայնումը և գործընթացին մասնակցող երկրների տնտեսական աճը¹:

Տարածաշրջանային տնտեսական ինտեգրումը բավական բարդ և երկարաժամկետ գործընթաց է: Ինտեգրացիոն համաձայնագրերը պետք է դիտարկել որպես տնտեսական բոլոր խնդիրների լուծում: Դրանք ավելի շատ ինտեգրացիոն հնարավորությունների յուրատեսակ «պատուհան» են,

¹ Ա. Մարկոսյան, Գ. Նազարյան, Դ. Հախվերդյան, Միջազգային տնտեսական հարաբերություններ, ուսումնական ձեռնարկ, Եր., ԵՊՃԾՀ, 2012, մաս II, էջ 511:

ինչը կարող է օժանդակել՝ հասնելու որևէ որոշակի նպատակների: Շատ դեպքերում ինտեգրացիոն համաձայնագրերի ներուժը կախված է մեկնարկային վիճակից, այդ համաձայնագրերի իրականացման արագությունից, երկրում կառուցվածքային բարեփոխումների մակարդակից և շատ այլ պայմաններից:

Սույն հետազոտության շրջանակներում ներկայացվել են կարճաժամկետ առևտրային էֆեկտների հաշվարկները, ուսումնասիրվել է ինտեգրվելու տրամադրված երկրների ներդրումային ներուժը, ուսումնասիրվել են այդ երկրների, առանձնապես Հայաստանի ՀՆԱ-ի երկարաժամկետ աճի հեռանկարները: Հատուկ ուշադրության են արժանացել աշխատանքային միգրացիային վերաբերող հարցերը՝ դրանից եկամուտները, աշխատանք գտնելու համար արտասահման մեկնող անձանց թիվը և այլն:

Ինտեգրացիոն գործընթացում կարևորագույն մեկնարկային հանգամանք են երկրի բնակչության եկամուտները՝ ինտեգրացիոն խմբավորման երկրների հետ համեմատած: Հայաստանը մեկ շնչին բաժին ընկնող միջինից ցածր եկամուտով երկիր է: 2012 թ. հանրապետությունում մեկ շնչին բաժին ընկնում անվանական ՀՆԱ-ն կազմել է 5178 ԱՄՆ դոլար (ԱՄՀ տվյալներ, PPP) և 3338 ԱՄՆ դոլար (անվանական փոխարժեք): 1998 թ. սկսած Հայաստանում նկատվում է իրական ՀՆԱ-ի աճ: 2009թ. ՀՆԱ-ն կրճատվեց 14.1%-ով, իսկ 2012 թ. ՀՆԱ-ի աճի տեմպը կազմեց 7.2%: Հայաստանի Հանրապետության տնտեսական աճի հիմնական պատճառը վերջին տարիներին սպարանքների արտահանումն է ու մասնավոր սպառման ներքին աճող պահանջարկը, որն ամրագրվում է արտասահմանում, առաջին հերթին, Ռուսաստանում աշխատող միգրանտների դրամական հոսքերով:

Եթե այդ պատկերը դիտարկենք ԵՏՄ անդամ երկրների (Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան) և հնարավոր անդամների (Հայաստան, Ղրղզստան, Տաջիկստան) տեսանկյունից, կարելի է փաստել, որ Հայաստանը զբաղեցնում է կայուն չորրորդ տեղը (տե՛ս աղյուսակ 1)¹:

Ակնհայտ է, որ հետխորհրդային երկրների ինտեգրացիոն համագործակցության դինամիկան քննարկումների մշտական թեմա է գիտական և քաղաքական շրջանակներում: Արդ, ներկայացնենք առկա կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հիմնական ինտեգրացիոն միտումները ԱՊՀ և Վրաստանի տարածքում (ԱՊՀ-12), որոնք ի հայտ են եկել «Եվրասիական ինտեգրման ցուցանիշների համակարգը Եվրասիական զարգացման բանկում II» ծրագրի շրջանակներում (այսուհետ՝ ԵԻՑՀ)²:

¹ Демиденко М.В., Интеграция Армении в ТС и ЕЭП: Исходная Позиция и существенные условия, ЕЭИ, № 4 (21) ноябрь, 13, с. 63-64.

² ԵԻՑՀ-ն 1999–2012 թ. եվրասիական ինտեգրացիոն դինամիկայի քանակական գնահատման համակարգ է, իրականացվում է Եվրասիական զարգացման բանկի ինտեգրացիոն հետազոտությունների կենտրոնի կողմից: Այս նախագիծը ճանաչվել է աշխարհում տարածաշրջանային ինտեգրման վերլուծության լավագույն երեք նախագծերից մեկը:

Աղյուսակ 1

ԵՏՄ անդամ երկրների և հնարավոր անդամների մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 1999, 2008 և 2012 թթ. (անվանական արժեքով), ԱՄՆ դոլար անվանական փոխարժեքով¹

Երկրներ	1999		2008		2012		Ռուսաստանի փոխարժեքով=100	
	Դիրքը	ԱՄՆ դոլար	Դիրքը	ԱՄՆ դոլար	Դիրքը	ԱՄՆ դոլար	1999	2012
Ռուսաստան	1	1760	1	9760	1	14037	100	100
Ղազախստան	3	1290	2	6140	2	12007	73	86
Բելառուս	2	1400	3	5430	3	6685	80	48
Հայաստան	4	610	4	3340	4	3338	35	24
Ղրղզստան	5	300	5	780	5	1160	17	8
Տաջիկստան	6	180	6	620	6	872	10	6

Ծրագրի հիմքում պաշտոնական վիճակագրական տվյալներն են, և ներառում է 10 ցուցանիշ, որոնցից 6-ը բնութագրում են շուկաների ինտեգրումը, իսկ 4-ը՝ տնտեսությունների կոնվերգենցիան²: Բացի դրանից, իրականացվում է ընդհանրացված ցուցանիշների հաշվարկ, որը հնարավորություն է ընձեռում ընդհանուր գնահատականներ տալ հետխորհրդային տարածքում ինտեգրացիոն գործընթացներին: Շուկայի ինտեգրման ցուցանիշները ներառում են տնտեսության մերձեցման ցուցանիշները փոխադարձ առևտրի, էլեկտրաէներգիայի առևտրի, հացահատիկի առևտրի, աշխատանքային միգրացիայի, ակադեմիական շարժունակության և ուղղակի ներդրումների ոլորտներում: Տնտեսության կոնվերգենցիայի ցուցանիշները հաշվարկվում են մակրոտնտեսական, դրամավարկային, ֆիսկալ, ֆինանսական քաղաքականությունների համար:

ԵԻՑՀ շրջանակներում գնահատվում է բոլոր երկրների միջև ինտեգրումն ըստ երկրների և տարածաշրջանների՝ Ասկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ-12), Եվրասիական տնտեսական միություն (ԵՏՄ-5), Միասնական տնտեսական տարածք (Մաքսային Միություն՝ Ռուսաստան, Ղազախստան, Բելառուս՝ ՄՏՏ-3), Կենտրոնական Ասիա (ԿԱ-4): Բացի դրանից, գնահատվում են ինտեգրման մակարդակն ու դինամիկան տվյալ տարածաշրջանների ներսում:

Առանձին երկրների և ԱՊՀ ինտեգրման դինամիկան

Դիտարկենք ինտեգրման խնդիրները հետխորհրդային տարածքում այլ երկրների համար ԱՊՀ-12 տարածաշրջանի նշանակալիության տես-

¹ Демиденко М.В., Интеграция Армении в ТС и ЕЭП: Исходная Позиция и существенные условия, ЕЭИ, № 4 (21) ноябрь, 13, с. 64.
² Սույն հետազոտությունում «կոնվերգենցիա» հասկացությունն գործածվում է «մերձեցման», «համահարթեցման» իմաստով:

անկյունից¹: Հատուկ ուշադրության են արժանի երկու հանգամանք: Առաջին հերթին, հետազոտության ողջ ժամանակահատվածում երկրները գտնվում էին տարածաշրջանի հետ ինտեգրման գրեթե նույն մակարդակի վրա: Բացառություն են Տաջիկստանը (2002 թ. ու 2008 թ. առաջին հորիզոնականում տարածաշրջանի հետ ինտեգրացիոն համագործակցությամբ և 2012 թ.² համագործակցության կտրուկ նվազում), Մոլդովան (Տաջիկստանից ավելի վաղ է նվազեցրել ինտեգրացիոն համագործակցությունը ԱՊՀ-12-ի հետ) և Ղրղզստանը, որը 2008 թ. տարածաշրջանի հետ մեծապես ուժեղացրել է միջսահմանային կապերը:

Երկրորդը, տարածաշրջանի խոշոր երկրները միջսահմանային համագործակցությամբ գտնվում են ստորին մակարդակում՝ առաջատարությունը թողնելով փոքր պետություններին, ինչպիսիք են Ղրղզստանը և Հայաստանը: Ինտեգրման հարցում փոքր պետությունների առավել շահագրգռվածության հիմքում ընկած են հետևյալ պատճառները՝

- նրանց համար տնտեսական կապերի մեծ նշանակությունը,
- աշխարհագրական դիրքից կախված արտաքին շուկաներ մուտքի սահմանափակությունը,
- արտահանվող հումքային ռեսուրսների բացակայությունը, որը հիմնական կամուրջն էր նախկին ԽՍՀՄ երկրների և աշխարհի միջև²:

Միաժամանակ, մեծ երկրների հսկայական հումքային պաշարները հանգեցնում են նրան, որ այդ երկրները ավելի քիչ են կախված տարածաշրջանային փոխազդեցությունից, քան փոքր երկրները:

Ապրանքների, ծառայությունների և արտադրության գործոնների շուկաների ինտեգրման դինամիկան

ԵԻՑՀ համակարգում շուկայական ինտեգրման դինամիկան հետխորհրդային տարածքում բնութագրվում է, մի կողմից, ընդհանուր առևտրային ինտեգրման ցուցանիշներով և առանձին ոլորտների ինտեգրմամբ, օրինակ՝ էլեկտրաէներգիայի առևտրով: Մյուս կողմից, ԵԻՑՀ-ը ներառում է արտադրության գործոնների շուկայի (աշխատանքային միգրացիա) և ծառայությունների շուկայի ինտեգրման ցուցանիշները (ակադեմիական շարժունակություն): Ինչ վերաբերում է 1999–2012 թթ. առևտրի ցուցանիշներին, ապա երեք շուկաներում էլ ինտեգրման մակարդակը անկումից հետո կայու-

¹ Առավել մանրամասն տե՛ս ԵԱԲՐ (2009) Система индикаторов евразийской интеграции ԵԱԲՐ. Алматы: ԵԱԲՐ. http://www.eabr.org/r/research/centre/projectsCII/siei/index.php?id_16=19

Центр интеграционных исследований ԵԱԲՐ(2014) Система индикаторов евразийской интеграции II. Доклад Центра интеграционных исследований ԵԱԲՐ. №22. Санкт-Петербург: ԵԱԲՐ. http://www.eabr.org/r/research/centre/projectsCII/siei/index.php?id_16=3760

² Винокуров Е., Либман А., Тренды региональной интеграции на постсоветском пространстве: результаты количественного анализа// Вопросы экономики. №7, 2010, стр. 97-98.

նացավ: Սա կարող է նշանակել, որ վերջին երկու տասնամյակում նկատվող մշտական ապահիտեգրման միտումը մոտենում է ավարտին:

ԱՊՀ-12, ԵՏՄ-5, ՄՏՏ-3, ԿԱ-4 տարածաշրջաններում փոխադարձ առևտրի մակարդակը 2008–2012 թթ. գրեթե նույն մակարդակի վրա էր¹: Բացի դրանից, երկրների մեծ մասի համար այդ տարածաշրջանների հետ ինտեգրման ցուցանիշների նշանակությունը համարյա չի փոխվել: Նշենք, որ առևտրային հիմնական հոսքերը հետխորհրդային տարածքում կենտրոնացած են դեպի խոշոր երկրները՝ Ռուսաստան, Ուկրաինա և Բելառուս:

Գյուղատնտեսության, ինչպես նաև ընդհանուր առևտրի և էլեկտրաէներգիայի ոլորտներում, 2009–2012 թթ. ԱՊՀ-12, ԵՏՄ-5, ՄՏՏ-3 տարածաշրջանների ապահիտեգրման գործընթացը դադարել է, իսկ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում 2012 թ. դիտարկվեց անգամ ինտեգրման մակարդակի զգալի աճ:

Ընդհանուր առմամբ, ցուցանիշների զգալի աճ նկատվեց միայն Կենտրոնական Ասիայի երկրներում: Ընդ որում, միջսահմանային առևտրի առաջատար 2009–2012 թթ. դարձավ Տաջիկստանը, այն դեպքում, երբ 2002–2008 թթ. նա ինտեգրման տեմպերի նվազման առաջատար էր:

Ինչ վերաբերում է աշխատանքային ռեսուրսների ինտեգրման դինամիկային, 2009–2011 թթ. ընթացքում աշխատանքային միգրացիայի տեմպերը նվազեցին: ԱՊՀ-12, ԵՏՄ-5, ՄՏՏ-3, ԿԱ-4 տարածաշրջաններում աշխատանքային միգրացիայի ինդեքսը բոլոր երկրների համար կրճատվել է ավելի քան 50%-ով՝ հասնելով 2006 թ. մակարդակին: Դա հիմնականում հետևանք էր այն հանգամանքի, որ հիմնական հոսքերը դիտարկվում են Ռուսաստանի և Կենտրոնական Ասիայի երկրների միջև: Միաժամանակ, փորձագիտական գնահատականներով, Ռուսաստանի Դաշնային միգրացիոն ծառայությունում հաշվառված օրինական աշխատողների թիվը զգալիորեն նվազել է՝ միգրացիայի անօրինական դաշտ տեղափոխվելու պատճառով²: Դրա հետ մեկտեղ, աշխատանքային միգրացիայի մակարդակը 2011 թ. ավելի բարձր էր, քան 2000 թ.:

Հայաստանի դեպքում շատ կարևոր է աշխատանքի շուկայի վիճակը: Անկախության ձեռքբերումից հետո, աշխատանքի շուկան խորը ցնցում հաղթահարեց, ինչն արդյունք էր 1990-ական թվականների համակարգային ճգնաժամի, տնտեսական և սոցիալական բարեփոխումների, ավելի քան

¹ Ստավել մանրամասն տե՛ս՝ ԵԱԲՐ (2009) Система индикаторов евразийской интеграции ԵԱԲՐ. Ал-маты: ԵԱԲՐ. http://www.eabr.org/r/research/centre/projectsCII/siei/index.php?id_16=19

Центр интеграционных исследований ԵԱԲՐ(2014) Система индикаторов евразийской интеграции II. Доклад Центра интеграционных исследований ԵԱԲՐ. №22. Санкт-Петербург: ԵԱԲՐ. http://www.eabr.org/r/research/centre/projectsCII/siei/index.php?id_16=3760

² Власова Н., Развитие интеграционных процессов в сфере миграции на пространстве СНГ, Российский внешнеэкономический вестник. 2011 №10. Ст'а [http://www.rfej.ru/rvv/id /C00533989 /\\$file/52-58.pdf](http://www.rfej.ru/rvv/id /C00533989 /$file/52-58.pdf)

տասը տարի տևող շարունակական տնտեսական աճի՝ 1990-ական թվականների կեսերից մինչև 2008 թ. (մինչև վերջին ճգնաժամը, որը առաջացրեց տնտեսական աճի թուլացում, իսկ հետո նաև անկում): Այդուհանդերձ, իրական գործազրկությունը միշտ երկնիշ էր՝ տնտեսապես ակտիվ բնակչության յուրաքանչյուր չորրորդ մարդը միջինում գործազուրկ էր:

Նման երևույթը մասնակիորեն պատճառ էր նաև աշխատանքային բարձր միգրացիայի: 2012 թ. պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը նախորդ տարվա համեմատ նվազեց 1.1%-ով և կազմեց 17.3%: Հայաստանն աշխատանքային ռեսուրս արտահանող է, և ամենայն հավանականությամբ, միջնաժամկետ հեռանկարում իրավիճակը կտրուկ փոփոխությունների չի ենթարկվի: Անհրաժեշտ է ակտիվ պետական միգրացիոն ռազմավարություն: Ոչ առևտրային դրամային փոխանցումները (տրանսֆերտները) արտասահմանից 2012 թ. կազմել են 1.68 մլրդ ԱՄՆ դոլար, այդ թվում՝ Ռուսաստանից՝ 1.44 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ 2011 թ.՝ 1.29 մլրդ ԱՄՆ դոլար: Մասնավոր սպառման մեծ մասը բաժին է ընկնում ներկրվող ապրանքներին, այդ թվում՝ սննդամթերքին: Դրամական փոխանցումներն ակտիվացնում են սպառողական շուկան, շինարարությունը և ծառայությունների արտադրությունը:

Մեր կարծիքով, աշխատանքային ռեսուրսների արտահանման պետական քաղաքականությունը պետք է ուղղվի ժամանակավոր աշխատանքային միգրացիայի աջակցությանը: Աշխատող միգրանտների պաշտպանության և աջակցության համար կարևոր է օգտագործել ԵՏՄ շրջանակներում ընձեռված հնարավորությունները և վարել բանակցություններ առկա համաձայնագրերի ընդլայնման համար՝ հանուն լիարժեք սոցիալական ապահովագրության, կրթության վկայականների փոխադարձ ճանաչման, ընդունող երկրում մասնագիտական կրթության ստանալու հնարավորության ուղղությամբ:

Եվս մեկ մարտահրավեր է (աշխատանքային բարձր միգրացիայի հետևանք) երկրի առևտրային հաշվեկշռի վիճակը: Առևտրային հաշվեկշռի պակասուրդը կազմում է 25%: Այս իրավիճակը երկարաժամկետում անկայուն է և կարող է հանգեցնել փոխարժեքի վրա ճնշումների: Նաև արտաքին հատվածում հնարավոր են խնդիրներ՝ կապված ընթացիկ հաշվի ֆինանսավորման հետ, քանի որ միգրանտների աշխատանքային եկամուտները ուղղակի կախված են ընդունող երկրի միգրացիոն քաղաքականությունից և միգրանտների օրինականացման մակարդակից (տե՛ս աղյուսակ 2):

Ստացվում է, որ արտաքին առևտրի անհամամասնությունները ծածկվում են աշխատող միգրանտների փոխանցումներով (70%) և արտաքին դրամաշնորհներով ու ներդրումներով (30%)¹:

¹ М.В.Демиденко, Интеграция Армении в ТС и ЕЭП: Исходная Позиция и существенные условия, ЕЭИ — № 4 (21) ноябрь, 13, с. 63–65.

Աղյուսակ 2

Աշխատանքային միգրացիան Հայաստանից և տրանսֆերտային հոսքերը¹

	Նախորդ տարվա համեմատ միգրացիոն հոսքերի փոփոխություն (մարդ)		Նախորդ տարվա համեմատ տրանսֆերտային հոսքերի փոփոխություն		Տրանսֆերտները ՀՆԱ-ում, %	Տրանսֆերտները բյուջեի եկամուտ, %
	մարդ	%	հազար ԱՄՆ դոլար	%		
2001	-2941	-88.5	6663	7.3	4.3	26.1
2002	-2335	-356.6	35336	28	5.3	31.7
2003	95	8.8	35376	21.9	5.8	32.1
2004	-595	-122.2	25295	61.4	11.7	74
2005	301	38.2	122294	22.6	11.1	66.1
2006	151	16.1	198111	26.8	11.6	69.7
2007	8052	89.6	338799	31.4	11.7	62.7
2008	-396	-4.6	292848	21.4	11.8	53.4
2009	5897	40.7	-467055	-51.7	10.5	47.6
2010	5733	28.4	158255	14.9	11.5	50.9
2011	6697	24.9	232897	18	12.8	54.8
2012	7661	22.2	149792	10.4	14.6	61.4

Վերադառնալով ԵՏՄ և ԱՊՀ շրջանակներում միգրացիոն հոսքերին, փաստենք, որ միակ ոլորտը, որտեղ նկատվում է կայուն ան բոլոր տարածաշրջաններում (բացի ԿԱ-4-ից), ակադեմիական շարժունակության ոլորտն է²: 2000–2011 թթ. ընթացքում ներտարածաշրջանային ցուցանիշների աճը 100–150% էր: Հարկ է նշել, որ բացի Ղազախստանից և Բելառուսից, ուսանողների հիմնական դոնոր է նաև Թուրքմենստանը, որտեղից 2011 թ. տվյալներով ավելի քան 20 հազար ուսանողներ են մեկնում սովորելու վերը նշված երկրներ և Ռուսաստան (վերջինս ուսանողներ ընդունող հիմնական երկիրն է):

Ներկայում ԵԻՑՀ-ը հաշվի չի առնում ներդրումային հոսքերը՝ նշված ժամանակահատվածում հավաստի տվյալների բացակայության պատճառով: Սակայն 2012 թ. տվյալներով կարելի է եզրակացնել, որ մեծածավալ ներդրումային հոսքեր առկա են տարածաշրջանի մի քանի խոշոր երկրների միջև, ընդ որում՝ գլխավոր «դոնորը» Ռուսաստանն է, իսկ գլխավոր «ոնեցի-պիենտը»՝ Ուկրաինան³:

¹ Демиденко М.В., Интеграция Армении в ТС и ЕЭП: Исходная Позиция и существенные условия, ЕЭИ — № 4 (21) ноябрь 13, с. 65.

² Ստավել մանրամասն տե՛ս՝ ԵԱԲՐ (2009) Система индикаторов евразийской интеграции ԵԱԲՐ. Алматы: ԵԱԲՐ. http://www.eabr.org/r/research/centre/projectsCII/siei/index.php?id_16=19
 Центр интеграционных исследований ԵԱԲՐ(2014) Система индикаторов евразийской интеграции II. Доклад Центра интеграционных исследований ԵԱԲՐ. №22. Санкт-Петербург: ԵԱԲՐ. http://www.eabr.org/r/research/centre/projectsCII/siei/index.php?id_16=3760

³ Балтер Е.Б., Бессонова Е.В., Динамика региональной интеграции на постсоветском пространстве; Научно-аналитический журнал “Евразийская экономическая интеграция”, № 3 (24) август 2014, с. 48-49.

Այս պատկերն ամբողջովին հակասում է Բ. Բալլասայի մոդելի ավանդական կառուցվածքին, ըստ որի առաջին հերթին ինտեգրացիոն բարձր արդյունքներ են գրանցվում առևտրի ոլորտում, այնուհետ՝ «առավել զարգացած» արտադրության գործոնների ոլորտում: Այդ եզրակացությունն արվել է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխատանքային միգրացիայի ոլորտում ինտեգրման անկումն առաջացել է Ռուսաստանում դրա առանձնահատուկ բնույթի պատճառով: Փորձագիտական գնահատականներով, Ռուսաստանում համախառն միգրացիան, այդ թվում նաև՝ անօրինական, աճում է: Այնուամենայնիվ, աշխատանքային միգրանտների և ուսանողների հոսքերից առևտրի «հետ մնալը» կրճատվել է: Սա, մասամբ, կարող է արտացոլել սովետային միգրացիայի աճը՝ որպես հետևանք միգրանտների հանդեպ թույլ վերահսկողության, որի հաշվին էլ աշխատանքային միգրացիան, պաշտոնական վիճակագրությամբ, կրճատվել է¹: Սա կարող է լինել նաև հետխորհրդային տարածաշրջանում առևտրային ապահիստեգրման «հատակին» հասնելու արդյունք, երբ առևտրի մակարդակը ԱՊՀ-12 երկրների միջև հասել է իր հնարավոր նվազագույնին: Սակայն առևտային ցուցանիշների կայունացման հիմնական պատճառը տնտեսությունների աճի տեմպերի կրճատումն է 2009–2012 թթ. 2000–2008 թթ. հետ համեմատ: Այսկերպ, պետությունների տնտեսությունների աճը դադարեց առաջ անցնել միջսահմանային առևտրից:

Պետք է նշել նաև, որ կատարած վերլուծությամբ հնարավոր չի եղել վեր հանել տարածաշրջանների խմբեր կամ զույգեր, որոնք միանշանակ առաջատար են բոլոր շուկաների ինտեգրացիոն խմբերում (տե՛ս աղյուսակ 3): Տարբեր ոլորտներում առաջատարների «բազմազանությունը» խոսում է տարածաշրջանների հետաքրքրությունների բազմազանության մասին: Ինտեգրացիոն մակարդակում տարբեր ոլորտներում առաջատարներ են դարձել ԱՊՀ-12 տարածաշրջանում Բելառուսը, Ղրղզստանը, Տաջիկստանը և Թուրքմենստանը, ինչն անուղղակի վկայում է ԱՊՀ երկրների հետ ինտեգրման հարցում Կենտրոնական Ասիայի երկրների հետաքրքրությունների մասին, սակայն մասամբ բացատրվում է նաև այդ երկրների ՀՆԱ-ի փոքր ծավալով և բնակչության թվով:

¹ Власова Н. (2011) Развитие интеграционных процессов в сфере миграции на пространстве СНГ. Российский внешнеэкономический вестник. №10. Ст'а [http://www.rfej.ru/rvv/id/C00533989/\\$file/52-58.pdf](http://www.rfej.ru/rvv/id/C00533989/$file/52-58.pdf)

Աղյուսակ 3

Առաջարար երկրների շուկաների ինտեգրման մակարդակն ու դինամիկան հետխորհրդային տարածքում¹

Ցուցանիշ	Առաջարար-գույգեր (ինդեքսի մակարդակ)	Առաջարար-գույգեր (ինդեքսի հավելում)	ԱՊՀ-12-ի հեր ինտեգրման առաջարարներ Առաջարար գույգեր (ինդեքսի մակարդակ)	ԱՊՀ-12-ի հեր ինտեգրման առաջարարներ Առաջարար գույգեր (ինդեքսի հավելում)
Առևտուր (1999–2012)	Բելառուս-Ուկրաինա	Բելառուս-Ուկրաինա	Բելառուս	Ղրղզստան
Աշխատանքային միգրացիա (2000–2011)	Ռուսաստան-Ուզբեկստան	Ռուսաստան-Ուզբեկստան	Տաջիկստան	Տաջիկստան
Էներգետիկա (2002–2012)	Բելառուս-Ուկրաինա	Բելառուս-Ուկրաինա	Ղրղզստան	Ուկրաինա
Գյուղատնտեսություն (2002–2012)	Ադրբեջան-Ղազախստան	Վրաստան-Ղազախստան	Տաջիկստան	Վրաստան
Կրթություն (2000–2011)	Բելառուս-Թուրքմենստան	Բելառուս-Թուրքմենստան	Թուրքմենստան	Թուրքմենստան

Ինտեգրացիոն միտումների շատ հետազոտություններ հետխորհրդային տարածքում Կենտրոնական Ասիան ընդգծում են որպես կայուն ինտեգրացիոն առանձին ենթատարածք: 2009–2012 թթ. ԿԱ-ում ինտեգրման մակարդակը էներգիայի և հացահատիկի առևտրի ոլորտում նկատելիորեն բարձր էր, քան ԱՊՀ տարածաշրջանում ամբողջությամբ, սակայն կտրուկ կորցրել է իր առաջատարությունը կրթության ոլորտում, մասնավորապես, Ղրղզստանում Ուզբեկստանից սովորող ուսանողների թվի կրճատման հետևանքով: Միաժամանակ, փոխադարձ առևտրի ոլորտում Կենտրոնական Ասիան շարունակում է մնալ ամենամեծ ինտեգրված տարածաշրջանը:

Հետխորհրդային տարածաշրջանում երկրների տնտեսությունների կոնվերգենցիայի դինամիկան

Հետխորհրդային տարածաշրջանում վերջին 4 տարիների ընթացքում ավելի շատ նկատվել է տնտեսությունների տարանջատում, քան դրանց մերձեցում: Թեպետ մակրոտնտեսական կտրվածքով կոնվերգենցիայի մակարդակը վերջին շրջանում գրեթե չի փոխվել, սակայն ԱՊՀ-12 երկրների խմբում հիմնականում նկատվում էր դրամավարկային, ֆինանսական և ֆիսկալ քաղաքականությունների ոլորտում ինտեգրացիոն նվազում:

¹ ЕАБР (2009) Система индикаторов евразийской интеграции ЕАБР. Ал-маты: ЕАБР. http://www.eabr.org/r/research/centre/projectsCII/siei/index.php?id_16=19
 Центр интеграционных исследований ЕАБР(2014) Система индикаторов евразийской интеграции II. Доклад Центра интеграционных исследований ЕАБР. №22. Санкт-Петербург: ЕАБР. http://www.eabr.org/r/research/centre/projectsCII/siei/index.php?id_16=3760

Մասնավորապես, 2007 թ. սկսած, չեն սկստվել զգալի փոփոխություններ տարածքների ինտեգրման մակարդակներում, բացառությամբ ԿԱ-4-ում փոխադարձ փոխարացնող ինտեգրման տատանումների¹: Միաժամանակ, մինչև 2008 թ. բոլոր խմբերում նկատվում էր մակրոտնտեսական ցուցանիշների ինտեգրման մակարդակի նվազում: Նշենք նաև, որ ավելի քիչ են ինտեգրված Կենտրոնական Ասիայի երկրները, այն դեպքում, երբ ԵՀԲ-ի անդամ առավել խոշոր երկրներն ունեն ավելի մոտ մակրոտնտեսական ցուցանիշներ:

Բելառուսը դրամավարկային քաղաքականության ոլորտում նկատելիորեն հեռացել է հետխորհրդային տարածաշրջանի մյուս երկրներից, ինչը հետևանք է 2011 թ. գնաճի և բելառուսական ռուբլու փոխարժեքի անկման: Արդյունքում, վերջին տարիներին տեղի է ունեցել կտրուկ տարանջատում երկրների միջև, բացառությամբ ԿԱ-4-ի: ԿԱ-4-ում իրավիճակը 2008–2012 թթ. հիմնականում չի փոփոխվել, ընդ որում՝ ուժեղացել է երկրների զույգերի միջև կոնվերգենցիայի մակարդակը, որոնք չեն ներառում Բելառուսը:

Ֆինանսական քաղաքականության ոլորտում 2008–2012 թթ. հետխորհրդային տարածքի երկրների ինտեգրման մակարդակը զգալիորեն նվազել է, և երկրների բոլոր խմբերի համար սահմանվել 1999 թվականի մակարդակից ցածր մակարդակի վրա, այն դեպքում, երբ 1999–2009 թթ. ԵՏՄ-5 և ԱՊՀ-12 տարածաշրջաններում ինտեգրման ինդեքսների զգալի փոփոխություններ չեն արձանագրվել²:

Ֆիսկալ քաղաքականության ոլորտում դիտարկվող ժամանակաշրջանի վերջում զգալիորեն նվազել էր միջտարածաշրջանային ինտեգրացիոն ինդեքսը ԱՊՀ-12-ի և ՄՏՏ-3-ի միջև, այն դեպքում, երբ 2009–2012 թթ. այլ տարածաշրջաններում իրավիճակը գրեթե չէր փոփոխվել: Նշված ժամանակահատվածում ԱՊՀ խմբի ինտեգրացիոն մակարդակը կայուն և կտրուկ անկում էր ապրում, սակայն սա տեղի էր ունենում ԵՏՄ-5-ի ինտեգրացիոն մակարդակի բարձրացման և ԿԱ-4-ի ինտեգրացիոն մակարդակի գրեթե անփոփոխության պայմաններում³:

¹ Ստվել մանրամասն տե՛ս՝ ԵԱԲՐ (2009) Система индикаторов евразийской интеграции ЕАБР. Ал-маты: ЕАБР. http://www.eabr.org/r/research/centre/projectsCII/siei/index.php?id_16=19
Центр интеграционных исследований ЕАБР(2014) Система индикаторов евразийской интеграции II. Доклад Центра интеграционных исследований ЕАБР. №22. Санкт-Петербург: ЕАБР. http://www.eabr.org/r/research/centre/projectsCII/siei/index.php?id_16=3760

² Балтер Е.Б., Бессонова Е.В., Динамика региональной интеграции на постсоветском пространстве; Научно-аналитический журнал “Евразийская экономическая интеграция”, № 3 (24) август 2014, с. 49-55.

³ Ստվել մանրամասն տե՛ս՝ ԵԱԲՐ (2009) Система индикаторов евразийской интеграции ЕАБР. Ал-маты: ЕАБР. http://www.eabr.org/r/research/centre/projectsCII/siei/index.php?id_16=19
Центр интеграционных исследований ЕАБР(2014) Система индикаторов евразийской интеграции II. Доклад Центра интеграционных исследований ЕАБР. №22. Санкт-Петербург: ЕАБР. http://www.eabr.org/r/research/centre/projectsCII/siei/index.php?id_16=3760

Ինչպես շուկաների ինտեգրման ոլորտում, հետխորհրդային տարածաշրջանի երկրների տնտեսությունների մերձեցման հարցում նույնպես (բացառությամբ ֆիսկալ քաղաքականության ոլորտի), առավել հաջողված էին փոքր պետությունները՝ Հայաստանը, Մոլդովան, Ադրբեջանը (տե՛ս աղյուսակ 4):

Ընդ որում, Կենտրոնական Ասիայի երկրները չեն ցուցաբերում զգալի մերձեցում ԱՊՀ երկրների տնտեսությունների հետ: Կոնվերգենցիայի միջտարածաշրջանային ցուցանիշները ԿԱ-4-ում 2009–2012 թթ. ոչ միանշանակ էին. կոնվերգենցիայի ցուցանիշները դրամավարկային և ֆիսկալ քաղաքականությունների ոլորտում նվազել էին (տնտեսությունների մերձեցում), այն դեպքում, երբ ֆինանսական և դրամավարկային քաղաքականության ինդեքսները մեծացել էին, ընդ որում՝ առաջին դեպքի համար զգալիորեն (տնտեսությունների հեռացում):

Աղյուսակ 4

Տարեսության կոնվերգենցիայի մակարդակի և դինամիկայի առաջադարձերը հետխորհրդային տարածքում 1999–2012 թթ.¹

Ցուցանիշ	Առաջադարձ գույգեր (ավագագույն ինդեքս, 2012)	Առաջադարձ գույգեր (ինդեքսի անկում)	ԱՊՀ-ի հետ կոնվերգենցիայի առաջադարձ (ավագագույն ինդեքս, 2012)	ԱՊՀ-12-ի հետ ինտեգրման առաջադարձ (ինդեքսի նվազում)	Կոնվերգենցիայի ինդեքսի ընդհանուր դինամիկան ԱՊՀ տարածքում
Մակրոտնտեսություն	Ղրղզստան-Մոլդովա	Հայաստան-Թուրքմենստան	Վրաստան	Թուրքմենստան	▲
Դրամավարկային քաղաքականություն	Ադրբեջան-Ուկրաինա	Ադրբեջան-Մոլդովա	Ուզբեկստան	Մոլդովա	▼
Ֆինանսական քաղաքականություն	Հայաստան-Ադրբեջան	Հայաստան-Ղազախստան	Հայաստան	Հայաստան	▲
Ֆիսկալ քաղաքականություն	Հայաստան-Ղազախստան	Հայաստան-Ռուսաստան	Բելառուս	Ռուսաստան	▼

Եզրահանգելով, կարող ենք նշել, որ հետազոտված ժամանակահատվածում ԱՊՀ-12 տարածաշրջանի հետ երկրների մեծ մասի ինտեգրման մակարդակը էականորեն չի փոփոխվել: Ընդ որում, հարաբերականորեն փոքր չափերով տնտեսությամբ երկրներն ավելի ակտիվ են ներգրավվել տարածաշրջանային ինտեգրման գործընթացներում, քան խոշոր երկրները:

¹ ЕАБР (2009) Система индикаторов евразийской интеграции ЕАБР. Ал-маты: ЕАБР. http://www.eabr.org/r/research/centre/projectsCII/siei/index.php?id_16=19
 Центр интеграционных исследований ЕАБР(2014) Система индикаторов евразийской интеграции II. Доклад Центра интеграционных исследований ЕАБР. №22. Санкт-Петербург: ЕАБР. http://www.eabr.org/r/research/centre/projectsCII/siei/index.php?id_16=3760

Առևտրային ինտեգրման մակարդակները ԱՊՀ-12 տարածաշրջանում և ենթատարածաշրջաններում 2000–2008 թթ. անկումից հետո կայունացման միտումներ են դրսևորում, իսկ ակադեմիական շարժունակության ոլորտում շարունակվում է կայուն դրական միտումը՝ բացառությամբ ԿԱ-4 ենթատարածաշրջանի: Դրա հետ մեկտեղ, աշխատանքային միգրանտների հոսքերի միտումը 2009–2012 թթ. նվազել է, կապված Ռուսաստանում միգրացիայի օրենսդրության խստացման հետ: Որպես հետևանք, դիտարկվում է ապրանքների շուկայի ինտեգրման դանդաղում՝ արտադրության գործոնների և ծառայությունների ինտեգրման համեմատությամբ:

Դիտարկվող ժամանակահատվածում նկատվում է հետխորհրդային տնտեսությունների ավելի շատ ապահովագրում, քան մերձեցում: Թեպետ մակրոտնտեսական կտրվածքով կոնվերգենցիայի մակարդակը վերջին տարիներին չի փոխվել, հետխորհրդային երկրների խմբերում հիմնականում դիտարկվում է ինտեգրման նվազում դրամավարկային, ֆինանսական և ֆիսկալ քաղաքականությունների ոլորտներում:

Ստացված արդյունքները վկայում են նաև, որ այսպես կոչված՝ «երկրորդ ինտեգրացիոն միջուկը»՝ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանը, առայժմ չի իրացնում ենթակառուցվածքային փոխհարաբերություններով և ընդհանուր սոցիալական տարածաշրջանով պայմանավորված իր ենթատարածաշրջանային ինտեգրացիոն ներուժը:

2

Եվրասիական ինտեգրումը ժամանակակից փուլում

Եվրասիական տնտեսական նախագծի իրականացումը բազմամակարդակ է և ենթադրում է մի քանի փուլերի հաջորդական իրականացում՝ Եվրասիական տնտեսական համագործակցություն (ԵԵՐԱՀԾԸ), Մաքսային միություն, Միասնական տնտեսական տարածաշրջան, Եվրասիական տնտեսական միություն: Ինտեգրացիոն միավորման գործընթացը նման չէ եվրոպական փորձին, սակայն գոյություն ունեն մի շարք համապատասխանություններ և զուգահեռներ Եվրոպական միության մոդելի հետ: Եվրասիական ինտեգրման գաղափարի ինստիտուցիոնալ իրականացման առաջին փուլը Եվրասիական տնտեսական համագործակցության (ԵԵՐԱՀԾԸ) ստեղծումն է 2000 թ. Ռուսաստանի, Ղազախստանի, Բելոռուսի, Ղրղզստանի, Տաջիկստանի և Ուզբեկստանի (կասեցրել է անդամակցությունը 2008 թ.) ջանքերով: ԵԵՐԱՀԾԸ-ի շրջանակներում կազմակերպության 10 տարվա գոյության ընթացքում իրականացվել են որոշակի տնտեսական նախագծեր, որոնցից է ազատ առևտրի իրական ռեժիմի ստեղծումը, մաքսատուրքերի վերացումը համագործակցության երկրների տարածքներում իրականացվող առևտրի դեպքում, ԵԵՐԱՀԾԸ հակաճգնաժամային հիմնադրամի ձևավորումը,

Եվրասիական տրանսպորտային մայրուղու կառուցումը և այլն: Ձեռնարկված քայլերի արդյունքն էր նախ և առաջ, համագործակցությունը երկրների միջև, փոխադարձ առևտրաշրջանառության աճը:

Աղյուսակ 5-ում ներկայացված Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը ԵՏՄ անդամ երկրների հետ 2008–2013 թթ., ըստ որի 2013 թվականին ՀՀ և ՌԴ միջև ապրանքաշրջանառությունը կազմել է 1 359,2 մլն ԱՄՆ դոլար, կամ ՀՀ ընդհանուր ապրանքաշրջանառության 22,8%-ը, իսկ ՀՀ ընդհանուր ապրանքաշրջանառության մեջ ՄՄ անդամ երկրների շարքում միայն ՌԴ ապրանքաշրջանառությունը կազմել է 95,9%, և հետևաբար, առանձնակի կարևորվում է ՌԴ ընկերությունների դերը հայկական շուկայում:

Աղյուսակ 5

Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը ԵՏՄ անդամ երկրների հետ 2008–2013 թթ. (մլն ԱՄՆ դոլար)¹

Երկրներ	Ցուցանիշներ	2008	2009	2010	2011	2012	2013
Ընդամենը	Արտահանում	1057,1	710,1	1041,0	1334,3	1380,2	1480,0
	Ներմուծում	4426,1	3321,1	3748,9	4145,3	4261,2	4476,8
	Շրջանառություն	5483,2	4031,2	4790,0	5479,6	5641,4	5956,8
ԵՏՄ անդամ երկրներ, այդ թվում՝	Արտահանում	213,8	114,4	168,1	232,6	289,7	349,8
	Ներմուծում	898,0	820,0	909,0	945,7	1076,3	1066,6
	Շրջանառություն	1111,9	934,5	1047,2	1178,4	1366,1	1416,4
ՌԴ	Արտահանում	208,1	107,4	160,5	222,2	279,1	334,1
	Ներմուծում	851,1	792,2	835,2	890,8	1057,4	1025,1
	Շրջանառություն	1059,3	899,6	995,7	1113,1	1336,5	1 59,2
Բելառուս	Արտահանում	2,7	4,6	4,5	5,9	6,7	8,5
	Ներմուծում	28,3	24,6	31,9	29,5	10,0	40,8
	Շրջանառություն	31,1	29,2	36,4	35,5	16,7	49,3
Ղազախստան	Արտահանում	2,8	2,4	3,0	4,3	3,9	7,2
	Ներմուծում	18,4	3,2	11,8	25,3	8,8	0,7
	Շրջանառություն	21,3	5,6	14,9	29,7	12,8	7,9

ՀՀ և Բելառուսի միջև ապրանքաշրջանառությունը 2013 թվականին եղել է 49,3 մլն ԱՄՆ դոլարի, ինչը ՀՀ ընդհանուր ապրանքաշրջանառության 0,8%-ն է, իսկ ԵՏՄ անդամ երկրների հետ ապրանքաշրջանառության 3,4%-ը: ՀՀ և Ղազախստանի միջև ապրանքաշրջանառությունը 2013 թվականին կազմել է 7,9 մլն ԱՄՆ դոլար, ինչը ՀՀ ընդհանուր ապրանքաշրջանառության միայն 0,1%-ն է, իսկ ԵՏՄ անդամ երկրների հետ ապրանքաշրջանառության՝ 0,5 %-ը:

Աղյուսակ 6-ում ներկայացվում է ՀՆԱ-ի աճը ՀՀ-ում, ՄՄ անդամ և այլ երկրներում 2009–2013 թթ., ինչպես նաև ՀՆԱ միջին տարեկան աճը: 2013 թվականին ՄՄ անդամ երկրներից ամենաբարձրը ՀՆԱ-ի աճի ցուցանիշով

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2014 թվական, Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական ինտերնետային կայք՝ www.armstat.am:

գրանցվել է Ղազախստանում՝ 6%, այնուհետև՝ ՀՀ-ում՝ 3.5%, ՌԴ-ում՝ 1,3%, իսկ Բելառուսում՝ միայն 0,9%: Պետք է նշել, որ այս ցուցանիշն աճման կամ նվազման կայուն միտում չի դրսևորել ԵՏՄ անդամ ոչ մի երկրում 2009–2013 թթ., իսկ 2009 թվականին ՀՀ-ում և ՌԴ-ում բացասական մեծություն է եղել՝ համապատասխանաբար արձանագրելով՝ -14.1% և -7.8%:

Աղյուսակ 6

ՀՆԱ-ի աճը ՀՀ-ում, ԵՏՄ անդամ և այլ երկրներում 2009–2013 թթ. (նախորդ տարվա նկատմամբ, տոկոսներով)¹

	2009	2010	2011	2012	2013	ՀՆԱ-ի միջին տարեկան աճը 2009-2013 թթ.
Հայաստան	-14,1	2,2	4,7	7,2	3,5	0,7
Բելառուս	0,2	7,7	5,5	1,7	0,9	3,2
Ղազախստան	1,2	7,3	7,5	5,0	6,0	5,4
Ռուսաստանի Դաշնություն	-7,8	4,5	4,3	3,4	1,3	1,1
Ղրղզստան	2,9	0,5	6,0	0,1	10,5	4,0
Մոլդովա	-6,0	7,1	6,8	0,7	8,0	3,3
Տաջիկստան	3,9	6,5	7,4	7,5	7,4	6,5
Ուզբեկստան	8,1	8,5	8,3	8,2	8,0	8,2
Ուկրաինա	-14,8	4,1	5,2	0,3	0,0	-1,0
Թուրքմենստան	6,1	9,2	14,7	11,1	10,0	10,2

3

Եվրասիական ինտեգրման առավելություններն անդամ երկրների համար

Եվրասիական նախագծի տնտեսական նպատակահարությունը պայմանավորված է մի շարք առավելություններով.

- Ընդհանուր մաքսային սահմանների հաստատումը նվազեցնում է արտաքին շուկայի ճնշումը ԵՏՄ անդամ երկրների սեփական արտադրության վրա ինչը հնարավորություն կտա ավելի լավ պատրաստվել գլոբալ մրցակցությանը,
- ԵՏՄ շրջանակներում համագործակցությունը բարենպաստ ազդեցություն կունենա երեք երկրների արտահանվող արտադրանքի առաջնդման համար: Փորձագետների գնահատմամբ՝ եվրասիական ինտեգրումը տարածաշրջանի երկրների համար հասանելի է դարձնում 170 մլն սպառողներ ունեցող հսկայածավալ շուկա՝ 2 տրլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով: Փորձագետների հաշվարկ-

¹ Աղբյուրը՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական ինտերնետային կայք՝ www.armstat.am, Համշխարհային բանկի պաշտոնական ինտերնետային կայք՝ www.worldbank.org.

ներով՝ գումարային ինտեգրացիոն էֆեկտը, որը հաշվարկվում է ՀՆԱ-ի լրացուցիչ արտադրությամբ, մինչև 2015 թ. Ռուսաստանի, Բելոռուսի և Ղազախստանի համար կկազմի մոտ 400 մլրդ ԱՄՆ դոլար: Միննույն ժամանակ, երկրներից յուրաքանչյուրը կունենա էական ինտեգրացիոն էֆեկտ: Ռուսաստանը շնորհիվ ինտեգրացման գործոնի, կստանա ՀՆԱ-ի ժամանակակից մակարդակի 16,8% աճ, Ուկրաինան՝ 17%, Բելառուսը՝ 16%, Ղազախստանը՝ 14,7%:

- Մաքսային սահմանների վերացումը նպաստում է եվրասիական երկրների ընկերությունների արտադրական կոոպերացման իրական պայմանների ստեղծմանը՝ բարձր տեխնոլոգիական ապրանքների արտադրության և մեծածավալ շուկայի ձևավորման համար, որտեղ գործելու են միատեսակ «խաղի կանոններ», ինչն ավելի արդյունավետորեն կապահովի տնտեսական աճ և Միասնական տնտեսական տարածքի երկրների բնակչության կենսամակարդակի բարձրացում:
- Եվրասիական նախագծի անդամ երկրների միավորումը կնպաստի դրանց տարածքների տարանցման ներուժի արդյունավետության բարձրացմանը: Բեռնափոխադրումների աճը կապահովվի արտաքին սահմաններին խոչընդոտների կրճատմամբ: Ապագայում նշված առավելությունը հավասարապես հասանելի կդարձնի այս երկրների ենթակառուցվածքները:
- Նորարարությունների շնորհիվ տնտեսության արդիականացումը կխթանի սոցիալական ոլորտի զարգացմանը, որը, իր հերթին, կանխորոշում է ոչ միայն բնակչության բարեկեցությունը, այլ նաև նպաստում եվրասիական երկրների քաղաքացիների կրթական և մշակութային մակարդակի բարձրացմանը:

Ընդհանուր առմամբ, այսօր ԱՊՀ երկրների հիմնական խնդիրը ինտեգրացիոն տնտեսության զարգացումն է: Վերջինս պահանջում է արդյունաբերական մտավոր սեփականության շուկայի ձևավորում, որը, իր հերթին, ենթադրում է մրցունակ արտադրության առկայություն և իրացման շուկայի էական ընդլայնում: Այսպիսով, եվրասիական նախագծի շրջանակներում համագործակցությունը նպաստելու է պետությունների տնտեսական և սոցիալական արդիականացմանը:

Ռուսաստանի հետ փոխհարաբերությունները, որպես եվրասիական ինտեգրման նախագծի կարևորագույն տարրի, էականորեն որոշում են Հայաստանի շահերը եվրասիական երկրների հետ փոխահարաբերությունների խորացման գործում: Նշենք առնվազն երեք փաստ Հայաստանի և Ռուսաստանի միջև երկկողմանի և բազմակողմանի լապերի խորացման անհրաժեշտության օգտին.

1. ոռոսական ընկերությունները Հայաստանի տնտեսության հիմնական արտաքին մասնակիցներն են,

2. Ռուսաստանը փոքր և միջին ձեռնարկատիրոջ, ինչպես նաև աշխատանքային միգրանտների ընտանիքների մուտքերի ապահովման հիմնական աղբյուրն է,
3. Ռուսաստանն է հարաբերականորեն խոշոր օտարերկրյա ներդրողը ՀՀ տնտեսության մեջ:

Ներկայում հայ-ռուսական հարաբերությունների առանցքային բաղկացուցիչը առևտրատնտեսական համագործակցությունն է: Այսպես, 2011 թ. ապրանքաշրջանառության ծավալը գերազանցեց մինչդեռաժամային մակարդակը՝ կազմելով 1 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ռուսական ներդրումները Հայաստանում՝ շուրջ 3 մլրդ ԱՄՆ դոլար: Հենց ուղղակի ներդրումների ոլորտն էլ երկկողմանի հարաբերությունների զարգացման կարևորագույն ուղին է: Ռուսաստանի ավելի քան 70 շրջան Հայաստանի հետ ունեն սերտ հարաբերություններ: 2012 թ. տվյալները ցույց են տալիս որ հայաստանյան բանկերը Ռուսաստանից ներգրավել են ավելի շատ վարկային միջոցներ, քան մյուս երկրներից: ՀՀ ԿԲ տվյալներով, 2012 թ. երկրորդ եռամսյակի դրությամբ առևտրային բանկերն ու վարկային կազմակերպությունները Ռուսաստանից ներգրավել են ամբողջ փոխառու միջոցների 57%-ը (Գերմանիայից՝ 13,1%, Լատվիայից՝ 11,8%, միջազգային այլ կազմակերպություններից՝ 9,1%):

Որոշ ժամանակ առաջ հայաստանյան բանկերը վարկային ռեսուրսներ էին ստանում հիմնականում միջազգային կազմակերպություններից, սակայն Եվրոպայի ֆինանսական շուկայում անկայունության պատճառով նման գործարքների իրականացման հավանականությունը կրճատվեց: 2012 թ. երկրորդ եռամսյակի տվյալներով՝ Հայաստանի առևտրային բանկերի ցանցի միջոցով ֆիզիկական անձանց ստացած տրանսվերտների չափը գերազանցելով 840 մլն ԱՄՆ դոլարը, և նախորդ տարվա միևնույն ժամանակաշրջանի համեմատ ավելացավ 8,8%-ով: Տարեկան տրանսֆերտների գծով ռեկորդը սահմանվել է 2008 թ.՝ 1,6 մլրդ ԱՄՆ դոլար: Փոխանցումների կառուցվածքում ևս Ռուսաստանը առաջնային տեղ է գրավում: Այսպես, եթե 2008 թ. առաջին կիսամյակում Ռուսաստանից ստացվել է ամբողջ տրանսֆերտների 82,2%-ը, ապա 2012 թ. այդ ցուցանիշն աճեց երկու տոկոսային կետով՝ հասնելով 84,2%-ի:

Հայաստանում Ռուսաստանի ֆոնդային շուկայի հեռանկարային զարգացումը ևս մեկ փաստ է Հայաստանում ՌԴ խոշոր ընկերությունների՝ («Рысал», «Газпром», «ВТБ») դերի մեծացման գործում: Ըստ BlakRock խմբի կանխատեսումների՝ ռուսական ընկերությունների բաժնետոմսերի արժեքը աճել է 40%-ով՝ շնորհիվ երկրի էներգետիկ ոլորտի ռեկորդային շահաբաժինների (Bloomberg հետազոտություն): Այսպիսով՝ ռուսական ընկերությունների աճն արտացոլվում է նաև Հայաստանում դրանց իրականացվող նախագծերի մեջ:

¹ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ պաշտոնական ինտերնետային կայք՝ www.cba.am

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

1 Հարկային համակարգերի ներդաշնակեցումը

"Таможенный союз - это взаимные уступки, взаимная поддержка и огромный рынок".

Президент Белоруссии Александр Лукашенко

Տնտեսական համագործակցության զարգացումը, որը հիմնված է ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժման վրա, ցանկացած ինտեգրացիոն միավորման շրջանակներում անհնար է իրականացնել առանց համաձայնեցված և ներդաշնակ հարկային քաղաքականության իրականացման:

Անտարակույս, միջպետական տնտեսական ինտեգրման շրջանակներում ներդաշնակեցումը պետք է իրականացնել համաձայնեցված, հետևողականորեն և համատեղ: Այսպիսով, կարելի է առանձնացնել հարկերի նոր գործառույթ, այն է՝ ինտեգրման գործառույթը, որն ուղղված է արտաքին տնտեսական և ներառևտրային հարաբերությունների կարգավորմանը:

Հարկային ներդաշնակեցումն առաջարկում է միասնական հարկային ռեժիմով մեկ տարածաշրջանի ստեղծում: Միևնույն ժամանակ երկրները պետք է գործեն հետևյալ սկզբունքներով.

- պետությունների հարկային քաղաքականությունը պետք է ապահովի ապրանքների և բնակչության ազատ տեղաշարժ,
- ազգային հարկային քաղաքականությունը չպետք է հակասի մյուս երկրների հարկային քաղաքականությանը,
- հարկային քաղաքականությունը պետք է կանխի կրկնակի հարկումը:

Այսպիսով՝ ներդաշնակեցման հիմնական սկզբունքներն են.

- իրավական կարգավորման համաձայնեցում,
- ներդաշնակեցված ակտերի ընդունման համատեղություն,
- ներդաշնակեցման փուլերի հաջորդականություն,
- միջազգային պայմանագրերի գերակայություն ազգային օրենսդրության նկատմամբ:

Կարող ենք առանձնացնել ներդաշնակեցման գործընթացի 5 հիմնական փուլեր:

Առաջին փուլ՝ ներդաշնակեցում պահանջող ճյուղերի, ոլորտների և առանձին խնդիրների որոշումը:

Երկրորդ փուլ՝ իրավական-համեմատական վերլուծություն, որի արդյունքը կդառնա **երրորդ փուլը**՝ ազգային օրենսդրական և նորմատիվ

իրավական այլ ակտերի համաձայնեցված շարքի որոշումը, որը ենթակա է ներդաշնակեցման:

Չորրորդ փուլ՝ ներդաշնակեցված ակտերի միաժամանակյա ընդունում:

Հինգերորդ փուլ՝ ներդաշնակեցման հարցերով որոշումների իրականացման վերահսկողություն:

Ներդաշնակեցման հիմք են միջազգային պայմանագրերը և պետության սեփական նախաձեռնությունը: Ներդաշնակեցման հիմքը նաև պետությունների կամավորությունն ու ինքնուրույնությունն է սեփական հարկային օրենսդրության փոփոխության աստիճանը որոշելիս, այսինքն թե որքանով է ցանկանում մոտեցնել իր երկրի հարկային օրենսդրությունն այլ երկրների նմանատիպ օրենքներին:

Ներկայում ԵՏՄ բոլոր երկրները հարկային օրենսդրության բարեփոխումների այս կամ այն փուլում են: Անհրաժեշտ է նշել, որ հարկային օրենսդրությունների զարգացումը գնում է ներդաշնակեցման ուղղությամբ, քանի որ միայն այդ պայմաններում է հնարավոր կապիտալի, ապրանքների, ծառայությունների ազատ տեղաշարժի ապահովում և մրցակցային պայմանների հավասարեցում:

Ինչ վերաբերում է հարկերի դրույքաչափերին, ապա այստեղ պատկերը պարզ չէ: Մասնավորապես, Հայաստանում և Բելառուսում ԱԱՀ տոկոսադրույքը կազմում է 20%, Ռուսաստանում՝ 18%, Ղազախստանում՝ 12%: Ըստ 11.12.2009 թ. ընդունված կարգի¹ ԱԱՀ պետք է վճարվի այն երկրի կանոններով և դրույքաչափերով, որտեղ իրացվում է տվյալ ապրանքը կամ ծառայությունը («նշանակման երկիր» սկզբունքով). այստեղ մենք բախվում ենք տարբեր դրույքաչափերի խնդրին, ինչի էֆեկտն անհնար է լիովին չեզոքացնել, քանի որ դրանց լիարժեք համահարթեցումն իրատեսական չէ:

Մաքսային մուտքերը և անուղղակի հարկերը Հայաստանի բյուջեում ունեն առանցքային նշանակություն, քանի որ դրանց միջոցով են լուծվում երկրի սոցիալական ոլորտի խնդիրները, և, այդ առումով, ԵՏՄ անդամակցելուց սպասվող էֆեկտը միանշանակ չէ: Նշենք, որ սահմանի վրա զանձված ԱԱՀ կազմում է երկրի ամբողջ ԱԱՀ կեսը, և ներկայումս չենք կարող ասել, թե այդ միջոցների կորստի փոխհատուցման բեռը ում ուսերին է ընկնելու և ինչպես է համալրվելու երկրի բյուջեն: Թեև ապրանքները էժանանում են սահմանի վրա գործող ԱԱՀ զանձման համակարգի վերացման հաշվին, սակայն դա անդամ երկրների վրա ունի ոչ հավասարաչափ ազդեցություն: Ներկայումս ներմուծման ժամանակ մաքսային արժեքի նկատմամբ հաշվարկվում է մաքսատուրք, իսկ այնուհետև ընդհանուր գումարին ավելանում է 20% ԱԱՀ: Գումարային տեսքով մաքսատուրքերն ու հարկերը,

¹ Աղբյուրը՝ «О порядке взимания косвенных налогов при выполнении работ, оказании услуг в Таможенном союзе», <http://www.eurasiancommission.org>

որոնք վճարվում են ներմուծման դեպքում, կազմում են 32%: ԵՏՄ անդամակցելուց հետո Հայաստանի ներմուծումն էժանանում է ներմուծող երկրի ԱԱՀ գումարի չափով (12%, 18% և 20%), իսկ արտահանումն էժանանում է Հայաստանի 20% ԱԱՀ գումարով: Բայց խնդրի հաշվապահական տեսանկյունից ծագում են բարդություններ ԱԱՀ-ի հաշվանցման ժամանակ. այսպես, դեպի Ռուսաստան ապրանքների արտահանման ժամանակ ընկերությունները ընդհանուր գումարից ստանում են 16% որպես ԱԱՀ, մինչև ժամանակ, արտադրանքի արտադրության համար հումքը և այլ բաղադրիչները ձեռք են բերվել ներքին շուկայում՝ 20% ԱԱՀ դրույքաչափով, այդ դեպքում ընկերությունները ստիպված են ավելի շատ հարկեր վճարել: Ռուսական ներմուծող ընկերությունների համար դա կունենա հակադարձ ազդեցություն, նրանք ստանում են 4%-ով ավելի ԱԱՀ, քան վճարել են արտադրության ժամանակ: Բայց հնարավոր են նաև այլ տարբերակներ. օրինակ, եթե հումքը ներմուծվում է Ղազախստանից, վերանշակվում է Հայաստանում և արտահանվում Ռուսաստան, այստեղ մենք ունենում ենք ԱԱՀ երեք տարբեր դրույքաչափեր: Նույնը տեսնում ենք նաև ակցիզային հարկի գանձման ժամանակ:

Խնդիրն այն է, որ այս երևույթը բարդացնում է հարկային հաշվառումը և ընկերության փաստաթղթավորումը, այդ իսկ պատճառով ընկերության, և, ի վերջո, երկրի տնտեսական օգուտների վերջնական դուրս բերումը դառնում է գրեթե անհնարին:

Դա բարդ մեխանիզմ է, որի պատասխանները դեռևս պաշտոնապես չեն տրվել: Այն դեպքում, երբ մաքսային սահմանափակումների վերացման «արագ» արդյունքները բավական համեստ են, երկարաժամկետ հեռանկարում հիմնական էֆեկտ կարող է լինել երկրի տնտեսության կառուցվածքի և ուղղությունների վերափոխումը շնորհիվ աշխատանքի և կապիտալի շուկաների փոփոխության, ընկերությունների արդիականացման, իրացման ծավալների ընդլայնման, տրանսպորտային շրջափակման պայմանների մեղմացման և ամբողջ միության տարածքում կառավարական պատվերների շուկայում մասնակցելու իրավունք ձեռք բերելու համար, ինչի արդյունքում Հայաստանում արտադրված արտադրանքն ավելի էժան կլինի, իսկ ապրանքների և ծառայությունների տեղաշարժը՝ առավել հասանելի: Կգործեն ձեռնարկատերերի համար խաղի արդեն ծանոթ կանոններ, վերջնական արտադրանքի իրացման համակարգը կդառնա առավել թափանցիկ, այդպիսով ռուսական կապիտալն իրեն ապահով կզգա:

ԵՏՄ երկրներն իրենց բարեփոխումներում ենթարկվում են հարկային օրենսդրության միջազգային սկզբունքներին: Մինչև ժամանակ, գոյություն ունեն որոշակի տարբերություններ ԵՏՄ երկրների հարկային օրենսդրություններում, որոնք նվազեցնում են փոխշահավետ առևտրային հարաբերությունների ակտիվությունը:

Հարկային ոլորտում օրենսդրությունների ներդաշնակեցումը անհրաժեշտ է դիտել որպես ինտեգրման հիմնական ուղղություններից մեկը:

Հարկերի ներդաշնակեցումը մի շարք երկրների հարկային քաղաքականության կարևորագույն ուղղություններից է, ներառում է հարկերի համակարգում ու միասնականացումը, այն երկրների հարկային համակարգերի և հարկային քաղաքականության կոորդինացումը, որոնք ներառված են միջազգային տարածաշրջանային խմբերում:

Ներդաշնակեցման նպատակը միջպետական հարկային հարաբերությունների կարգավորման միօրինակ կարգի սահմանումն է¹:

Հարկային ներդաշնակեցման հայեցակարգը ծագել է Եվրամիության շրջանակներում տնտեսական ինտեգրման գործընթացի խորացման ժամանակ: Քանի որ ըստ ավանդույթի հարկային քաղաքականությունն առանձին երկրներում իրականացվում է ինքնուրույն՝ հաշվի առնելով երկրի ազգային շահերը, ԵՄ-ում հրաժարվեցին միասնական հարկային համակարգ ձևավորելուց: ԵՄ անդամ երկրների կողմից որոշում կայացվեց երկրների օրենսդրությունները դարձնել համադրելի, իսկ ազգային հարկային համակարգերը ենթարկեցնել եվրահնտեգրման հիմնական խնդիրներին: Այսօր կարելի է ասել, որ ԵՄ երկրներում հասել են էական հաջողությունների հարկային ներդաշնակեցման գործում: Այդ գործընթացին մեծ ուշադրություն է հատկացվում, քանի որ միայն դրա բարեհաջող իրականացման դեպքում կարելի է խոսել ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի միասնական շուկաների ստեղծման մասին²:

Հարկման ոլորտում համատեղ քաղաքականության իրականացման ժամանակ կարևորվում է այդ ոլորտում նույնականացման առավելագույն աստիճանը՝ հաշվի առնելով անդամ երկրների՝ երբեմն ներհակ (միմյանց հակասող) շահերը: **Ուստի, նախ և առաջ, հոչակագրի հիման վրա ընդունվում է սկզբունքային որոշում, թե ապագայում ինչպես պետք է լուծվի այս կամ այն խնդիրը, իսկ հետագայում իրականացվում է երկարատև և աստիճանական աշխատանք՝ ազգային հարկային համակարգի ներդաշնակեցման ուղղությամբ:**

ԵՄ անդամ-երկրների հարկային համակարգերի ներդաշնակեցումն այսօր բավական արդիական խնդիր է մասնակից երկրներից յուրաքանչյուրի ներսում: Անդամ երկրների ազգային հարկային համակարգերի ներդաշնակեցման իրական պայմանների ստեղծման համար սկզբնական փուլում իրականացվել է յուրաքանչյուր երկրի հարկային օրենսդրության խորքային ուսումնասիրություն՝ հարկային համակարգի զարգացվածության բա-

¹ Налоговые системы зарубежных стран: учебно-методическое пособие, Л.В. Попова, И.А. Дрожжина, Б.Г. Маслов. М., Дело и Сервис, 2008. -368 с.

² Екменбаева Б.Ж., Проблемы гармонизации налоговых систем в рамках ЕврАзЭС //Сборник КазНУ имени аль-Фараби.

ցահայտման՝ առավելությունների և թերությունների տեսանկյունից: Հաջորդ փուլում ենթադրվում է իրականացնել հարկային համակարգերի համադրում, նմանությունների և տարբերությունների վերհանում:

Հարկային ծառայությունների գործունեության կենտրոնացման նպատակով որոշում կայացվեց ստեղծել *հարկային ծառայությունների ղեկավարների խորհուրդ*, որի մեջ մտնում էին Բելառուսի, Ղազախստանի, Ռուսաստանի, Ղրղզստանի և Տաջիկստանի ներկայացուցիչները: Ներկայում այն համարվում է ԵՏՄ հարակից մարմին և հաշվետու է ԵՏՄ միջազգային պետական խորհրդին¹:

Ինտեգրվող պետությունների եկամուտների հարկման դեպքում պետք է գործեն հետևյալ սկզբունքները. կրկնակի հարկման բացառում, հարկային դրույքների մոտեցում, հարկային բազայի միասնականացում (ունիֆիկացում), ստացված եկամուտների և շահաբաժինների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում: Եկամուտների հարկման ոլորտում ներդաշնակեցման հիմնական սկզբունքներն են՝ պետությունների կամավորությունն ու ինքնուրույնությունը, ինտեգրման խորության աստիճանի որոշումը, հարկային օրենսդրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելը և այլն:

Հարկային վարչարարության հիմնական սկզբունքներն են՝ նորմերի կատարելագործումը, հարկային վարչակազմի և հարկատուների գործունեությունը կարգավորող կանոնակարգերի ծածկագրումը, հարկային մարմինների կազմակերպական կառուցվածքի կատարելագործումը, հարկային օրենսդրության վերահսկողական համակարգի ուժեղացումը՝ ստվերային գործընթացների կրճատման նպատակով, հարկատուների շրջանում լայն տեղեկատվության տարածում՝ առկա օրենսդրական փոփոխությունների և դրանց ճիշտ կիրառման մասին, հարկային արտոնությունների կրճատումը, հարկային համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, տրանսֆերտային գնագոյացման ոլորտի կարգավորման նպատակով նորմերի ու կանոնների միասնականացումը, հարկերից խուսափելու բացառումը և այլն²:

Անուղղակի հարկերի գանձման համակարգն ավելի շարք է ենթակա ներդաշնակեցման, քանի որ դրանք մեծ ազդեցություն ունեն գնագոյացման վրա և կազմում են ԵՏՄ բոլոր անդամ պետությունների հարկային մուտքերի գերակշիռ մասը:

¹ Աղբյուրը՝ <http://www.evrazes.com/docs/view/341> / Եվրասիական տնտեսական համագործակցության (ԵՎՐԱՅՅՑ) պաշտոնական կայք

² Решение № 75 Интеграционного Комитета Евразийского Экономического Сообщества об основных принципах гармонизации налогового администрирования в государствах-членах ЕврАзЭС (принято в г. Москве 05.04.2002)

Անուղղակի հարկերի ներդաշնակեցման հիմնական ուղղություններն են.

- կրկնակի հարկման բացառում՝ «նշանակման երկիր» սկզբունքով հարկերի հաշվարկման և գանձման դեպքում,
- հարկային և մաքսային վարչարարության կատարելագործում,
- ներմուծվող և արտադրվող ապրանքների ակցիզային հարկի դրույքի համահարթեցում,
- ենթակցիզային ապրանքների ցանկի և հաշվարկման մեթոդաբանության միասնականացում:

ԵՏՄ անդամ բոլոր երկրները անցում են կատարել «նշանակման երկիր» սկզբունքին, ինչը նախատեսում է արտահանման դեպքում գրոյական ԱԱՀ դրույքի կիրառում՝ արտահանվող ապրանքների համար օգտագործված ռեսուրսների գծով ԱԱՀ վերադարձ բյուջեից: Սակայն բոլոր երկրներում էլ սահմանված են ԱԱՀ վերադարձման տարբեր ժամկետներ: Բացի դրանից, վերադարձման գործընթացը բավական բարդացված է, ինչը հանգեցնում է հարկի ոչ ժամանակին վերադարձման կամ ընդհանրապես չվերադարձման: Իսկ ոչ ժամանակին հարկերի վերադարձը հղի է հետևյալ բացասական հետևանքներով.

- նվազում է ընկերության տնտեսական ակտիվությունը, քանի որ հարկ վճարողի շրջանառու միջոցները «սառեցվում են», և, որպես հետևանք, նվազում են արտադրության ծավալները,
- բարձրանում են արտահանման գները՝ չփոխհատուցված ԱԱՀ գումարի չափով, ինչը, ըստ էության, բերում է թաքնված կրկնակի հարկման, ինչի հետևանքով նույնպես նվազում է արտահանման ծավալը:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ պետք է միասնականացնել ԱԱՀ վերադարձման կարգն ու ժամկետները:

Թեև ԵՏՄ անդամ երկրներն անցել են «նշանակման երկիր» հարկման սկզբունքին, այնուամենայնիվ, Ռուսաստանի հետ հարաբերություններում պահպանվել են նշված սկզբունքից որոշակի շեղումներ. բնական գազը, նավթ և նավթամթերքը ԱԱՀ-ով հարկվում են արտահանող երկրում:

Ուարի, հարկավոր է հրաժարվել այդպիսի շեղումներից և անցում կատարել «նշանակման երկիր» սկզբունքին բոլոր ապրանքների համար՝ ստանց բացառության:

Համաձայնագրերում աշխատանքների և ծառայությունների արտահանման հանդեպ անուղղակի հարկերի գծով սահմանված է ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափ: Սակայն ո՛չ համաձայնագրերում, ո՛չ ազգային օրենսդրություններում ստույգ պարզաբանված չէ «ապրանքների և ծառայությունների արտահանում» հասկացությունը: Արդյունքում, ոչ ռեզիդենտներին իրացվող ապրանքներն ու ծառայությունները հարկվում են և՛ ստացող երկրում և՛ արտահանող երկրում:

Տարակարծությունների վերացման նպատակով պետք է սահմանել արտահանվող և ներմուծվող ապրանքների և ծառայությունների միասնական ցանկ, ինչպես նաև դրանց հարկման միասնական կարգ:

Ուղղակի հարկերն անմիջականորեն չեն ազդում հարևան պետությունների հարկային մուտքերի վրա: Սակայն հարկային բեռի տարբեր մակարդակներն ի վերջո հանգեցնում են անհամաչափ պայմանների առաջացմանը՝ գործընկեր պետությունների տնտեսություններում ներդրումների ներգրավման դեպքում:

Ուղղակի հարկերի ներդաշնակեցման հիմնական ուղղություններն են.

- հարկման արդյունավետ համակարգերի կառուցում, որն ուղղված կլինի տնտեսությունների զարգացմանը,
- ապրանքարտադրողների համար հարկային բեռի նվազեցում,
- արտադրական ոլորտում ներդրումների խրախուսում,
- հարկային վարչարարության համաձայնեցված համակարգի ստեղծում,
- ոչ շուկայական հարկերի վերացում (հատկացումներ տարբեր հիմնադրամներին),
- հարկային արտոնությունների քանակի նվազեցում,
- փոքր ու միջին ձեռնարկատիրության հարկման պարզեցում և այլն:

Ինչ վերաբերում է նվազեցումներին, ապա վերջիններս ներդաշնակեցվում են հետևյալ ուղղություններով.

1. Ֆիքսված ակտիվների գծով (հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ, որոնք օգտագործվում են համախառն տարեկան եկամտի ստացման համար)

- «հիմնական ֆոնդերի» հասկացության միասնական սահմանում,
- ամորտիզացիոն հատկացումների իրականացում ոչ թե ըստ օբյեկտների, այլ ըստ ընդհանուր ամորտիզացիոն ենթախմբի,
- հիմնական ֆոնդերի վերանորոգմանն ուղղվող ծախսերի հաշվարկման ընդհանուր սկզբունքների որոշում:

2. Կասկածելի և անհուսալի պարտավորությունների գծով (պարտքեր).

Կասկածելի պահանջների և պարտավորությունների որոշման համար սահմանել ժամկետ (երեք տարի):

3. Պարզևատրումների գծով և այլն:

Ընդհանուր առմամբ, հարկերի համակարգում ու միասնականացումը, դրանց քանակի նվազեցումը, բազմաթիվ հարկային արտոնությունների վերացումը պետք է ուղղված լինի հարկատուներից հարկային գանձումների մակարդակի նվազմանը, դրանց վարչարարության պարզեցմանը, հարկման բազայի ընդլայնմանը և դրանով հարկային մուտքերի ծավալի ավելացմանը և այլն:

Ինտեգրման զարգացման բոլոր փուլերում պետք է շեշտադրել հարկային վարչարարության գործընթացների ներդաշնակեցումը, քանի որ կողմերի հարկային ծառայությունները նոր ձևավորված իրավական դաշտում իրականացնում են համատեղ վարչարարական աշխատանք:

Հարկային համակարգի տարբերությունները պայմանավորված են նաև ԵՏՄ անդամ երկրներում հանրային կառավարման սկզբունքների տարբերությամբ: Ռուսաստանի Դաշնությունն ունի հարկման եռաստիճան համակարգ, Բելառուսը՝ երկաստիճան, Ղազախստանը՝ մեկ: Նշված երկրների տնտեսական ազատականացմանն ու գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներից են հարկային համակարգի պարզեցումը և մի շարք տնտեսավարողների հարկային բեռի նվազեցումը: Այստեղ նույնպես հարկավոր է առանձնացնել գերակայություններ. կիրառվող հարկերի և տուրքերի թվի կրճատում, հարկման համակարգի գրավչության բարձրացում, հարկային օրենսդրության ծածկագրում, հարկային վերահսկողության գործընթացի պարզեցում: Այս միջոցառումների հիմնական նպատակը բոլոր անդամ երկրներում նույնն է՝ երկարաժամկետ ներդրումների ներգրավում, տնտեսության զարգացում, բնակչության կյանքի որակի ու բարեկեցության բարձրացում և այլն:

2

ՀՀ և Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների հիմնական հարկային դրույքաչափերի համեմատական վերլուծությունը

Ինչպես հայտնի է, 2015 թվականի հունվարից 1-ից գործում է Եվրասիական տնտեսական միությունը, որին անդամակցում է նաև Հայաստանը: Միությանն անդամակցության մասին պայմանագիրը ստորագրվեց 2014 թ. հոկտեմբերի 10-ին Բելառուսի մայրաքաղաք Մինսկում:

Անդամակցության մասին պայմանագրում նշվում է, որ միության անդամ երկրները պետք է կիրառեն նաև միասնական տնտեսական քաղաքականություն: Միության գերագույն մարմինն իրավունք ունի ընդունել հարկաբյուջետային, դրամավարկային, տնտեսական մրցակցության պաշտպանությանն ուղղված քաղաքականության մասին որոշումներ, որոնք պետք է կիրառվեն անդամ բոլոր երկրներում: Հատկապես կարևորելով Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների հարկային քաղաքականության, հարկային դրույքաչափերի համահարթեցման հետագա անհրաժեշտությունը՝ փորձենք համեմատական վերլուծության ենթարկել անդամ երկրների հիմնական հարկային դրույքաչափերն ու հարկային քաղաքականության առանձնահատկությունները:

ՀՀ-ում պետական բյուջեի եկամուտների հիմնական մասն ապահովվում է հարկային մուտքերի հաշվին, որտեղ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն ավելացված արժեքի հարկից և շահութահարկից գոյացած միջոցները: Համաձայն 1997 թ. մայիսի 14-ին ընդունված «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) անուղղակի հարկ է, վճարվում է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում: Նույն օրենքով ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանվում է 20%՝ ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ:

ԱԱՀ-ից ազատվում են հետևյալ գործարքները և գործառնությունները՝ հանրակրթական ուսումնական հաստատությունները, դպրոցական գրքերի և նոտայի տետրերի, նկարչական պրոմների, մանկական և դպրոցական գրականության, դպրոցական ուսումնական հրատարակությունների իրացումը, թերթերի և ամսագրերի իրացումը. ապահովագրական և վերաապահովագրական գործառնությունները, թանկարժեք, ՀՀ տարածք ներմուծվող մշակութային արժեքները, ՀՀ-ում արտադրված ձեռագործ գորգերի իրացումը և այլն:

ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկումը կիրառվում է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանից դուրս «արտահանում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով արտահանվող ապրանքների հարկվող շրջանառության նկատմամբ, «Ժամանակավոր ներմուծում վերամշակման համար» մաքսային ռեժիմով ներմուծված՝ «վերաարտահանում» մաքսային ռեժիմով արտահանվող ապրանքների հարկվող շրջանառության նկատմամբ, ՀՀ տարածքով օտարերկրյա բեռների տարանցիկ փոխադրումների նկատմամբ և այլն:

Այսպիսով՝ ՀՀ-ում ԱԱՀ մասով կիրառվում է 0% և 20% հարկային դրույքաչափ, ինչպես նաև ազատում ԱԱՀ վճարումից մի շարք ապրանքների և ծառայությունների իրացման համար:

Ռուսաստանի Դաշնությունում կիրառվում է հարկային երեք դրույքաչափ՝ 0%, 10% և 18%, ինչպես նաև ազատում հարկի վճարումից մի շարք ապրանքների և ծառայությունների իրացման համար:

Ըստ 2000 թ. հուլիսի 19-ին ընդունված «Ավելացված արժեքի հարկի մասին» ՌԴ օրենքի՝ ավելացված արժեքի հարկից ազատվում են ՌԴ տարածքում գտնվող ազատ տնտեսական գոտի ներմուծված ապրանքները, ապրանքների միջազգային փոխադրումների ընթացքում մատուցվող ծառայությունները, նավթի և նավթամթերքի տեղափոխման աշխատանքները, տիեզերական նշանակության ապրանքների արտադրությունն ու աշխատանքների կատարումը և այլն:

ԱԱՀ 10% դրույքաչափով հարկվում են՝

- սննդամթերքի մի շարք տեսակներ՝ թջնամիս, միս, մսամթերք, կաթ և կաթնամթերք, ձու, բուսական յուղ, մարգարին, շաքարավազ, աղ, ցորեն, հաց և հացամթերք, ալյուր, մակարոնե արտադրանք, կենդանի ձուկ, ձկնամթերք, մանկական կերեր, դիաբետիկ կերեր, մրգեր,
- մանկական մի շարք ապրանքներ՝ հագուստ՝ նախատեսված նորածինների, նախադպրոցային տարիքի երեխաների, դպրոցային տարիքի երեխաների համար, կոշիկ, մահճակալ, խաղալիքներ, դպրոցական պարագաներ, տետրեր, գրիչներ և այլն,
- տպագրական ապրանքների, կրթական ու մշակութային նշանակության գրքերի իրացման համար,
- բժշկական ապրանքներ՝ դեղամիջոցներ, բժշկական պարագաներ, դեղատների կողմից պատրաստված խառնուրդներ և այլն:

ԱԱՀ 18% դրույքաչափով հարկվում են վերոհիշյալից տարբերվող մնացած բոլոր ապրանքներն ու ծառայությունները:

Ասվածից երևում է, որ ՀՀ-ում սննդամթերքի արտադրության, մանկական ապրանքների, դեղամիջոցների, տպագրական ապրանքների և բժշկական միջոցների իրացմամբ զբաղվող ձեռնարկատերերը մրցակցային ոչ բարենպաստ դիրքում են գտնվում՝ ՌԴ նույն գործունեությամբ զբաղվող ձեռնարկատերերի համեմատ: Հատկապես՝ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությունից հետո ՀՀ-ում սպասվում է սննդամթերքի, դեղամիջոցների և եվրոպական երկրներից ներմուծվող այլ ապրանքների գների բարձրացում (անցումային շրջանի ավարտից հետո), անհրաժեշտ է ՀՀ-ում ևս կիրառել ԱԱՀ տարբերակված դրույքաչափեր՝ նշված ոլորտների համար:

Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող այլ երկրներում ևս հարկային հիմնական դրույքաչափերը ցածր են ՀՀ համապատասխան դրույքաչափերից (տե՛ս աղյուսակ 7):

Աղյուսակ 7

Հարկային հիմնական դրույքաչափերը մաքսային միության անդամ երկրներում

	Ավելացված արժեքի հարկի դրույքաչափ	Ծառայության հարկի դրույքաչափ	Եկամտային հարկի (եկամտահարկ) Դրույքաչափ
Հայաստան	20%- հիմնական ապրանքների համար, 0% - արտահանման և ներմուծման տարբեր ուժիմների կիրառման դեպքում:	20%	24,4% և 26%- սանդղակային մոտեցմամբ՝ ֆիզիկական անձանց (այդ թվում անհատ ձեռնարկատերերի) համար, 10%- ոռյալթիների և գույքի վարձակալությունից ստացման ենթակա եկամուտներից, 10%- տոկոսների համար ¹ :

¹ Աղբյուրը՝ <http://www.arlis.am/documentview.aspx?docID=64542>

Ռուսաստան	18%- հիմնական ապրանքների համար, 10%- սննդամթերք (ցուցակով), մանկական ապրանքներ (ցուցակով), գրքեր, բժշկական ապրանքներ, 0% - արտահանման ենթակա ապրանքների համար:	20%, որը կարող է իջեցվել մինչև 13.5%-ի:	9% - շահարաժինների ստացումից, 13%- աշխատանքների կատարման դիմաց ստացվող եկամուտներից, շահարաժինների տեսքով ստացվող եկամուտներից, 15%- ոչ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ստացվող եկամուտներից ՌԴ կազմակերպություններից, 30%- ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց մնացած այլ եկամուտներ, 35%- շահումների, տոկոսների ստացումից ¹ :
Բելառուս	20%- հիմնական ապրանքների համար, 0% - սննդամթերքի (ցուցակով) և մանկական ապրանքների համար (ցուցակով), 0.5%- ԵՏՄ երկրներից ներմուծված պմաստի համար, 10%- ԵՏՄ երկրներից ներմուծված թանկարժեք քարերի համար:	18%	9%- բարձր տեխնոլոգիաների ոլորտից ստացվող եկամուտներից, 13%- ֆիզիկական անձանց կողմից ստացվող եկամուտներից, 16%- անհատ ձեռնարկատերերի և նոտարների եկամուտներից ² :
Ղազախստան	12%- հիմնական ապրանքների համար, 0% - արտահանման ենթակա ապրանքների համար:	20% հիմնական գործունեության համար, 10% գյուղատնտեսական ապրանքների արտադրության և իրացման համար:	10%- ֆիզիկական անձանց համար, 20%- իրավաբանական անձանց համար, 5-20%- ոչ ռեզիդենտների համար ³ :
Ղրղզստան	12%- հիմնական ապրանքների համար:	10%	10% ⁴
Տաջիկստան	18%- հիմնական ապրանքների համար:	30%	8-13% սանդղակային մոտեցմամբ ⁵ :
Ուզբեկստան	20%- հիմնական ապրանքների համար:	8%	8,5%, 17%, 23% սանդղակային մոտեցմամբ ⁶ :

¹ Աղբյուրը՝ <http://www.nalog.ru/rn77/taxation/taxes/ndfl/>

² Աղբյուրը՝ http://www.femida.by/index.php?page=se_nalog1

³ Աղբյուրը՝ <http://www.tfa.kz/ru/v-pomoshch-bukhgalteru/86-v-pomoshch-bukhgalteru/115-stavki-nalogov-na-2014-god>

⁴ Աղբյուրը՝ <http://www.sti.gov.kg/%D0%BD%D0%B0%D0%BB%D0%BE%D0%B3%D0%B8/%D0%BF%D0%BE%D0%B4%D0%BE%D1%85%D0%BE%D0%B4%D0%BD%D1%8B%D0%B9-%D0%BD%D0%B0%D0%BB%D0%BE%D0%B3-%D0%BD%D0%B0%D0%BB%D0%BE%D0%B3>

⁵ Աղբյուրը՝ <http://www.asia-realty.ru/co-zakon-tajikistan.php?Id=412>

⁶ Աղբյուրը՝ <http://fmc.uz/legisl.php?ndfl=1512>

Ինչպես երևում է աղյուսակ 7-ից, ՀՀ հարկային հիմնական դրույքաչափերն ավելի բարձր են ԵՏՄ անդամ երկրներում կիրառվող դրույքաչափերից:

Հարկային հիմնական դրույքաչափերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ամենաթեթև հարկային բեռը միության անդամ երկրներից ունեն Ղրղզստանն ու Ղազախստանը: 2015 թ. հունվարից Բելառուսում եկամտահարկի դրույքաչափը 12%-ից բարձրացվել է մինչև 13%-ի, Տաջիկստանում կազմում է 8-13%, իսկ Ռուսաստանում կիրառվում է եկամտահարկի մի քանի դրույքաչափ՝ 13% հիմնական դրույքաչափով: Հայաստանում գործում է եկամտային հարկը, որի հիմնական դրույքաչափը կազմում է 24.4%, 26% և 10%, ընդ որում, մինչև վերջին օրենսդրական փոփոխությունները, ըստ որոնց եկամտահարկն ու սոցիալական ապահովության դիմաց կատարվող վճարները միավորվեցին մեկ հարկատեսակում, եկամտահարկի հիմնական դրույքաչափը կազմում էր 10%:

Ավելացված արժեքի հարկի ամենացածր դրույքաչափը կիրառվում է Ղազախստանում և Ղրղզստանում՝ 12%, իսկ ՌԴ-ում մի շարք ապրանքների իրացումը (սննդամթերք, մանկական պարագաներ, դեղորայք և այլն) հարկվում է ԱԱՀ 10% դրույքաչափով: ՀՀ-ում ԱԱՀ դրույքաչափը 20% է:

Շահութահարկի ամենացածր դրույքաչափը կիրառվում է Ուզբեկստանում՝ 8%, որին հաջորդում է Ղրղզստանը 10%, Բելառուսը 18%: ՌԴ-ում գործում է շահութահարկի 20% դրույքաչափ, սակայն առանձին դեպքերում այն կարող է իջեցվել մինչև 13.5%-ի:

Վերոհիշյալ հանգամանքը կարող է մրցակցային անհավասար պայմաններ առաջացնել այն ապրանքային շուկաներում, որոնց համար անդամ երկրներում կիրառվում են արտոնյալ դրույքաչափեր: Օրինակ՝ Հայաստանից Ռուսաստան սննդամթերք, մանկական ապրանքներ արտահանելիս, գումարելով տրանսպորտային ծախսերը, տվյալ արտադրանքի գինը կարող է ավելի մրցունակ լինել ՌԴ շուկայում, քան ՀՀ շուկայում, քանի որ ՌԴ-ում հարկային բեռը գոնե ԱԱՀ-ի մասով առնվազն 10%-ով ցածր է ՀՀ-ից: Բացի դրանից, օրինակ՝ սննդի արդյունաբերության ոլորտում, տեղական արտադրողները մեր երկրում գյուղացուց գնված ապրանքների մասով իրավունք չունեն իրականացնել ԱԱՀ դեբետագրում, քանի որ գյուղացիական տնտեսություններն ազատված են այդ հարկից¹: Այս պարագայում՝ ՀՀ-ում արտադրվող սննդամթերքն ավելի թանկ է և անմրցունակ: Մինևույն ժամանակ՝ գյուղացիական տնտեսություններին հարկային դաշտ բերելը կարող է մեծ դժգոհություններ առաջացնել և նպաստել արտագաղթին: Այդ պատճառով՝ գյուղացիական տնտեսություն-արտադրող-սպառող շղթայում անհրաժեշտ է կիրառել այնպիսի ճկուն հարկային քաղաքականություն, որ և՛ գյուղացիա-

¹ Խոսքը վերաբերում այն գյուղացիական տնտեսություններին, որոնց տարեկան շրջանառության ծավալը չի գերազանցում 58.3 մլն դրամը:

կան տնտեսությունը հաշվառվի հարկային համակարգում, և՛ արտադրողը չտուժի, և՛ սպառողական վերջնական գները լինեն մրցակցային՝ ԵՏՄ անդամ երկրների համեմատ:

Այս առումով, անհրաժեշտ ենք համարում Հայաստանում ռուսական փորձի ներդրումը՝ գյուղատնտեսական արտադրանք վերամշակող ընկերությունների համար սահմանելով ԱԱՀ 10% դրույքաչափ: ԱԱՀ դրույքաչափի նվազեցումը կնպաստի մեր երկրում արտադրանքի գնային և շահութաբերության հավասար պայմանների ստեղծմանը Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների համեմատ:

Բացի դրանից, հիմք ընդունելով ԱԱՀ փիլիսոփայությունը, առ այն, որ դա սպառման հարկ է, իսկ պետությունը, հաշվի առնելով սննդամթերքի, մանկական պարագաների և բժշկական ապրանքների սոցիալական կարևորությունը, այդ ապրանքների վրա սահմանում է ԱԱՀ տարբերակված դրույքաչափ, մեր երկրում նույնպես անհրաժեշտ ենք համարում ռուսական փորձի ներդրումը: Ի դեպ, բացի ԱԱՀ արտոնություն ունեցող ապրանքների ավելի ցածր ԱԱՀ դրույքաչափից, մնացած ապրանքներից գանձվող ԱԱՀ չափը ևս Ռուսաստանում 2%-ով ցածր է ՀՀ համապատասխան դրույքաչափից:

3

Մաքսատուրքերի փոփոխությունների հնարավոր ազդեցությունը ապրանքների գների վրա

ՀՀ-ում և ԵՏՄ տարածքում կիրառվող՝ ըստ ԱՏԳԱԱ-ի ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի¹ համադրությունից երևում է, որ ապրանքախմբերի շուրջ 60 տոկոսի դեպքում ԵՏՄ-ում գործում են ավելի բարձր մաքսային դրույքաչափեր, քան Հայաստանում, իսկ 14.5 տոկոսի դեպքում դրանք ավելի բարձր են Հայաստանում: Այսինքն, եթե Հայաստանը ներմուծեր բոլոր այդ ապրանքները ԵՏՄ անդամ չհամարվող երկրներից, դա կնշանակեր, որ 7000 ապրանքների գները Հայաստանում կբարձրանային, իսկ մոտ 1700 ապրանքներինը՝ կիջնեին: Սակայն հարկ է նշել, որ ըստ ՀՀ արտաքին առևտրի վիճակագրության, ներմուծման բարձր դրույքաչափեր ունեցող ապրաքատեսակների շուրջ 25%-ը ներմուծվում է ԵՏՄ-ից, ինչը ենթադրում է առանց մաքսատուրքերի առևտուր, մնացածի մեծ մասը ընդհանրապես չի ներմուծվում Հայաստան: Առավել հետաքրքրական է այն ապ-

¹ Մաքսատուրքերի դրույքաչափերի և դրանց փոփոխության դինամիկայի վերաբերյալ տվյալները վերցված են ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջից: Տե՛ս <http://mineconomy.am/uploads/20143001103804709.pdf>, <http://mineconomy.am/uploads/20143001103746956.pdf>.

րանքների ցանկը, որոնց դրույքաչափերը բարձր են ՀՀ-ում կիրառվող մաքսատուրքերի դրույքաչափերից¹: ԱՏԳԱԱ 10-նիշ դասակարգման ապրանքային անվանացանկի այդ ապրանքները հիմնականում ներառված են «այլ ապրանքներ» խմբում և դրանց դրույքաչափերի բարձրացումը սկսվում է 2017 թվականից և կշարունակվի մինչև 2022 թ.:

Այժմ դիտարկենք ՀՀ տնտեսության համար առավել հետաքրքրություն ներկայացնող ապրանքները:

Այսպես, «նավթ և նավթամթերք՝ ոչ հում» ապրանքային խմբի ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը Հայաստանում ներկայումս 0% է, իսկ ԵՏՄ երկրներում՝ 5%: 2012–2013 թթ. վիճակագրական տվյալներով (տե՛ս աղյուսակ 7)² Հայաստան ներմուծվում է հիմնականում Ռուսաստանից, Ռուսաստանից, Բուլղարիայից, Իսրայելից և Իրաքից²: Երրորդ երկրների նկատմամբ կիրառվող բարձր մաքսատուրքերը, ինչպես նաև ՀՀ և ՌԴ միջև 2013 թ. դեկտեմբերին կնքված պայմանագիրը հիմք են Հայաստան «նավթ և նավթամթերք՝ ոչ հում» խմբի ապրանքներ ներկրողներին այն ներմուծել Ռուսաստանից, հակառակ դեպքում՝ տեղական շուկայում բենզինը կթանկանա շուրջ 5%-ով: Ավելին, ըստ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի Հավելված 23-ի՝ «նավթի և նավթամթերքի ընդհանուր շուկաների կառավարման, կազմակերպման, գործունեության և զարգացման կարգի մասին» արձանագրության, անդամ երկրները պարտավորվում են առանց սահմանափակումների խթանել փոխադարձ առևտուրը:

«Ցորեն և մեկին» ապրանքային խմբի ներմուծման համար Հայաստանում գրոյական մաքսատուրք է, ԵՏՄ-ում՝ 5%: Մակայն դա չի ազդի շուկայում գների վրա, քանի որ ցորեն Հայաստան ներմուծվում է Ռուսաստանից և մի փոքր էլ՝ Ուկրաինայից և Ղազախստանից: Այսպես, 2013 թ. ՀՀ ներմուծվել է 108,7 մլն ԱՄՆ դոլարի մաքսային արժեքով (345,6 հազար տ.) ցորեն, որից՝ 101,6 մլն ԱՄՆ դոլարի (323,5 հազար տ.) Ռուսաստանից:

Նշանակալի թանկացումներ կլինեն հատկապես դեղերի շուկայում: Դեղամիջոցները ՀՀ ներմուծման կառուցվածքում արժեքով 6-րդն են՝ գազից, նավթամթերքից, ոսկուց ու ադամանդից հետո: 2013 թվականին, օրինակ, Հայաստան է ներմուծվել մոտ 110 միլիոն ԱՄՆ դոլարի դեղորայք: ՀՀ-ում դեղորայքի ներմուծման համար գործում է գրոյական մաքսատուրք, իսկ ԵՏՄ-ում՝ 8–12.5%: Քանի որ դեղորայքի մեծ մասը ներմուծվում է եվրոպական երկրներից (Ֆրանսիա, Գերմանիա, Շվեյցարիա, Իտալիա) և ԱՄՆ-ից, ակնհայտ է, որ դեղորայքը կարող է թանկանալ նվազագույնը 8%-ով: Մակայն հարկ է նշել, որ դեղորայքի ներմուծման մաքսատուրքերի 0% դրույ-

¹ Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության» «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» պայմանագրի Հավելված 4 http://parliament.am/draft_history.php?id=7220&lang=arm

² Աղբյուրը՝ <http://customs.am/Content.aspx?itn=csCIImportStatistics>

քաչափերը փոփոխության կենթարկվեն 2021 թ.՝ 2% և 2022 թ. կկիրառվեն ԵՏՄ դրույքաչափերը, ինչը ենթադրում է, որ առաջիկա 7 տարիներին դրույքաչափերի փոփոխություն չի ենթադրվում:

Շաքարավազի ներմուծման համար Հայաստանում գործում է 10% մաքսատուրք, 2013 թ. ներմուծվել է 40 միլիոն ԱՄՆ դոլարի շաքարավազ: 10% մաքսատուրքը կազմում է 60–65 ԱՄՆ դոլար՝ 1 տոննայի համար (ներկա գներով): ԵՏՄ մաքսային օրենսգրքով շաքարավազի 1 տոննայի համար գանձվում է միջինը 250 ԱՄՆ դոլար (Հայաստանը շաքարավազ ներմուծում է գերազանցապես Բրազիլիայից և Ուկրաինայից): Սակայն 2015–2025 թվականների ժամանակահատվածում թույլատրվում է ներմուծման մաքսատուրքերի գանձումից ազատմամբ ներմուծել ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 1701 13 եւ 1701 14 ենթադիրքերում ընդգրկված եղեգնաշաքարի հումքը (շաքարի հումք) Հայաստանի Հանրապետության տարածքում արդյունաբերական վերամշակման համար: Մինչև ժամանակ, հարկ է նշել, որ ԵՏՄ-ին միանալու պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից 2 տարվա ընթացքում թույլատրվում է ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 1701 99 100 1 եւ 1701 99 100 9 ենթադիրքերում ընդգրկված սպիտակ շաքարի ներմուծումը Հայաստան մաքսային արժեքի 10 տոկոսի չափով ներմուծման մաքսատուրքի վճարմամբ՝ տարեկան 4000 տոննայից ոչ ավելի ծավալով, հետևաբար այս ապրանքախմբի համար նշանակալի թանկացումներ չեն սպասվում:

Թոշնամսի համար նույնպես Հայաստանում մաքսատուրքը 10% է, ԵՏՄ-ում՝ 25%, սակայն ոչ պակաս, քան 0.2 եվրո՝ 1 կգ-ի համար: 2013 թ. Հայաստանը 48 միլիոն ԱՄՆ դոլարի թոշնամիս է ներմուծել, գերազանցապես՝ ԵՏՄ անդամ չհանդիսացող երկրներից: Խոզի մսի դեպքում ևս Հայաստանը ավելի ցածր՝ 10% մաքսատուրքով է մաքսագերծում, քան Եվրասիական տնտեսական միությունը՝ 15%: 2013 թ. Հայաստանը ներմուծել է 21 միլիոն ԱՄՆ դոլարի խոզի միս՝ դարձյալ ԵՏՄ անդամ չհանդիսացող երկրներից²:

«Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով ապրանքների տեղափոխման եւ դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրի 5-րդ հավելվածով սահմանված մաքսատուրքերի, հարկերի դրույքաչափերը Հայաստանի Հանրապետությունում երեք տարի ժամկետով չեն կիրառվում ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 21 և 8704 31 ապրանքային դիրքերում դասակարգվող՝ անձնական օգտագործման նպատակով ֆիզիկական

¹ Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» պայմանագրի Հավելված, Հոդված 42, http://parliament.am/draft_history.php?id=7220&lang=arm

² Տվյալների համար հինք են ծառայել «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» պայմանագրի Հավելված 4-ը, http://parliament.am/draft_history.php?id=7220&lang=arm

անձանց կողմից ներմուծվող մարդատար ավտոմեքենաների և շարժիչով այլ տրանսպորտային միջոցների համար¹:

4

**Եվրասիական տնտեսական միությանը
ՀՀ անդամակցության տնտեսական
հետևանքների գնահատումը**

Միջազգային ինտեգրումը երկրների միջև տնտեսական համագործակցության տարբեր աստիճանների հաստատմամբ նրանց տնտեսությունների միացումն է՝ հանուն ընդհանուր շահի: Ինտեգրացիոն գործընթացների արդյունքը երրորդ երկրների նկատմամբ միասնական տնտեսական քաղաքականության իրականացումն է և, վերջինիս շնորհիվ, համագործակցող երկրների ներքին շուկաների պաշտպանությունը:

Ինտեգրացիոն գործընթացների հաջող իրականացման համար անհրաժեշտ են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ: Նախ, տնտեսական գործոնները. ինտեգրվող երկրները պետք է ունենան սոցիալ-տնտեսական զարգացման, ՀՆԱ աճի տեմպի համանման մակարդակներ: Կարևոր է քաղաքական գործոնը՝ երկրի ղեկավարության ցանկությունը և պատրաստակամությունը՝ միություն կազմելու: Կարևոր են նաև աշխարհագրական դիրքը, պատմամշակութային ընդհանրությունները:

Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցության տնտեսական հետևանքները՝ նախ անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՀ և միության անդամ երկրների արտաքին առևտրային գործունեության ցուցանիշները:

**ՀՀ արտաքին առևտրի ընդհանուր արդյունքները
(հազ. ԱՄՆ դոլար)²**

Աղյուսակ 8

	2012 թ.	2013 թ.	Աճի փոփոխ
Արտահանում	1,361,384	1,478,736	109
Ներմուծում	4,284,926	4,488,752	105
Հաշվեմնացորդը	-2,923,542	-3,010,016	

Ինչպես 2012–2013 թթ., այնպես էլ նախորդ մի քանի տարիներին ՀՀ առևտրային հաշվեկշիռը եղել է բացասական: 2013 թ. ՀՀ արտահանման ծա-

¹ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» պայմանագրի Հավելված, Հոդված 30, 31, http://parliament.am/draft_history.php?id=7220&lang=arm

² Աղբյուրը՝ www.armstat.am

վալը կազմել է 1.4 մլրդ ԱՄՆ դոլար, ներմուծումը՝ 4.4 մլրդ ԱՄՆ դոլար: Համեմատության համար նշենք, որ բացասական առևտրային հաշվեկշռի ցուցանիշով մեր երկիրը ԱՊՀ երկրների շարքում ոչ բարենպաստ դիրք է զբաղեցնում:

**Առևտրային հաշվեկշռի համեմատական վերլուծությունը՝
ըստ մի շարք երկրների, 2012 թ. (մլն ԱՄՆ դոլար)¹**


Աղյուսակ 9

	Արդարահանում ²	Ներմուծում ²	Հաշվեկշիռ
Ռուսաստան	525.3	314.1	211.2
Ղազախստան	88.6	35.4	53.2
Ուկրաինա	68.6	84.6	-16
Բելառուս	45.9	46.4	-0.5
Ադրբեջան	23.9	9.6	14.3
Մոլդովա	2.2	5.3	-3.1
Ղրղզստան	1.7	5.3	-3.6
Հայաստան	1.4	4.2	-2.8
Տաջիկստան	1.4	3.8	-2.4

Աղյուսակ 9-ից երևում է, որ ՀՀ առևտրային բացասական հաշվեկշիռն իր մեծությամբ զիջում է Մոլդովային, Ղրղզստանին, Ուկրաինային, գրեթե հավասար է Տաջիկստանի նույնատեսակի ցուցանիշին: Հետևաբար՝ կարող ենք փաստել, որ ՀՀ-ն դիտարկվող երկրների շարքում հանդիսանում է ներմուծող երկիր, ուստի ԵՏՄ անդամակցության տնտեսական օգուտները գնահատելիս՝ անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել ներմուծման ուղղությամբ իրականացվող մաքսային քաղաքականության համեմատական վերլուծությանը:

Բացի առևտրային հաշվեկշռից՝ տարբեր են նաև ՀՀ և դիտարկվող երկրների տնտեսական մյուս ցուցանիշները ևս: Միջին ամսական աշխատավարձը ՌԴ-ում 863 ԱՄՆ դոլար է, Ղազախստանում՝ 677 ԱՄՆ դոլար, Ադրբեջանում՝ 504 ԱՄՆ դոլար, Բելառուսում՝ 446 ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ-ում՝ 281 ԱՄՆ դոլար: ՀՀ-ը միջին ամսական աշխատավարձի ցուցանիշով գերազանցում է միայն Ղրղզստանին և Տաջիկստանին (տե՛ս գծապատկեր 1):


¹ Աղյուսակը կազմվել է <http://www.e-cis.info/> տվյալների բազայի հիման վրա:



Գծապատկեր 1

Միջին ամսական աշխատավարձը մի շաբաթ երկրներում, 2012թ. (ԱՄՆ դոլար)¹

Իսկ գործազրկության ցուցանիշը համեմատվող երկրների շաբաթում ամենաբարձրը Հայաստանում է:



Գծապատկեր 2

Գործազրկության մակարդակը մի շաբաթ երկրներում, 2012 թ. (տոկոս)²

Գործազրկության ամենացածր մակարդակն ունի Ուզբեկստանը, ՌԴ-ում ցուցանիշը կազմում է 5.5%, իսկ ՀՀ-ում՝ 17.3%:

ՀՀ տնտեսական օգուտների գնահատման համար՝ դիտարկենք նաև ՀՀ արտաքին առևտրի առավել բարձր ցուցանիշներ ունեցող երկրներին:

¹ Գծապատկերը կազմվել է <http://www.e-cis.info/> տվյալների հիման վրա:

² Նույն տեղում:

Աղյուսակ 10

ՀՀ արտաքին առևտրային գործընկերներն առավել բարձր ցուցանիշներով, 2013 թ. (հազ. ԱՄՆ դոլար)¹

	Երկրի անվանումը	Արտահանում	Ներմուծում
1	Ռուսաստանի Դաշնություն	335,165	1,118,339
2	Չինաստան	68,838	386,021
3	Գերմանիա	85,568	280,919
4	Իրանի Իսլամական Հանրապետություն	99,171	200,221
5	Ուկրաինա	15,228	226,487
6	Միացյալ Նահանգներ	89,030	137,558
7	Բուլղարիա	152,206	68,305
8	Թուրքիա	1,596	210,807
9	Բելգիա	131,136	73,387
10	Շվեյցարիա	24,553	172,528
11	Իտալիա	23,191	164,418
12	Վրաստան	85,166	65,840
13	Ռումինիա	85	118,347
14	Կանադա	87,389	28,356
15	Նիդեռլանդներ	66,365	36,235
16	Ճապոնիա	109	96,436
17	Բրազիլիա	593	87,367
18	Իրաք	48,450	30,081
19	Միացյալ Արաբական Էմիրություններ	9,437	68,247
20	Ֆրանսիա	6,400	66,125
	Այլ երկրներ	149,062	852,730

Աղյուսակ 10-ից երևում է, որ Հայաստանի համար ամենամեծ շրջանառություն ունեցող առևտրային գործընկերը Ռուսաստանի Դաշնությունն է, որից ներմուծման ծավալը կազմում է 1.1 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ արտահանումն այդ երկիր՝ 335 մլն ԱՄՆ դոլար: Առավել բարձր ցուցանիշ ունեցող ՀՀ հաջորդ առևտրային գործընկերը Չինաստանն է՝ 386 մլն ԱՄՆ դոլար, Գերմանիան՝ 280 մլն ԱՄՆ դոլար, Իրանի Իսլամական Հանրապետությունը՝ 200 մլն ԱՄՆ դոլար, Ուկրաինան՝ 226 մլն ԱՄՆ դոլար և Թուրքիան՝ 210 մլն ԱՄՆ դոլար ներմուծմամբ: 100–200 մլն ԱՄՆ դոլար ապրանքաշրջանառություն ապահովող երկրների շարքին են դասվում Ամերիկայի Միացյալ Նահանգները, Շվեյցարիան, Իտալիան, Ռումինիան: Մնացած երկրների հետ ՀՀ արտաքին առևտրային շրջանառությունը չի գերազանցում 100 մլն ԱՄՆ դոլարը: Սակայն ՌԴ-ի՝ ՀՀ արտաքին առևտրային առաջին գործընկերը լինելու հանգամանքը դեռևս ցույց չի տալիս ԵՏՄ-ին անդամակցության ՀՀ տնտեսական օգուտները: Դրանք պարզելու համար անհրաժեշտ է խորությամբ վերլուծել ՀՀ ներմուծման կառուցվածքը, այնուհետև պարզել, թե հատկապես որ երկրներից են ներմուծվում առավել բարձր մաքսային արժեք

¹ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ պաշտոնական ինտերնետային կայք, www.armstat.am

ունեցող այն ապրանքները, որոնք կարող են ազդել ՀՀ տնտեսության վրա, որից հետո կատարել ՀՀ ներկայիս մաքսային դրույքաչափերի և ԵՏՄ միասնական դրույքաչափերի համեմատական վերլուծություն՝ խնդրին վերջնական գնահատական տալու համար:

Արտաքին առևտրով ՀՀ ներմուծված առավել բարձր մաքսային արժեք ունեցող ապրանքներ, 2013 թ.¹ **Աղյուսակ 11**

ԱՏԳ ԱԱ-ի կոդը	Ապրանքի անվանումը	Չ/մ	Քանակ	Մաքսային արժեք (հազար ԱՄՆ դոլար)
2711	Գազ՝ բնական և հեղուկ	հազ. խմ	2,333,449	587,907
2710	Նավթ և նավթամթերք՝ ոչ հում	տոննա	327,990	341,862
8703	Ավտոմեքենա մարդատար, ոչ 8702 դիրքի	հազ. հատ	39	254,068
7108	Ոսկի (ներառյալ պլատինի գալվանական պատվածքով), փոշի	կգ	3,773	168,656
7102	Ադամանդ	հազ. կարատ	406	116,442
3004	Դեղամիջոցներ՝ կշռածքաբաժ	տոննա	1,355	109,549
1001	Ցորեն և մեային	տոննա	345,572	108,751

Աղյուսակ 11-ից երևում է, որ ՀՀ ներմուծման մեջ ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքներն են գազը, նավթամթերքը, ավտոմեքենաները, ոսկին, ադամանդը, դեղամիջոցներն ու ցորենը: Այժմ փորձենք պարզել, թե այս ապրանքներից յուրաքանչյուրը որ երկրից է ներմուծվում, որքան կլինի ներմուծման մաքսային դրույքաչափերի տարբերությունը, հետևաբար՝ տնտեսական օգուտը կամ վնասը՝ ՀՀ-ի ԵՏՄ անդամակցությունից հետո:

Բնական գազի ներմուծման կառուցվածքն ըստ երկրների, 2013 թ.² **Աղյուսակ 12**

	Մաքսային արժեք, ԱՄՆ դոլար	Երկրի մասնաբաժինը
Ռուսաստանի Դաշնություն	513,048,000	87%
Իրանի Իսլամական Հանրապետություն	74,857,000	12.6%
Իրաք	1,848,000	0.3%
Թուրքմենստան	554,000	0.09%

ՀՀ տարածք ներմուծվող բնական գազի 87%-ն բերվում է ՌԴ-ից և միայն 12.6%-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից՝ որն էլ փոխա-

¹ Աղյուսակը կազմվել է www.customs.am-ի ներմուծման վիճակագրության տվյալների հիման վրա:

² Նույն տեղում:

նակվում է այդ գազով արտադրված էլեկտրաէներգիայի հետ: Մաքսային միությանն անդամակցության ճանապարհային քարտեզի ստորագրումից հետո ՌԴ-ն վերացրեց ՀՀ արտահանվող գազի համար գանձվող արտահանման հազար խմ դիմաց գանձվող 22.6 ԱՄՆ դոլար մաքսային վճարը, իսկ արտահանվող գազի գինը 266 ԱՄՆ դոլարից իջեցվեց 189 ԱՄՆ դոլարի: ԵՏՄ անդամակցության դիմաց ՀՀ-ին տրամադրվող այս երկու արտոնությունները ՀՀ տնտեսությանը կրեքեն տարեկան համապատասխանաբար՝ 43 մլն ԱՄՆ դոլարի և 148 մլն ԱՄՆ դոլարի (ընդամենը 191 մլն ԱՄՆ դոլար) տնտեսական օգուտ:

Աղյուսակ 13

«Նավթ և նավթամթեր՝ ոչ հում» ապրանքային խմբի ՀՀ ներմուծման ծավալները 2012–2013 թթ.

Նավթ և նավթամթեր՝ ոչ հում	2012				2013			
	Ծավալը (տ)	Մաքսային արժեքը (հազար ԱՄՆ դոլար)	Տես. կշիռը ծավալում %	Տես. կշիռը մաքսային արժեքում %	Ծավալը (տ)	Մաքսային արժեքը (ԱՄՆ դոլար)	Տես. կշիռը ծավալում %	Տես. կշիռը մաքսային արժեքում %
Ընդամենը, այդ թվում՝	346403	362149,3			327990	341862,3		
Ռումինիա	70072	74766	20,2%	20,6%	97184	102580,3	29,6%	30,0%
Ռուսաստան	96082	93562	27,7%	25,8%	98289	96404,8	30,0%	28,2%
Բուլղարիա	64950	67566	18,7%	18,7%	45670	46258,7	13,9%	13,5%
Իսրայել	42518	50151	12,3%	13,8%	40548	44857,7	12,4%	13,1%
Իրաք	37830	34655	10,9%	9,6%	31392	28232,4	9,6%	8,3%

Նավթամթերքի ներմուծման մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունի Ռումինիան՝ 30%, Ռուսաստանի Դաշնությունը՝ 28%, Բուլղարիան՝ 13%: ԵՏՄ անդամակցությունից հետո ՌԴ-ից արտահանվող նավթամթերքի արտահանման 5% մաքսային վճարի վերացումը ՀՀ համար՝ մեր տնտեսությանը կրեքի 5 մլն ԱՄՆ դոլարի օգուտ, իսկ այլ երկրներից ներմուծվող նավթամթերքի նկատմամբ ներկայիս 0%-ի փոխարեն ԵՏՄ 5% մաքսային վճարի կիրառումը կրեքի 12 մլն ԱՄՆ դոլարի վնաս՝ ընդհանուր առմամբ, տնտեսությանը պատճառելով 7 մլն ԱՄՆ դոլարի վնաս:

Ինչ վերաբերում է մարդատար ավտոմեքենաների ներմուծման մաքսային դրույքաչափերի փոփոխությանը, ապա հարկ է նշել, որ այս խումբ ապրանքները ներառվել են բացառությունների ցանկում, որոնց համար ԵՏՄ-ին անդամակցելուց հետո ՀՀ տարածքում կիրառվելու են նախկին դրույքաչափերը: Հետևաբար՝ մարդատար մեքենաների ներմուծումը առաջիկա տարիներին ՀՀ տնտեսության վրա ոչ դրական, ոչ էլ բացասական ազդեցություն չի ունենա: Այդուհանդերձ, նշենք, որ 2013 թ. ՀՀ տարածք է ներմուծվել 41 հազար ավտոմեքենա, որոնցից միայն 1300-ն են ռուսական արտադրության:

Ներմուծման մեջ առավել մեծ մաքսային արժեք ունեցող հաջորդ ապրանքները ոսկին ու ադամանդն են:

Ոսկու ներմուծման կառուցվածքն ըստ երկրների, 2013 թ.¹

Աղյուսակ 14

	Մաքսային արժեք, ԱՄՆ դոլար	Երկրի մասնաբաժինը
Շվեյցարիա	135,935,000	80%
Ավստրիա	29,144,000	17%
ԱՄԷ	3,259,000	3%

Ներմուծման ծավալում ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող երկիրը Շվեյցարիան է՝ 80%, որին հաջորդում է Ավստրիան՝ 17% մասնաբաժնով: ԵՏՄ անդամակցելուց հետո ներկայիս 0% մաքսային դրույքաչափի փոխարեն միության միասնական 20% մաքսային դրույքաչափը՝ ՀՀ տնտեսությանը կարող է բերել 17 մլն ԱՄՆ դոլարի վնաս: Սակայն եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ներմուծվող ոսկին վերամշակվում և արտահանվում է դարձյալ Շվեյցարիա, իսկ մաքսային այդ ռեժիմի կիրառման դեպքում մաքսային վճարներ չեն կատարվում, ապա ՀՀ տնտեսության վնասը կարող է չհասնել վերը նշված գումարին՝ սահմանափակվելով միայն արտահանվող ոսկու չնչին թանկացումներից պահանջարկի նվազմամբ:

Նույն պատկերն է նաև ադամանդի դեպքում: Ներմուծման մեջ ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող երկիրը Բելգիան է՝ 43% մասնաբաժնով, որին հաջորդում է ՄԱԷ-ն՝ 28.3%, Հնդկաստանը՝ 1.7%, Ռուսաստանը՝ 5.8%, Շվեյցարիան՝ 5.3%: Ադամանդի ներմուծման գերակշիռ մասը ևս կատարվում է ԵՏՄ անդամ չհանդիսացող երկրներից: Հետևաբար՝ մեր տնտեսությունը ադամանդի ներմուծման մասով կարող է տուժել մինչև 16 մլն ԱՄՆ դոլարի չափով՝ միաժամանակ ունենալով կես միլիոն ԱՄՆ դոլարի օգուտ՝ ՌԴ-ից արտահանվող ադամանդի արտահանման 6.5% մաքսային վճարի վերացումից Հայաստանի համար: Այդուհանդերձ՝ ներմուծվող ադամանդը, ինչպես ոսկին, արտահանվում է, հետևաբար տնտեսական վնասը, կարծում ենք, կսահմանափակվի միայն արտահանվող ադամանդի թանկացումից սպասվող պահանջարկի անկմամբ:

Մաքսային առավել մեծ արժեք ունեցող ներմուծվող հաջորդ ապրանքը ցորենն է, որի 93.5%-ը ներկրվում է ՌԴ-ից, հետևաբար՝ ՄՄ անդամակցությունից հետո ցորենի ներմուծման մաքսային դրույքաչափերի փոփոխություն չի նկատվի, իսկ տնտեսության վրա ազդեցությունը կլինի զրոյական:

¹ Աղյուսակը կազմվել է www.customs.am-ի ներմուծման վիճակագրության տվյալների հիման վրա:

Առավել սուր է դեղամիջոցների ներմուծման հարցը: ՀՀ ներմուծվող դեղամիջոցների գերակշիռ մասը պատկանում է Եվրոպական միության խմբի երկրներին:

Դեղորայքի ներմուծման կառուցվածքն ըստ երկրների, 2013 թ.¹

Աղյուսակ 15

	Մաքսային արժեք, ԱՄՆ դոլար	Երկրի մասնաբաժինը
Գերմանիա	16036	15%
Շվեյցարիա	12410	11%
Ֆրանսիա	11977	11%
Հունգարիա	5742	5%
Իտալիա	5521	5%
ԱՄՆ	5500	5%
Միացյալ Թագավորություն	4711	4%
Նիդեռլանդներ	4069	4%
Ռուսաստանի Դաշնություն	3942	3%

Աղյուսակ 15-ից երևում է, որ դեղամիջոցների ներկրումը գրեթե հավասարապես իրականացվում է Գերմանիայից, Շվեյցարիայից, Ֆրանսիայից, Հունգարիայից, Իտալիայից, ԱՄՆ-ից և այլն: Ռուսաստանի տեսակարար կշիռը ներմուծման մեջ կազմում է ընդամենը 3%, իսկ ներկայիս զրոյական մաքսային վճարների փոխարեն ԵՏՄ միասնական 0-15% դրույքաչափի կիրառումից՝ մեր տնտեսությունը, դեղորայքի ներմուծման ներկա կառուցվածքի պահպանման պայմաններում, միությանն անդամակցությունից հետո կարող է կրել 16 մլն ԱՄՆ դոլարի վնաս:

Այսպիսով՝ համադրելով մաքսային առավել մեծ արժեք ունեցող ապրանքների ներմուծման ներկա կառուցվածքի պահպանման դեպքում ԵՏՄ-ին ՀՀ անդամակցելու, հետևաբար մաքսային դրույքաչափերի փոփոխության ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա, կարող ենք ասել, որ ընդհանուր առմամբ, տարեկան այն կարող է ունենալ մինչև 140 մլն ԱՄՆ դոլարի օգուտ, որի հիմնական մասը բաժին է ընկնում գազի ներմուծման գնի իջեցմանն ու ՌԴ կողմից Հայաստանի համար արտահանման մաքսատուրքի վերացմանը: Սակայն եթե հաշվի առնենք այն, որ գազի իրացումը ՀՀ-ում իրականացվում է ամբողջությամբ ռուսական կապիտալով բաշխող ընկերության կողմից, ապա տնտեսական օգուտը կարող է զգացվել միայն եթե գազի գինը նվազի սպառողի համար: Հակառակ պարագայում՝ սահմանին իջեցված գազի գնի և սպառողին հասնող թանկ գնի տարբերությամբ ստացված շահույթն ամբողջությամբ կարող է շահաբաժինների տեսքով հոսել Ռուսաստան՝ զրոյացնելով վերոհիշյալ տնտեսական օգուտը ՀՀ տնտեսության համար:

¹ Աղյուսակը կազմվել է www.customs.am-ի ներմուծման վիճակագրության տվյալների հիման վրա:

5

Հայաստանի Հանրապետության համեմատական առավելությունները Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների առևտրային հոսքերի համադրության մեջ

Տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումը ժամանակի ընթացքում անդամակցող երկրներին կարող է բերել տնտեսական բազմաթիվ օգուտներ: Մաքսային միությունը երկու տիպի ազդեցություն է ունենում միացող երկրի վրա՝ ստատիկ և դինամիկ: Ստատիկ էֆեկտը վերաբերում է Մաքսային միություն մտնելուց առաջ և հետո երկրի բարեկեցության փոփոխությանը: Դինամիկ էֆեկտը վերաբերում է անդամ երկրում կամ երկրներում ստեղծված արդյունքի վրա Մաքսային միության ունեցած ազդեցությանը: Շատ վերլուծաբաններ, այնուամենայնիվ, նշում են, որ Մաքսային միության ստատիկ սոցիալական հետևանքները հիմնականում փոքր են, հնարավոր է, որ լինեն նաև բացասական¹: Ի տարբերություն վերջինիս՝ դինամիկ հետևանքները դժվար է սահմանել և էլ ավելի դժվար է չափել:

Հատկանշական է, որ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գործող Մաքսային միությանն անդամակցելուց հետո երեք երկրների՝ Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի միջև առևտրի ծավալներն աճել են: 2009–2010 թթ. այդ երկրների միջև առևտրի ծավալները ավելացել են մեկ քառորդով, իսկ մինչև 2011 թ. վերջը՝ երկու երրորդով: Օրինակ՝ Ղազախստանի ապրանքաշրջանառությունը Ռուսաստանի ու Բելառուսի հետ 2009–2011 թթ. աճել է մոտ 80%-ով²: Դեռևս դժվար է հավաստել, որ այդ աճը պայմանավորված է վերոնշյալ երկրների միջև առևտրում մաքսատուրքերի բացակայությամբ, երրորդ երկրներից ներմուծվող ապրանքներից գանձվող բարձր մաքսատուրքերով, թե՛ առևտրի հետճգնաժամային վերականգնմամբ:

ԵՏՄ շրջանակներում առևտրի ստեղծումը և առևտրի շեղումը կախված են նաև անդամակցող երկրների առևտրի կառուցվածքից և նրանց համեմատական առավելություններից: Այսպես, 2012 թ. ՀՀ արտահանման մեջ ԵՏՄ անդամ երկրների տեսակարար կշիռը կազմել է 21%, և շատ չնչին է եղել Բելառուսի ու Ղազախստանի տեսակարար կշիռը (1%): ՀՀ արտահանումը 2012 թ. դեպի ՌԴ կազմել է 279 մլն ԱՄՆ դոլար, իսկ դեպի Բելառուս և Ղազախստան՝ համապատասխանաբար 6.7 մլն և 3.9 մլն ԱՄՆ դոլար: Ինչ վերաբերում է ՀՀ ներմուծմանը, ապա պատկերը հետևյալն է. ՀՀ ներմուծ-

¹ Winters, L. Alan, “Lebanon’s Euro-Mediterranean Agreement: Possible Dynamic Benefits,” mimeo, International Economics Department, The World Bank, 1996.

² ՀՀ ԱՎԾ պաշտոնական ինտերնետային կայք՝ www.armstat.am

ման մեջ ԵՏՄ երկրների տեսակարար կշիռը 2012 թ. կազմել է 26%: ՌԴ-ից 2012 թ. ներմուծվել է մոտ 1 մլրդ ԱՄՆ դոլարի ապրանք, իսկ Բելառուսից և Ղազախստանից՝ համապատասխանաբար՝ 33 մլն և 8.8 մլն ԱՄՆ դոլարի:

Եթե հաշվի առնենք նաև, որ 2012 թ. ՀՀ արտահանման մեջ 19.5%-ը կազմել է հանքաքարը, 13%-ը՝ ավիոհոլային, ոչ ավիոհոլային խմիչքները և քացախը, 12%-ը՝ մարգարիտը, թանկարժեք քարերը, մետաղները, որոնք էլ համապատասխանաբար համաշխարհային արտահանման մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն (համաշխարհային արտահանման մեջ համապատասխանաբար 0.12%, 0.18% և 0.03%), ապա կարելի է արձանագրել, որ ՀՀ-ն մասնագիտացել է այս ոլորտների արտադրանքի արտադրության մեջ: Դրա մասին է վկայում նաև արտադրության միջազգային մասնագիտացման մակարդակի հիմնական ցուցանիշներից մեկը՝ արտահանման մասնագիտացման հարաբերական գործակիցը¹: Այն այլ կերպ կոչվում է նաև Բելլա Բալասայի համաթիվ:

$$RCA_{i,j} = \frac{\frac{x_{ij}}{X_i}}{\frac{x_{aj}}{X_a}}$$

որտեղ՝ X_{ij} – i երկրի j արտադրանքի արտահանման ծավալն է,

X_i – i երկրի արտահանման ընդհանուր ծավալն է,

X_{aj} – j արտադրանքի արտահանման տեսակարար կշիռն է ընտրված տարածաշրջանից (կամ ամբողջ աշխարհից),

X_a – ընտրված տվյալ տարածաշրջանից արտահանման ընդհանուր ծավալը:

Ըստ այս համաթվի՝ երկիրը համարվում է որևէ ապրանքի արտահանման մեջ մասնագիտացված, երբ տվյալ ապրանքի՝ երկրի արտահանման մեջ տեսակարար կշիռը գերազանցում է տվյալ տարածաշրջանի կամ աշխարհի արտահանման մեջ վերջինիս տեսակաշար կշիռն: Երկիրն ունի համեմատական առավելություն, երբ այս գործակցի արժեքը գերազանցում է մեկը: Այս գործակիցը ՀՀ հանքահումքային արտադրանքի համար 2012 թ. կազմել է 15, ոչ ավիոհոլային խմիչքի և քացախի համար՝ 22.6, պղնձի և դրանից պատրաստված իրերի համար՝ 8.4, ծխախոտի համար՝ 14²: Սրանք այն ապրանքներն են, որոնցով ՀՀ-ն ունի մրցակցային առավելություն:

Հաջորդ ցուցանիշը ներճյուղային մասնագիտացման գործակիցն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

¹ Balassa index of revealed comparative advantage, [http://www.ecares.org/ecare/personal/conconi\\$/web/rca.pdf](http://www.ecares.org/ecare/personal/conconi$/web/rca.pdf)

² Trade Center of Unctad, http://legacy.intracen.org/appli/TradeCom/TP_EP_CI.aspx?RP=051&YR=2009

$$RCA_i = \frac{X_i - M_i}{X_i + M_i},$$

որտեղ՝ X_i – ն՝ յուրաքանչյուր i -րդ ճյուղի ապրանքային խմբի արտահանման արժեքն է,

M_i – ն՝ յուրաքանչյուր i -րդ ճյուղի ապրանքային խմբի ներմուծման արժեքն է,

RCA_i – ն՝ յուրաքանչյուր ճյուղի ապրանքային խմբի արտահայտված համեմատական առավելությունը:

Այս ցուցանիշը գտնվում է [-1, +1] միջակայքում: -1-ի դեպքում երկիրը բացառապես ներմուծող է, +1-ի դեպքում՝ արտահանող: Միջանկյալ ցուցանիշները ցույց են տալիս տվյալ ճյուղի մասնագիտացման մակարդակը:

Այս ցուցանիշի էլ ավելի կատարելագործված տարբերակն է Լաֆեյի համաթիվը, որը բանաձևի մեջ ավելացրել էր նաև երկրի ՀՆԱ-ն՝

$$LI_{ij} = \left(1000 \cdot \frac{X_{ij} - M_{ij}}{Y_i} \right) - \left(\frac{X_{ij} + M_{ij}}{\sum_j (X_{ij} + M_{ij})} \cdot \frac{1000 \sum_j (X_{ij} - M_{ij})}{Y_i} \right)$$

Պարզեցված ձևով բանաձևն ունի հետևյալ տեսքը՝

$$LI_{ij} = \frac{1000}{Y_i} \cdot \frac{2(X_{ij}M_i - X_iM_{ij})}{X_i + M_i}$$

որտեղ՝ LI_{ij} – ն՝ Լաֆեյի համաթիվն է,

Y_i – ն՝ երկրի ՀՆԱ-ն է:

i երկիրը տվյալ ապրանքով կամ ապրանքախմբով ունի հարաբերական առավելություն, երբ համաթիվը գերազանցում է 0-ն:

Այժմ տեսնեք, թե Հայաստանը, Ռուսաստանը, Բելառուսը և Ղազախստանը որ ապրանքախմբերի արտահանման մեջ են մասնագիտացել և ունեն համեմատական առավելություն, և արդյո՞ք Հայաստանը կարողանում է օգտագործել այն վերջիններիս հետ առևտրում (տե՛ս Հավելված 1):

Շեռագոտության տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանն ըստ Բելա-Բալասայի և Լաֆեյի գործակիցների մասնագիտացել է հետևյալ ապրանքախմբերի արտադրության և արտահանման մեջ՝ «կենդանի կենդանիներ», «ձուկ և խեցգետնավորներ», «ուտելի մրգեր և ընկույզներ», «բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք», «ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ», «ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ», «աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ», «բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղ-

¹ Comparison of Revealed Comparative Advantage Indices with Application to Trade Tendencies of East Asian Countries, Elias Sanidas, Yousun Shin, Seoul National University, p 15

ներ», «սև մետաղներ», «պղինձ և իրեր դրանից», «այլումին և իրեր դրանից», «այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա», «հանքաքար, խարամ և մոխիր», «իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից», «Ժամացույցներ և դրանց մասեր»:

ՌԴ-ն համեմատական առավելություն ունի հետևյալ ապրանքախմբերով՝ «հացահատիկներ», «հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր», «անօդգնական քիմիական միացություններ, ռադիոակտիվ էլեմենտներ և իզոտոպներ», «պարարտանյութեր», «փայտ և փայտից իրեր, փայտածուխ» և «սև մետաղներ»:

Այժմ տեսնենք, թե որքանով է Հայաստանը կարողանում օգտագործել իր համեմատական առավելությունները ՌԴ-ի հետ առևտրում: Հայաստանը 2012 թ. ՌԴ է արտահանել 18 մլն ԱՄՆ դոլար արժեքով ձուկ և խեցգետնավորներ, 22.5 մլն ԱՄՆ դոլար արժեքով ուտելի մրգեր և ընկույզներ, 12 մլն ԱՄՆ դոլար արժեքով բանջարեղենի և պտուղների վերամշակումից մթերք, 152 մլն ԱՄՆ դոլար արժեքով ոգելից, ոչ ոգելից խմիչքներ, քացախ, 28 մլն ԱՄՆ դոլար արժեքով բնական, արհեստական մարգարիտ, թանկարժեք, կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ¹:

Այժմ տեսնենք, թե որ ապրանքների արտադրության և արտահանման մեջ է մասնագիտացել Բելառուսը: Դրանք են՝ «միս և մսից ենթամթերք», «կաթ և կաթնամթերք, թռչնի ձու», «մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք», «շաքար և հրուշակեղեն շաքարից», «հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք», «պարարտանյութեր», «այլ քիմիական ապրանքներ», «բնական և արհեստական մորթի և դրանցից պատրաստված իրեր», «փայտ և փայտից իրեր, փայտածուխ», «քիմիական գործվածք», «վերգետնյա տրանսպորտային միջոցներ», «իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից»: 2012 թ. Հայաստանն օգտագործել է իր համեմատական առավելությունները՝ Բելառուս արտահանելով հետևյալ ապրանքները՝ ուտելի մրգեր և ընկույզներ (114 հազար ԱՄՆ դոլար), ոգելից, ոչ ոգելից ըմպելիքներ, քացախ (5 մլն ԱՄՆ դոլար), աղ, ծծումբ, կրաքար և ցեմենտ (182 հազար ԱՄՆ դոլար): Հայաստանը չի օգտագործել մնացած ապրանքախմբերով իր համեմատական առավելությունները, մասնավորապես 2012 թ. ընդհանրապես չի արտահանել Բելառուս սև մետաղներ, պղինձ, այլումին, դրանցից պատրաստված իրեր, այլ ոչ թանկարժեք մետաղներ, հանքաքար, խարամ, իսկ բնական և արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարե: Ընդ որում, թանկարժեք մետաղների ներմուծումը Բելառուսից 10 անգամ գերազանցել էր դրանց արտահանումը:

Ղազախստանը 2012 թ. մասնագիտացել է հետևյալ ապրանքների արտադրության և արտահանման մեջ՝ «հացահատիկներ», «ալրաղացային-ձա-

¹ Աղբյուրը՝ www.armstat.am

վարելենային արտադրանք», «հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք», «անօրգանական քիմիական միացություններ, ռադիոակտիվ էլեմենտներ և իզոտոպներ», «սև մետաղներ», «պղինձ և իրեր դրանից», «արճիճ և իրեր դրանից», «ցինկ և իրեր դրանից»: 2012 թ. Հայաստանն օգտագործել է իր մրցակցային առավելությունները և Ղազախստան է արտահանել բանջարեղենի, պտուղների վերամշակումից մթերք (216 հազար ԱՄՆ դոլար), ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ (1.5 մլն ԱՄՆ դոլար), բնական և արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ (779 հազար ԱՄՆ դոլար), միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր (600 հազար ԱՄՆ դոլար):

Հայաստանը չի օգտագործել մնացած ապրանքախմբերով իր համեմատական առավելությունները, մասնավորապես 2012 թ. ընդհանրապես չի արտահանել Ղազախստան սև մետաղներ, պղինձ, ալյումին, դրանցից պատրաստված իրեր, այլ ոչ թանկարժեք մետաղներ, հանքաքար, խարամ, ժամացույցներ և դրանց մասեր: Ընդհանրապես, Ղազախստանի հետ առևտուրը ընդգրկում է շատ քիչ ապրանքախմբեր՝ ընդհանուր ցածր արժեքով:

Մետաղական հանքահումքային ոլորտը տնտեսության վերջին տարիների ամենաարագ աճող արտահանող հատվածներից մեկն է, սակայն ինչպես տեսանք՝ այս ոլորտի ապրանքները շատ քիչ ծավալով են արտահանվում կամ ընդհանրապես չեն արտահանվում Բելառուս և Ղազախստան, իսկ ՌԴ արտահանվում են միայն թանկարժեք մետաղներ, քիչ քանակությամբ պղինձ և ալյումին, այլ ոչ թանկարժեք մետաղներ: Շինանյութերի ոլորտի արտադրանքից արտահանվում են հիմնականում քարերն ու այլ ոչ մետաղական հանքահումքային արտադրանքը: 2012 թ. հանքաքար ընդհանրապես չի արտահանվել ՌԴ, Բելառուս և Ղազախստան, քիչ քանակությամբ կրաքար և ցեմենտ է արտահանել ՌԴ, Բելառուս:

Հիմնականում իրեն արդարացրել է սննդի, մասնավորապես՝ ոգելից, ոչ ոգելից խմիչքների և քացախի արտահանումը, որը 2012 թ. կազմել է դեպի ՌԴ ՀՀ արտահանման 55%-ը, Բելառուս արտահանման՝ 75%-ը և Ղազախստան արտահանման՝ 37%-ը:

6

Հայաստանի Հանրապետության տնտեսության միջազգային տնտեսական ինտեգրման քանակական գնահատականը գրավիտացիոն մոդելի կիրառմամբ

Պետությունների տնտեսական միավորումների ձևավորումը երկարաժամկետ տնտեսական քաղաքականության կարևորագույն գործոններից է: Դրա արդյունավետ իրագործումը հնարավոր չէ առանց ինտեգրացիոն գործընթացների զարգացման հայտանիշների և նախընտրելի ուղղությունների բազմակողմանի վերլուծության: Ակնհայտ է, որ ինտեգրացիոն գործընթացների հիմնական նպատակը բնակչության կենսամակարդակի աճն է, որին հասնելու համար անհրաժեշտ է ապահովել ՀՆԱ-ի հնարավոր առավելագույն աճ: Ընդ որում, հաշվի առնելով Հայաստանում ստեղծված իրավիճակը՝ հնարավորինս կարճ ժամկետում և պետության համար հնարավորինս անվտանգ պայմաններում¹:

Ակնհայտ է, որ ՀՀ տնտեսության զարգացումը սահմանափակ ներքին շուկայի պայմաններում մեծապես կախված է արտահանման ծավալների առաջանցիկ աճից: Հայաստանի Հանրապետությունում գործարարության բարենպաստ միջավայր ձևավորելու, առաջանցիկ տեմպեր ապահովելու նպատակով արտահանման ուղղակի խրախուսման քաղաքականության վարումը նոր ուղիներ կբացահայտի ՀՀ տնտեսության համար՝ նպատակադրելով ներթափանցել նոր շուկաներ²:

Համաշխարհային տնտեսության հնարավոր զարգացումների բացատրությունը պահանջում է նոր մոտեցումներ, որպեսզի հաշվի առնվեն երկրների առանձնահատկությունները, դրանցից բխող օրինաչափություններն ու կախվածությունները: Մասնավորապես, հաշվի առնելով արտաքին առևտրի զգայունությունը՝ կարելի է ենթադրել, որ այդ կապի բացահայտումն օգտակար կլինի ոչ միայն տնտեսության ուսումնասիրության համար, այլև քաղաքական իրադարձությունների անդրադարձերի տեսակետից: Նման ուսումնասիրությունների և հատկապես քանակական վերլուծությունների համար անհրաժեշտ է կառուցել համապատասխան մոդել կամ լրամշակել դասական մոդելները³:

¹ Ա. Թավադյան, Ինտեգրացիոն գործընթացների իրական հնարավորությունները, «21-րդ դար» N 5, 2014, էջ 5:

² Մ. Մելքումյան, Վ. Հակոբյան, Ձեռնարկատիրական գործունեության առանձնահատկությունները ՀՀ-ում, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», N 8–9, 2008, էջ 33:

³ Տ. Թորոսյան, Լ. Հարությունյան, Քաղաքական գործոնների ազդեցությունը անցումային երկրների տնտեսական ցուցանիշների վրա, Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի, Եր., 2005, 2(5), էջ 28:

Գրավիտացիոն մոդելների հիմնական բնութագրերը: Ի. Նյուտոնի ժամանակներից սկսած, ֆիզիկոսներին հայտնի գրավիտացիոն մոդելն առաջին անգամ կիրառվել է արտաքին առևտրի հետազոտման համար՝ Յ. Թինբերգենի¹ և Շ. Լիննեմանի² կողմից: Այն արագ ճանաչում ձեռք բերեց և օգտագործվեց շատ այլ հեղինակների կողմից: Մոդիֆիկացված գրավիտացիոն մոդելի ֆունկցիոնալ ձևը (1) բերված է ստորև.

$$F_{ij} = G^*(M_i * M_j) / Dist_{ij} \quad (1),$$

որտեղ՝

F_{ij} – ն՝ արտաքին տնտեսական հոսքերն են, օրինակ, i և j երկրների արտահանման և ներմուծման գումարն է,

M_{ij} – ն՝ տնտեսական զանգվածներն են, օրինակ, i և j երկրների ՀՆԱ-ն,

$Dist_{ij}$ – ն՝ i և j երկրների միջև աշխարհագրական հեռավորությունն է,

G – ն՝ գրավիտացիոն հաստատունն է:

Գրավիտացիոն մոդելի հիմքում ընկած է Նյուտոնի համաշխարհային ձգողականության օրենքը. երկու երկրների միջև առևտուրը կախված է նրանց տնտեսությունների չափերից և այդ երկրների միջև հեռավորությունից: Եթե ի սկզբանե գրավիտացիոն մոդելն բնորոշում էր միայն առևտրային հոսքերը նկարագրող կայուն էմպիրիկ կախվածություն՝ առանց որևէ տեսական հիմնավորումների, ապա հետագայում ստացավ նաև տեսական հիմնավորումներ³:

Ըստ մոդելի մեթոդաբանության՝ արտահանումը մեծություն է, որը ուղիղ համեմատական է երկու երկրների (ՀՆԱ) «տնտեսական զանգված» հասկացությանը և հակադարձ համեմատական՝ երկրների միջև հեռավորությանը: Այլ խոսքերով, գրավիտացիայի առկայությունը ենթադրում է, որ ավելի խոշոր երկրների զույգերը պետք է առևտուր անեն միմյանց հետ, այն դեպքում, երբ իրարից մեծ հեռավորության վրա գտվող երկրները պետք է ավելի քիչ առևտուր անեն՝ առևտրի հետ կապված մեծ ծախսերի պատճառով:

¹ Tinbergen Jan, (1962) Shaping the World Economy: Suggestions for an International Economic Policy, Twentieth Century Fund.

² Linneman H., (1966) An econometric study of world trade flows. North-Holland Publishing, Amsterdam.

³ Առավել մանրամասն տե՛ս Anderson J., E. (1979) A theoretical foundation of the gravity equation, American Economic Review, 69, 106–116; Anderson, J. E., van Wincoop, E. (2003) Gravity with gravitas: a solution to the border puzzle, American Economic Review, 93, 171–192; Bergstrand, J. H. (1985) The gravity equation in international trade: Some micro economic foundations and empirical evidence, Review of Economics and Statistics, 67, 474–481; Helpman, E., Krugman, P. (1985) Market structure and foreign trade. MIT Press, Cambridge, MA; Deardorff, A. V. (1998) Determinants of bilateral trade: Does gravity work in a neoclassical world? In Frankel, J. (ed.), The regionalization of the world economy. Chicago University Press, Chicago.

Բազմաթիվ հետազոտություններում ցույց է տրվել, որ գրավիտացիոն մոդելն, ընդհանուր առմամբ, նկարագրում է երկրների միջև փոխադարձ առևտրի ծավալները: 1962 թ. Յ. Թինբերգենի աշխատության հրատարակումից հետո անցած ժամանակի ընթացքում մոդելը բազմիցս մոդիֆիկացվել է: Դրանցից մեկում տեղի է ունեցել բացատրող փոփոխականների հավաքագրման ընդլայնում (օրինակ, ավելացվել են ընդհանուր սահմանը, ընդհանուր լեզուն, անդամակցությունը արժույթային, տնտեսաքաղաքական և այլ միություններին), այլ մոդելներում տեղի է ունեցել բացատրող փոփոխականի մոդիֆիկացում, այդ թվում՝ աշխատուժի միջազգային միգրացիայի, ՕՈՒՆ-երի հոսքերի, զբոսաշրջության հետազոտությանը մոդելների աղապատացման համար: Որպես կանոն, բացատրող փոփոխականի փոփոխման դեպքում առաջարկվել է նաև մոդելի աջ մասի ընդլայնումը, այսինքն՝ բացատրող նոր փոփոխականների ավելացում¹:

21-րդ դարի առաջին տասնամյակում դիտարկվում է գրավիտացիոն մոդելների նկատմամբ հետաքրքրության աճ²: Գրավիտացիոն մոդել օգտագործող հազվագյուտ աշխատանք կարելի է գտնել, որտեղ գոնե հիշատակում չլինի այդ մոդելի՝ երկկողմանի առևտրային հոսքերը բացատրելու հստակ ունակության մասին:

Բացի դրանից, տնտեսագիտական գրականությունում հաճախ է նշվում, որ գրավիտացիոն մոդելը տնտեսագիտական վերլուծության բնագավառում առավել կայուն է մայիրիկ կախվածություններից մեկն է³:

Գրավիտացիոն մոդելի կարևորագույն առանձնահատկություններից մեկը առանձին երկրների կամ երկրների խմբերի միջև առևտրային հոսքերի փոփոխության վրա ազատ առևտրի համաձայնագրերի ազդեցությունը գնահատելու և կանխատեսելու ունակությունն է: Հարկ է նշել, որ գրավիտացիոն մոդելը թույլ է տալիս վերլուծել ոչ միայն արդեն գործող ազատ առևտրի համաձայնագրերի էֆեկտները, այլև կարող է գնահատել նաև նախատես-

¹ Օրինակ, Helpman, Elhanan, Paul Krugman (1985) Market Structure and Foreign Trade, MIT Press. աշխատության մեջ գրավիտացիոն մոդելը մոդիֆիկացվում է մենաշնորհային մրցակցության պայմանների համար, իսկ Redding, Stephen, Anthony Venables (2000) Economic Geography and International Inequality: Discussion Paper 2568, Center for Economic Policy Research աշխատության մեջ գրավիտացիոն մոդելը մոդիֆիկացվում է նոր տնտեսական աշխարհագրության տեսության զարգացման համար դրա օգտագործման համար: Գրավիտացիոն մոդելի օգտագործման առավել հայտնի օրինակներից մեկը կարող է համարվել Frankel, Jeffrey (1997) Regional Trading Blocs, Washington DC: Institute for International Economics. աշխատությունը: Deardorff, Alan (1998) Determinants of Bilateral Trade: Does Gravity Work in a Neoclassical World in The Regionalization of World Economy / Ed. by Frankel Jeffrey, Chicago University Press. աշխատությունը ներկայացնում է գրավիտացիոն մոդելի օգտագործմամբ առավել յուրօրինակ աշխատանքների ամփոփումը:

² Bergeijk, P. A. G., Brakman, S. (2010) Introduction: The comeback of the gravity model. In Bergeijk, P. A. G., Brakman, S. (eds.), The gravity model in international trade: Advances and Applications, Cambridge University Press.

³ Porojan, A. (2001) Trade flows and spatial effects: the gravity model revisited//Open Economies Review, 12, 265–280.

վող համաձայնագրերի էֆեկտները՝ հիմնվելով հետադարձ տեղեկատվության և առկա վիճակի վրա: Էկոնոմետրիկ մոդելների մեջ գրավիտացիոն մոդելը հանդես է գալիս որպես առևտրային հոսքերի մոդելավորման գլխավոր գործիք:

Կիրառական հետազոտություններում գրավիտացիոն մոդելները օգտագործվում են առևտրի տնտեսագիտության լայն շրջանակի խնդիրների լուծման համար, որոնց շարքում կարևոր են տարբեր ինտեգրացիոն կամ արժույթային միությունների ստեղծմանը, ինչպես նաև համապատասխան էֆեկտների գնահատմանը վերաբերող հարցերը: Նման մոդելները օգտագործվում են արտաքին առևտրի և տնտեսական աճի միջև էկոնոմետրիկ կապի գնահատման, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա արտաքին առևտրի ազդեցության գնահատման համար:

Վերը նշված խնդիրների լուծման համար գրավիտացիոն մոդելի տարածվածությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով:

Առաջին հերթին, տվյալ մոդելները երկրների միջև փոխադարձ առևտրի մոդելավորման տեսանկյունից տիրապետում են բարձր ճշգրտության: Երկրորդ հերթին, նրանք բավական պարզ գործիք են միջազգային առևտրի վրա տարբեր գործոնների ազդեցության գնահատման համար (բացի գրավիտացիոն մոդելի համար ստանդարտ փոփոխականներից): Հենց գրավիտացիոն մոդելի ստանդարտ փոփոխականների բացատրող ունակությունը թույլ է տալիս ենթադրել, որ մոդելում ներառվող լրացուցիչ փոփոխականների (մասնավորապես՝ ինտեգրացիոն համաձայնագրերի էֆեկտները բնութագրող) վիճակագրական կախվածությունը վկայում է հոգուտ երկրի արտաքին առևտրի և առհասարակ տնտեսության համար դրանց իրական նշանակության: Տնտեսական քաղաքականության տարբեր միջոցների հետազոտության համար գրավիտացիոն մոդելները ներառում են ոչ միայն մաքսային սակագների առկայությունը կամ բացակայությունը բնորոշող փոփոխականներ, այլև երկրների քաղաքական կամ ինստիտուցիոնալ բնութագրերն արտացոլող այլ փոփոխականներ, որոնք կարող են ազդել միջազգային առևտրի վրա:

Ի դեպ, մասնագիտական գրականության մեջ առկա են հետազոտություններ, երբ գրավիտացիոն մոդելն առաջարկվել է օգտագործել ոչ թե գործընկեր երկրների արտաքին առևտրաշրջանառության վերլուծության, այլ դրանց ինստիտուցիոնալ զարգացման տարբերությունների հետազոտության համար: Ըստ հետազոտության, հիմնական տնտեսական ինստիտուտների որակի միջպետական տարբերություններն անմիջականորեն կապված են այնպիսի բազային պատմաաշխարհագրական գործոնի հետ, ինչպիսին է պետությունների միջև հեռավորությունը: Ազգային ինստիտուտների զարգացումը, ըստ հիմնադրույթի, տեղի է ունեցել ինստիտուցիոնալ միջավայրի զգալի ճնշման տակ, որն առկա է հարևան և հիմնական առևտրային գործ-

ընկեր համարվող երկրներում: Ինստիտուտների էվոյուցիան պայմանավորված է դրանց հարևաններից ու տնտեսական պայմանադիր կողմերից մասնակի փոխառություններով (ինստիտուտների ներմուծում): Այն ամենը, ինչը հեշտացնում է ազգերի համագործակցությունը (աշխարհագրական փոքր հեռավորություն) կնպաստի նաև ինստիտուտների մերձեցմանը: Դրա հետ մեկտեղ, փոխադարձ առևտուրը հիմնական դեր է խաղում ինստիտուցիոնալ կոնվերգենցիայի նմանատիպ գործընթացում. փոխադարձ առևտրի հեշտացման համար գործընկերները պարտադրված են հարմարեցնելու իրենց ինստիտուտները մեկը մյուսին: Ընդ որում, պետք է ակնկալել, որ տնտեսապես առավել զարգացած առևտրային պայմանադիր կողմի ինստիտուտները կապերի աճի չափով առավել մեծ հավանականությամբ փոխ կառնվեն ավելի քիչ զարգացած պայմանադիր կողմերից:

Տվյալ հետազոտությունում գրավիտացիոն մոդելի ընտրությունը հենց բացատրվում է նրանով, որ փոխադարձ առևտրի զարգացումը նպաստում է առևտրային գործընկեր երկրներում ինստիտուտների մերձեցմանը: Այդ պատճառով, երկրների միջև առևտրաշրջանառության մակարդակների տարբերությունները բացատրող գործոնները հավանաբար կարող են օգնել նաև հիմնական տնտեսական ինստիտուտների որակի գծով գրանցվող տարբերությունների բացատրմանը¹:

Բացի դրանից, գրավիտացիոն մոդելները օգտագործվում են և՛ ապրանքների, և՛ ծառայությունների առևտրային հոսքերի վերլուծության համար²:

Գրավիտացիոն մոդելը կարող է գնահատվել տարածական և պանելային տվյալների միջոցով: Գրավիտացիոն մոդել օգտագործող ժամանակակից հետազոտությունների մեծ մասում օգտագործվում են պանելային տվյալները, որոնց օգտագործումը հնարավորություն է ընձեռում հաշվի առնելու ժամանակի մեջ փոփոխականների միջև փոխադարձ կապը և առևտրային գործընկերների միջև անհատական էֆեկտները³:

ՀՆԱ-ի, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և երկրների զույգերի միջև հեռավորության ցուցանիշները գրավիտացիոն մոդելներում առավել հաճախ օգտագործվող ցուցանիշներն են՝ որպես առաջարկի և պահանջարկի բնութագրիչներ (զանգվածի և հեռավորության փոփոխականներ): Որպես ձևական ցուցանիշներ՝ հաճախ օգտագործվում են ընդհանուր լեզվի և սահմանի ցուցանիշները: Ձևական ցուցանիշները, սովորաբար, օգտագործվում են

¹ Հախվերդյան Դ. Հայաստանի Հանրապետության տնտեսությունը կարգավորող ինստիտուտները զրոքալացման պայմաններում, Եր.: Հեղ հրատ., 2013. էջ 182–183:

² Kimura, F., Lee, H. H., The gravity equation in international trade in services//Review of World Economics, 142, 2006, 92–121.

³ Matyas, L. Proper econometric specification of the gravity model//The World Economy, 20, 1997, 363–368.

տարրեր տարածաշրջանային առևտրային համաձայնագրերի, մաքսային և արժույթային միությունների էֆեկտների գնահատման համար:

Ինչ վերաբերում է էկոնոմետրիկ մեթոդաբանությանը, գրավիտացիոն մոդելների գնահատման ժամանակ նվազագույն քառակուսիների մեթոդն (ՆԲՄ) իր «մաքուր» տեսքով վերջին ժամանակներում շատ հազվադեպ է օգտագործվում: Հաճախ օգտագործվում են մշտական և պատահական էֆեկտներով մոդելներ, որոնք թույլ են տալիս հաշվի առնելու երկրների միջև փոխազդեցությունը տարածության և ժամանակի մեջ: Ընդ որում, մոդելի ընտրությունը որոշվում է հետազոտության խնդիրներով, վերլուծվող տվյալների առանձնահատկություններով և մոդելի հիմքում ընկած տեսական հիմնավորումներով: Այսպես, Պ. Էգգերը իր հետազոտության մեջ նշում է, որ մշտական էֆեկտներով մոդելն ավելի լավ է համապատասխանում կարճա-ժամկետ կանխատեսումների համար: Պատահական էֆեկտներով մոդելը նույնպես կարող է օգտագործվել, եթե այդ մոտեցումը համարժեք է առկա տվյալներին և որպես խնդիր է դրվում ժամանակի մեջ անփոփոխ էֆեկտների գնահատումը¹: Ընդհանուր առմամբ, աշխատանքների մեծ մասում օգտագործվում են մշտական էֆեկտներով գրավիտացիոն մոդելները²:

Թեև գրավիտացիոն մոդելները լայնորեն օգտագործվում են տարածաշրջանային առևտրային համաձայնագրերի էֆեկտների գնահատման համար, սակայն դրանց օգնությամբ ստացված արդյունքներն այդ համաձայնագրերի ստորագրման կամ մերժման համար միանշանակ պատասխան չեն տալիս³: Դրա հետ մեկտեղ, հետազոտությունները ցույց են տալիս, որ տարածաշրջանային առևտրային համաձայնագրերը բերում են անդամ երկրների միջև առևտրի զգալի ավելացման, հաճախ այդ համաձայնագրին չանդամակցող երկրների հաշվին⁴:

Հաշվի առնելով ժամանակակից էկոնոմետրիկ հետազոտությունները՝ փորձ է արվել նաև բացահայտելու ազատ առևտրի գոտիների ստեղծման էֆեկտը, և ազատ առևտրի գոտին դիտարկել որպես ընդոծին (էնդոգեն) գործոն:

Արդյունքները ցույց տվեցին, որ ԱԱԳ-ն իսկապես էական ազդեցություն է գործում առևտրի զարգացման վրա: Հարկ է նշել, որ գրավիտացիոն

¹ Egger, P. An econometric view on the estimation of gravity models and the calculation of trade potentials//The World Economy, 25, 2002, 297–312.

² Количественный анализ экономической интеграции Европейского союза и Евразийского экономического союза: методологические подходы. – ЦИИ ЕАБР, 2014. с. 26-29.

³ Ստավել մանրամասն տե՛ս Baier, S. L., Bergstrand, J. H. (2007) Do free trade agreements actually increase members' international trade? Journal of International Economics, 71, 72–95; Kεaptsoglou, K., Karlaftis, M. G., Tsamboulas, D. (2010) The gravity model specification for modeling international trade flows and free trade agreement effects: A 10-year review of empirical studies, The Open Economics Journal, 3, 1–13.

⁴ Carrere, C. (2006) Revisiting the effects of regional trade agreements on trade flows with proper specification of the gravity model, European Economic Review, 50, 223–247.

մոդելում ազատ առևտրի համաձայնագրերի ազդեցության գնահատման ժամանակ հնարավոր էնդոգենության հաշվառումը համարվում է ինտեգրացիոն համաձայնագրերի հետևանքների վերլուծության կարևորագույն ուղղություն¹:

Թեև գրավիտացիոն մոդելը առևտրային հոսքերի և տարածաշրջանային ինտեգրացիոն համաձայնագրերի էֆեկտների վերլուծության ավանդական և ունիվերսալ գործիք է, վերջին ժամանակներում որոշ հեղինակներ քննադատության են ենթարկում նրա գնահատման էկոնոմետրիկ մեթոդաբանությունը: Նրանք կատարում են հարցադրում և փորձում հասկանալ, թե արդյոք այս «աշխատող մեխանիզմը» իրականում թյուրիմացության տեղիք չի տալիս՝ «շտրիվ» գրավիտացիոն մոդելի ոչ ադեկվատ էկոնոմետրիկական մեթոդաբանության: Հեղինակները կենտրոնանում են 3 հիմնական խնդիրների վրա: Մասնավորապես, 1) գրավիտացիոն մոդելի գնահատման ժամանակ օգտագործվող տվյալների ոչ ստացիոնարությունը և այն խնդիրները, որոնք ծագում են այս հանգամանքը հաշվի չառնելու հետևանքով, 2) ոչ համարժեք էկոնոմետրիկ մեթոդաբանության օգտագործման դեպքում գրավիտացիոն մոդելների գործակիցների բարձր արժեքները, 3) ոչ ստացիոնար տվյալների համար գրավիտացիոն մոդելի գնահատման մեթոդները²:

Գրավիտացիոն մոդելն օգտագործելիս դեպքում փոփոխականների ոչ ստացիոնարությունը վտանգ է պարունակում, քանի որ այդ փաստի անտեսումն ու իրավիճակի վերլուծությանը համարժեք էկոնոմետրիկական մեթոդներ չօգտագործելը հանգեցնում են մոդելի ոչ ճիշտ սպեցիֆիկացիային: Եթե կիրառենք ոչ ստացիոնար փոփոխականները ստացիոնար դարձնող առաջին տարբերակները, ապա գրավիտացիոն մոդելի դեպքում մենք բախվում ենք ոչ միայն երկարաժամկետ բնույթի կարևոր տեղեկատվության կորստի, այլև տարաբնույթ ինտեգրացիոն նախաձեռնությունների էֆեկտները հաշվի առնելու անկարողությանը: Ընդ որում, այդ էֆեկտներն արտացոլվում են ֆիկտիվ փոփոխականների տեսքով, որոնք ստացիոնար մեծություններ են: Որոշ հետազոտություններում ցույց է տրվում, որ գրավիտացիոն մոդելի գնահատման ժամանակ համարժեք էկոնոմետրիկ մեթոդաբանության օգտագործումը, ավանդական մոտեցման համեմատությամբ, հանգեցնում է առավել նվազ վիճակագրական նշանակալիությանը և մոդելի փոփոխականների մեծ մասի առավել փոքր բացարձակ էֆեկտի³:

Հասկանալի է, որ ավանդական գրավիտացիոն մոդելում տրված չափազանց բարձր գնահատականները կարող են ոչ ճիշտ կողմնորոշիչներ

¹ Baier, S. L., Bergstrand, J. H. (2007) Do free trade agreements actually increase members' international trade? *Journal of International Economics*, 71, 72–95.

² Zwickels, R. C. J., Beugelsdijk, S. (2010) Gravity equations: Workhorse or Trojan horse in explaining trade and FDI patterns across time and space? *International Business Review*, 19, 102–115.

³ Zwickels, R. C. J., Beugelsdijk, S. (2010) Gravity equations: Workhorse or Trojan horse in explaining trade and FDI patterns across time and space? *International Business Review*, 19, 102–115.

ծառայել տնտեսական քաղաքականության համար: Այս առնչությամբ՝ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում գրավիտացիոն մոդելների՝ նախկինում ստացված արդյունքների վերանայումը՝ կապված տարածաշրջանային առևտրային համաձայնագրերից ստացվող էֆեկտները բնութագրող փոփոխականների ազդեցության հետ: Այսպիսով, գրավիտացիոն մոդելների տարածվածությամբ հանդերձ, անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել տվյալների դինամիկ առանձնահատկություններին և էկոնոմետրիկ վերլուծության համարժեք մեթոդաբանությանը:

Գրավիտացիոն մոդելի ոչ համարժեքությանը վերաբերող բազմաթիվ այլ հրապարակումներ¹ նույնպես առկա են, սակայն այդ աշխատանքներն ավելի շատ բացատրություն են, քան՝ օրինաչափություն:

Գրավիտացիոն մոդելների մեթոդաբանական հիմքերը: Հիմնականում գրավիտացիոն մոդելի փոփոխականները, որպես կանոն, արտահայտվում են (ընական) լոգարիթմներում: Ինչպես արդեն նշել ենք, բազային տեսքով գրավիտացիոն մոդելը հանդես է գալիս հետևյալ կերպ².

$$\ln X_{ij} = b_0 + b_1 \ln GDP_i + b_2 \ln GDP_j + b_3 \ln \tau_{ij} + \varepsilon_{ij}, \quad (2)$$

որտեղ՝ X_{ij} – u ՝ արտահանումը i երկրից j երկիր,

GDP_i և GDP_j – u ՝ Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) համապարասխանաբար i երկրում և j երկրում,

τ_{ij} – u ՝ i և j երկրների միջև առևտրի ծախսերը (որպես մոտեցում օգտագործվում է երկրների (դրանց կենտրոնների) միջև աշխարհագրական հեռավորությունը),

ε_{ij} – u ՝ ռեգրեսիայի հնարավոր սխալը,

b_0 – u ՝ գրավիտացիոն հաստատունը,

b_1, b_2, b_3 – u ՝ ռեգրեսիայի գործակիցները:

Ռեգրեսիայի գործակիցները ճկուն են, այդ թվում՝ հաշվի է առնվում, որ $b_1 > 0$, $b_2 > 0$ և $b_3 < 0$:

(2) հավասարումն օգտակար ելակետ է միջազգային առևտրի վերլուծության համար: Սակայն այսպիսի մոդելն ունի սահմանափակումներ: Այսպես, i և j երկրները կարող են դառնալ արտոնյալ առևտրային համաձայնագրերի անդամ, ինչը կնվազեցնի համապատասխան ապրանքների մաքսատուրքերը: Ըստ տնտեսագիտության տեսության՝ սա կարող է ազդեցություն գործել երրորդ երկրի առևտրի վրա, որը, հնարավոր է անգամ, տվյալ համաձայնագրի անդամ չլինել: Ստեղծման և շեղումների էֆեկտների

¹ Առավել մանրամասն տե՛ս Fidrmuc, J. (2009) Gravity models in integrated panels, *Empirical Economics*, 37, 435–446; Gomez, E., Tamarit, C. (2011) The Euro effect on trade: evidence in gravity equations using panel cointegration techniques, WP-EC 2011-07, Valencian Institute of Economic Research; Camarero, M., Gomez, E., Tamarit, C. (2013) EMU and trade revisited: Long-run evidence using gravity equations, *The World Economy*, 36, 1146–1164.

² Shepherd, B. (2013) The gravity model of international trade: A user guide. ARTNeT Gravity Modeling Initiative, UN.

հասկացությունները դրա օրինակներն են: Ընդ որում, բազային գրավիտացիոն մոդելը չի արտացոլում այդպիսի իրավիճակը և թույլ չի տալիս հաշվի առնելու առևտրի ծախսերի նվազումը:

Ինչպես ցույց են տվել տեսական հետազոտությունները, երկկողմ առևտուրը ոչ միայն երկու երկրների միջև հեռավորության խնդիր է, այլև այդ երկրների զույգի հեռավորությունն այլ երկրներից: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ գիտական շրջանառության մեջ դրվեց «առևտրի բազմակողմ կայունություն» (multilateral trade resistance) հասկացությունը, որպեսզի մատնանշվի երկրների միջև հեռավորությունը միմյանցից և աշխարհի այլ երկրներից¹: Ընդ որում, որքան բարձր է բազմակողմ կայունությունը, այդքան ավելի մեծ է երկրների զույգի փոխադարձ առևտրի ծավալը, և՛ հակառակը: Առևտրի բազմակողմ կայունության ըմբռնումը կարող է իրականացվել գրավիտացիոն մոդելում, եթե նրա մեջ բացի բազային փոփոխականներից ընդգրկվեն նաև i (MRT_i) և j (MRT_j) երկրների համար մշտական էֆեկտներ բնորոշող փոփոխականներ: Մշտական էֆեկտները երկուական փոփոխականներ են, որոնք ցույց են տալիս՝ արդյոք դիտարկումը վերաբերում է որոշակի երկրին, թե ոչ. եթե այո, ապա փոփոխականը հավասար է դառնում 1-ի, իսկ եթե ոչ՝ 0-ի:

Արտոնյալ առևտրային համաձայնագրերի, ազատ առևտրի համաձայնագրերի և ինչպես նաև տարբեր ինտեգրացիոն միավորումների ազդեցությունների գնահատումը գրավիտացիոն մոդելում ավելացնում է լրացուցիչ փոփոխականներ: Այսպես, ազատ առևտրի մասին համաձայնագրով առաջացած ծագման և շեղումների էֆեկտների գնահատման համար գրավիտացիոն մոդելում ավելացվում են երկու կեղծ (ցուցանիշային) փոփոխականներ: Առաջին կեղծ փոփոխականը (TC) հավասար է 1-ի, երբ t ժամանակահատվածի համար երկու երկրներն էլ ազատ առևտրի մասին համաձայնագրի մասնակից են դառնում, և 0-ի՝ մնացած բոլոր դեպքերում: Երկրորդ կեղծ փոփոխականը (TD) հավասար է 1-ի, երբ t ժամանակահատվածի համար երկրների զույգից՝ ներմուծող երկիրն ազատ առևտրի մասին համաձայնագրի մասնակից է, իսկ արտահանողը՝ ոչ (մնացած բոլոր դեպքերի համար ցուցանիշային փոփոխականը հավասար է 0-ի):

Հաշվի առնելով ասվածը՝ (2) գրավիտացիոն մոդելը կընդունի հետևյալ տեսքը՝

$$\ln X_{ij}^t = b_0 + b_1 \ln GDP_i^t + b_2 \ln GDP_j^t + b_3 \ln \tau_{ij} + b_4 MRT_i + b_5 MRT_j + b_6 TC + b_7 TD + \varepsilon_{ij}^t : \quad (3)$$

(3) մոդելում ենթադրվում է, որ ծագման էֆեկտը բնորոշող TC փոփոխականի գործակիցը կլինի շարունակական, այն դեպքում, երբ շեղման էֆեկտը բնորոշող TD գործակիցը՝ բացասական:

¹ Anderson, J. E., van Wincoop, E. Gravity with gravitas: a solution to the border puzzle//American Economic Review, 93, 2003, p. 171–192.

Գործակիցների և գրավիտացիոն մոդելի գնահատման համար հաճախ օգտագործվում է նվազագույն քառակուսիների մեթոդը (ՆԲՄ), սակայն հետազոտողները նշում են այս մեթոդի մեթոդաբանական թերությունները և ցույց են տալիս, որ գործնական հետազոտությունների մեծ մասում օգտագործվող մոդելը չի համապատասխանում տեսական մոդելին: Այդ պատճառով, ՆԲՄ-ի հետ միասին գործակիցների գնահատման ժամանակ օգտագործվում են նաև գնահատման այլ մեթոդներ՝ նվազագույն քառակուսիների ոչ գծային մեթոդը, պահերի ընդհանրացված մեթոդը, Պատուտի քվադրատիկ մոդելը, հավանականության մեթոդը, հաստատուն և պատահական էֆեկտներով մոդելներ և այլն:

Եթե գրավիտացիոն մոդելի կախյալ փոփոխականը և անկախ փոփոխականների խումբը լինեն անկայուն, ունենան ընդհանուր միտումներ, ապա ստանդարտ էկոնոմետրիկ մեթոդաբանությունը կիրառելիս նրանց միջև միշտ կլինի վիճակագրորեն նշանակալի կապ, որը ստացել է «կեղծ կոռելյացիա» անվանումը: Ընդհանուր միտումը կեղծ կախվածության արդյունք է: Սակայն փոփոխականների միջև գոյություն ունեցող ընդհանուր միտումը կարող է նաև լիովին իրական լինել, եթե այդ փոփոխականները համաինտեգրված են: Այս դեպքում գրավիտացիոն մոդելի հաշվարկը պետք է իրականացվի հատուկ մշակված մեթոդների օգնությամբ:

Օգտագործելով (2) և (3) հավասարումները՝ ներկայացնենք այս մոտեցման էությունը¹: Առաջին փուլում պոտենցիալ անկայուն փոփոխականները փորձարկվում են միավոր արմատով կամ կայունությամբ՝ համապատասխան պանելային թեստերի միջոցով: Եթե անկայունության տեսակետը չի հերքվում, ապա համապատասխան պանելային թեստերի միջոցով ստուգվում է նաև դիտարկվող փոփոխականների միջև համաինտեգրումը: Եթե թեստերը հաստատում են դրա առկայությունը, այսինքն՝ երկարաժամկետ հավասարակշիռ կախվածությունը փոփոխականների միջև, ապա համապատասխան էկոնոմետրիկ մեթոդաբանությամբ գնահատվում է հետևյալ ռեգրեսիան՝

$$\ln X_{ij}^t = b_0 + b_1 \ln GDP_i^t + b_2 GDP_j^t + \varepsilon_{ij}^t : \quad (4)$$

Տվյալ դեպքում, օրինակ, կարող է օգտագործվել լիովին փոփոխված ՆԲՄ-ն, կամ դինամիկ ՆԲՄ պանելային տվյալների հետ միասին, կամ գնահատման մեկ այլ նմանատիպ մեթոդ: Սա հնարավորություն է ընձեռում ստանալու երկարաժամկետ կապի անխառն և հետևողական գնահատականներ և ռեգրեսիայի գործակիցների համապատասխան ստանդարտ սխալները:

Երրորդ փուլում (4) հավասարման մնացորդները, որոնք դիտարկվող փոփոխականների միջև համաինտեգրման առկայության դեպքում կայուն

¹ Zwinkels, R. C. J., Beugelsdijk, S. Gravity equations: Workhorse or Trojan horse in explaining trade and FDI patterns across time and space?//International Business Review, 19, 2010, p. 102–115.

մեծություն են, օգտագործվում են որպես կախյալ փոփոխականներ հետևյալ ռեգրեսիայում՝

$$\varepsilon_{ij}^t = a_0 + a_1 \ln \tau_{ij} + a_2 MRT_i \varepsilon_{ij} + a_3 MRT_j + a_4 TC + a_5 TD + u_{ij}^t . \quad (5)$$

Այսպիսով, (5) հավասարման մեջ բոլոր փոփոխականները կայուն են, ինչը հնարավորություն է տալիս գնահատելու մոդելն այս իրավիճակի համար ավանդական մեթոդներով: Գրավիտացիոն մոդելի գնահատման առաջին և երկրորդ փուլի արդյունքների ամբողջությունը, ի վերջո, տալիս է ցանկալի արդյունքը: Ստացվում է հավասարակշռված ռեգրեսիա (իր էությանը այս մեթոդը սխալների ճշգրտումների յուրահատուկ մեխանիզմով մոդել է), որն իր մեջ ներառում է տնտեսական դինամիկայի երկու ասպեկտներ՝ անկայուն փոփոխականների միջև երկարաժամկետ հավասարակշռության կապեր և կայուն փոփոխականների կարճաժամկետ դինամիկա՝:

Ընդհանուր առմամբ, կարող ենք եզրահանգել, որ գրավիտացիոն մոդելը ex-post վերլուծության միջոց է: Դրանում է նրա և՛ առավելությունները, և՛ թերությունները:

Մի կողմից, հետազոտողները գործ ունեն վիճակագրական ծանրակշիռ տվյալների և ամուր տեսության վրա հիմնված էմպիրիկ կայուն փոփոխականության հետ, մյուս կողմից, գրավիտացիոն մոդելը ի վիճակի չէ պատասխանելու տարածաշրջանային ինտեգրացիոն համաձայնագրերի հնարավոր հետևանքների վերլուծությունից ծագող մի շարք հարցերի, ինչպես նաև չեզոքացնելու հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների և բարեկեցության դինամիկայի փոփոխության էֆեկտները:

Հարկ է նշել, որ գրավիտացիոն մոդելը, այդուհանդերձ, հնարավորություն է ընձեռում «տեսնելու ապագան», նրա՝ վառ արտահայտված ex-post բնույթով հանդերձ: Հաշվի առնելով այլ երկրներում և նրանց խմբերում ազատ առևտրի մասին տարբեր համաձայնագրերի կիրառման արդյունքում ի հայտ եկած էֆեկտները, կարելի է էքստրապոլյացիայի ենթարկել հնարավոր էֆեկտները և հաշվարկել ինտեգրացիոն նախաձեռնությունների հետևանքները: Բացի դրանից, գրավիտացիոն մոդելը հնարավոր է դարձնում գնահատելու այս կամ այն ինտեգրացիոն միավորմանը չանդամակցելու հետևանքով աշխարհագրական առանձնահատկությունների միջև առնչությունները²:

Այսպես՝ տնտեսության բացվածությունը բնութագրող փոփոխականը՝ արտահայտված չօգտագործված ներուժը: Գրավիտացիոն մոդելն օգտագործելիս կարևոր նշանակություն ունեն վիճակագրական տվյալների որակը

¹ Количественный анализ экономической интеграции Европейского союза и Евразийского экономического союза: методологические подходы. – ЦИИ ЕАБР, 2014. с. 55-57.

² Steu L. Ֆրենկման, Եվ. Պոլյակով, Կ. Ռեննկո, Շրջափակման ծախսերը Հայաստանի արտաքին առևտրի ոլորտում: «Տնտեսական քաղաքականություն և աղքատություն», N 8, 2004, էջ 8–12, <http://www.edrc.am>:

և տնտեսական քաղաքականության հետ կապված փոփոխականները մոդելում համարժեք կերպով արտացոլելու ունակությունը: Ընդ որում, գրավիտացիոն մոդելով գնահատման դեպքում անհրաժեշտ է պատշաճ օգտագործել էկոնոմետրիկ մեթոդաբանությունը, հաշվի առնել հիմնական փոփոխականների հնարավոր ոչ ստացիոնարությունը և այդ փոփոխականների միջև երկարաժամկետ կապերի առկայությունը: Մոդելավորման ժամանակ մեծ նշանակություն ունի մշտական և պատահական էֆեկտների հաշվառումը, ինչպես նաև մոդելում ընդգրկված փոփոխականների՝ արտածին լինելու հանգամանքը¹:

Հայաստանի արտաքին առևտրային հոսքերի գնահատումը գրավիտացիոն մոդելի միջոցով: Այսպիսով, գրավիտացիոն մոդելի մանրամասն հետազոտությունը, հիմնական սահմանափակումների, առավելությունների ու թերությունների պարզաբանումը հիմք է տալիս Հայաստանի առևտրային հոսքերը գնահատելու տարածաշրջանային ինտեգրացիոն հիմնական զարգացումների համատեքստում:

Հայաստանի տնտեսության զարգացման քննարկումների կենտրոնում, սովորաբար, աշխարհագրական մեկուսացվածության խնդիրն է: Դա, մի կողմից՝ բնական է երկրի լեռնային տեղադրվածության և ծովային ելք չունենալու պատճառով, մյուս կողմից՝ բացատրվում է պարտադրված տնտեսական շրջափակմամբ: Շրջափակման ազդեցությունը ՀՀ արտաքին առևտրի վրա փորձել են հաշվարկել Լ. Ֆրենկմանը, Եվ. Պոյակովը և Կ. Ռևենկոն: Հիմնվելով ստանդարտ վիճակագրական մոդելների վրա՝ նրանք գնահատել են արտահանման ծավալների կամ արտաքին առևտրի ծավալների նվազման հետևանքով առաջացած կորուստները կամ վնասները: Հեղինակները ՀՀ արտաքին առևտուրն այլ երկրների արտաքին առևտրի հետ համեմատելու համար օգտագործել են երկու հայտնի՝ տնտեսության բացվածության և գրավիտացիայի առևտրային մոդելները: Նրանք գնահատել են առևտրի ծավալների և եկամուտների մակարդակը՝ հիմք ընդունելով երկրի տարածքի և ՀՆԱ-ի նկատմամբ արտաքին առևտրի մեծությունը, համեմատության մեջ է դրվել մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և երկրի բնակչության թվի հետ: Հիմնական եզրակացությունը հետևյալն է. Հայաստանի արտաքին առևտուրն ու արտահանումն ավելի դանդաղ են զարգանում թե՛ ԱՊՀ երկրների, թե՛ ընդհանուր ցածր եկամուտներ ունեցող մյուս երկրների համեմատությամբ, որի հիմնական և ընդունելի պատճառաբանությունը շրջափակումն է: Վերլուծության արդյունքներն օգտագործվել են շրջափակման հետևանքով տնտեսության կրած վնասների մեծությունը հաշվարկելու համար:

Որպես վնասի գնահատական է ընդունվել փաստացի և ռեգրեսիոն վերլուծության միջոցով ստացվող հնարավոր առևտրի ծավալների տարբե-

¹ Количественный анализ экономической интеграции Европейского союза и Евразийского экономического союза: методологические подходы. ЦИИ ЕАБР, 2014. с. 29-30.

րությունը: 2002 թ. տարեկան վնասը գնահատվել է 1100–1200 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի մոտ կեսը: Արտահանման առումով, շրջափակման հետևանքով վնասի գնահատականը կազմել է մոտ 700 մլն ԱՄՆ դոլար: Սակայն ստացված արդյունքից երևում է, որ շրջափակման հետևանքով կրած վնասը տարեցտարի կայուն նվազման միտում է դրսևորել, քանի որ ժամանակի ընթացքում մասնավոր հատվածը շրջափակումը շրջանցելու նպատակով տարբեր ճանապարհներ է գտնում¹:

Շրջափակման հետևանքով կրած վնասները գնահատելու նպատակով հեղինակներն օգտագործել են նաև 1997 թ. Ֆրենկելի մշակած գրավիտացիոն մոդելը, որը բնութագրում է երկկողմանի ամբողջական առևտուրը: Ըստ մոդելի՝ հաշվարկվել է 1999–2002 թթ. արտաքին առևտրաշրջանառության գործակիցը՝ որպես փաստացի առևտրաշրջանառության և գրավիտացիոն մոդելի միջոցով գնահատված հնարավոր առևտրի ծավալների հարաբերություն: Դա տատանվում է 1.0–1.1 սահմաններում՝ հերքելով հնարավոր առևտրի ծավալներից զգալիորեն ցածր փաստացի առևտրի ծավալների վարկածը: Այսպիսով՝ գործակիցը վերաբերում է ընդհանուր առևտրաշրջանառությանը, ուստի արտահանումը կարող է էականորեն զիջել ենթադրվող մակարդակը: Գրավիտացիոն մոդելի միջոցով ստացված գնահատականը կազմել է առևտրային հաշվեկշռի փաստացի պակասուրդի կեսը (2001 թ.՝ ՀՆԱ 12.5%-ը, իսկ 2002 թ.՝ 10%-ը):

Ամփոփելով նշված երկու մոդելների արդյունքները՝ հեղինակները եզրակացրել են, որ շրջափակումը վնասում է Հայաստանի տնտեսությանը, կրճատում արտաքին առևտուրն ու տնտեսական աճը, շրջափակման հետևանքով թերարտահանումը բավական մեծ տոկոս է կազմում՝ ՀՆԱ 10–13%-ը, իսկ շրջափակման բացասական ազդեցությունն աստիճանաբար թուլանում է մասնավոր հատվածի շնորհիվ²:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ հաղորդակցության սահմանափակ հնարավորությամբ, ծովային ելքից զուրկ երկրների տնտեսական զարգացման համար անհրաժեշտ է բարելավել ներքին տրանսպորտային ենթակառուցվածքները, ընդ որում, տարածաշրջանային ենթակառուցվածքային ինտեգրման ռազմավարությունը հնարավորություն կտա զարգացնելու առևտրային նոր ուղիներ, ծովային ելք չունեցող երկրներին՝ միջազգային շուկաների ընդլայնված հասանելիության հնարավորություն: Նմանատիպ երկրներում հարկավոր է ներդրումներ կատարել արդյունաբերության

¹ Տե՛ս Դ. Բաբայան, Մաքսային գործի կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում, Տնտ. գիտ.:

թեկ. գիտ. աստիճանի հայցման ատենախոսություն, Եր., 2009, էջ 106–108:

² Ն. Կաբակովսկյան, ՀՀ արտաքին առևտրի հիմնախնդիրները ռազմավարական պլանավորման գործընթացում, Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Եր., 2014, «Տնտեսագետ» հրատարակչություն, 3(35), էջ 48–49:

այն ճյուղերում, որոնք ամենից քիչն են կախված տրանսպորտային ծախսերից¹:

Ըստ մեկ այլ հետազոտության՝ Մաքսային միությանը միանալիս, տնտեսության ներկա կացության պայմաններում, կարճաժամկետ հեռանկարում Հայաստանը կունենա ՀՆԱ-ի հավելյալ 4% աճ, իսկ Եվրամիության հետ ասոցիացման պայմանագրի դեպքում՝ 2,3 % աճ: Հստակեցնելով, թե ինչ ասել է 4 % հավելյալ տնտեսական աճ, նշվում է, որ, եթե կնքվում է պայմանագիր Մաքսային միությանը միանալու մասին, դրա շնորհիվ տնտեսության մեջ առանց հավելյալ քայլերի, ներկա վիճակը պահպանելով, 2 տարի հետո Հայաստանը տարեկան ունենում է լրացուցիչ 4% տնտեսական աճ²:

Մեր կատարած հետազոտությունը բազմակողմանի դարձնելու նպատակով համեմատության ընտրանքում ընդգրկվել են ԵՄ, ԱՊՀ, այդ թվում՝ ԵՏՄ անդամ երկրների (ԵՏՄ-5) տվյալները³:

Ինչպես արդեն նշվել է, բազային գրավիտացիոն հավասարումը, որպես կանոն, ունենում է հետևյալ տեսքը՝

$$Y_{ij} = \alpha X_i^{\beta_1} \cdot X_j^{\beta_2} \cdot D_{ij}^{\beta_3} \quad (6)$$

որտեղ՝ Y_{ij} -ն՝ երկիր i-ից դեպի երկիր j արտահանման ծավալն է,

X_i ; X_j -ն՝ երկրների տնտեսական կշիռներն են (մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ),

D_{ij} -ն՝ i և j երկրների միջև եղած հեռավորությունն է,

α -ն՝ հաստատուն գործակից է, իսկ β_1 , β_2 , β_3 -ն՝ գործակիցներ:

Սովորաբար, տնտեսագիտական վերլուծություններում օգտագործվում է լրացված գրավիտացիոն հավասարումը, որը ներառում է լրացուցիչ փոփոխականներ, որոնք թույլ են տալիս ավելի մանրակրկիտ ուսումնասիրելու խնդիրը:

Այսպիսով, լրացված գրավիտացիոն հավասարումն ունի հետևյալ տեսքը

$$Y_{ij} = \alpha X_i^{\beta_1} \cdot X_j^{\beta_2} \cdot D_{ij}^{\beta_3} \cdot AV_{ij}^{\gamma} \quad (7)$$

որտեղ՝ AV_{ij} -ն՝ լրացուցիչ փոփոխականների վեկտորն է, որն ազդում է

¹ Ծովային ելք չունեցող երկրների միջազգային մրցունակության հիմնախնդիրները (ՀՀ օրինակով): Մենագրություն/ Գ. Նազարյան, Դ. Հախվերդյան, Ա. Եղիազարյան, Ա. Գրիգորյան, Ա. Փախյան, Ա. Աբրահամյան, Եր., Տնտեսագետ, 2014. էջ 100:

² Ա. Թավադյան, «Մաքսային միությունը Հայաստանին տալիս է տնտեսական անվտանգություն, խոշոր ներդրումներ և զբաղվածության աճ», http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12316

³ Հիմնական դրույթները հրապարակվել են Назарян Г. А., Ахвердян Д. Н., Количественная оценка международной интеграции экономики Армении с применением гравитационной модели, Вестник Ростовского государственного экономического университета (РИНХ). 2014, № 4 (48). – 42–51 с. [http://www.rsue.ru/doc/vestnik/4\(48\)2014.pdf](http://www.rsue.ru/doc/vestnik/4(48)2014.pdf)

արտահանման վրա:

Այսպիսով, մեր կողմից ուսումնասիրվող գրավիտացիոն հավասարումն ունի հետևյալ տեսքը՝

$$\ln Y_{ij} = \alpha + \beta_1 \ln GDP_i + \beta_2 \ln GDP_j + \beta_3 \ln Dist_{ij} + \gamma AV_{ij} + u \quad (8)$$

Վերլուծությունը կատարվել է 1998–2012 թթ. համար: Վերլուծության համար ընտրված երկրները ԵՄ և ԱՊՀ անդամ երկրներն են (տե՛ս հավելված 2), իսկ ամբողջ տվյալների բազայի նկարագիրը ներկայացված է հավելված 3-ում:

Կախյալ փոփոխական է արտահանման ծավալը, իսկ անկախ փոփոխականները հետևյալներն են՝

1. գրավիտացիոն մոդելի հիմնական փոփոխականներ՝ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ և հեռավորությունը երկրների միջև,
2. գրավիտացիոն մոդելի մեջ նաև լայնորեն օգտագործվում են փոփոխականներ, որոնք ներկայացնում են մշակույթի ազդեցությունը երկրների միջև իրականացվող առևտրի ծավալների, ներդրումների և միգրացիայի վրա: Այդպիսի փոփոխականներից են ընդհանուր սահմանի և լեզվի առակայությունը, գաղութատիրական կապերը,
3. կան բազմաթիվ հետազոտություններ, որտեղ հիմնավորվում է, որ դեպի ծով ելք չունեցող երկրների արտաքին տնտեսական կապերը շատ ավելի սահմանափակ են, քան դեպի ծով ելք ունեցող երկրներինը: Այսինքն՝ դեպի ծով ելք չունենալու հանգամանքը բացասաբար է անդրադառնում արտաքին առևտրի վրա,
4. ինտեգրման ինդեքս¹, որը ցույց է տալիս երկրների միջև ինտեգրման խորությունը:

Վարկածներ: Գրավիտացիոն մոդելի վերլուծության շրջանակներում մեր կողմից առաջ են քաշվել հետևյալ վարկածները.

- արտահանող և ներմուծող երկրների մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ծավալները դրական են ազդում արտահանման ծավալի վրա: Այսինքն, որքան մեծ է արտահանող երկրի մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն, այնքան արտահանող երկրի տնտեսությունը զարգացած է և, հետևաբար, առկա են արտահանման ավելի մեծ հնարավորություններ: Մյուս կողմից, որքան մեծ է ներմուծող երկրի մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն, այնքան շատ ավելի մեծ պահանջարկ կարող է ներկայացվել ներմուծվող ապրանքների նկատմամբ:

¹ Առավել մանրամասն տե՛ս Система Индикаторов Евразийской Интеграции ЕАБР 2009, Алматы, 2009, с. 160; Система индикаторов евразийской интеграции II. ЦИИ ЕАБР, 2014, с. 110

- Երկրների միջև եղած հեռավորությունը բացասաբար է ազդում արտահանման ծավալի վրա: Սա նաև պարունակում է ոչ միայն տնտեսական, այլ մշակութային գործոնի ազդեցություն, քանի որ երկրները որքան հեռու են միմյանցից, այքան ավելի մեծ է նրանց մշակութային տարբերությունները:
- Գրավիտացիոն մոդելում առկա են նաև մի շարք սոցիալ-մշակութային փոփոխականներ, որոնք զգալի ազդեցություն են ունենում արտահանման վրա: Դրանք են ընդհանուր սահմանի և ընդհանուր լեզվի առկայությունն ու գաղութատիրական կապերը: Սովորաբար ընդունված է, որ սոցիալ-մշակութային այս գործոնների առկայությունը դրական է ազդում արտահանման ծավալի վրա:
- Մեր կողմից գրավիտացիոն մոդելի մեջ ներմուծվել է նոր փոփոխական՝ ինտեգրման ինդեքս և ակնկալվում է, որ դրա ազդեցությունը արտահանման վրա պետք է լինի դրական: Այսինքն՝ երկրների միջև տնտեսական ինտեգրումը որքան ավելի խորն է, այնքան երկրների փոխադարձ առևտուրն ավելի մեծ է:

Գրավիտացիոն մոդելի գնահատման արդյունքները: Նվազագույն քառակուսիների մեթոդով ամբողջ տվյալների բազայի գնահատմամբ պարզվեց, որ բոլոր մեր առաջադրած հիմնական վարկածները, հիմնականում ընդունվել են (տե՛ս Հավելված 4, Աղյուսակ 4.1): Այնուհետև մենք մոդելում ավելացնում ենք ինտեգրման ինդեքս փոփոխականը (արդյունքները ներկայացված են Հավելված 4, Աղյուսակ 4.2-ում):

Քանի որ մեր կառուցած տվյալների բազան պանելային է, ապա հաջորդ երկու մեթոդները, որոնցով ուսումնասիրել ենք գրավիտացիոն մոդելը, պանելային մեթոդն է: Տվյալների պանելային գնահատումը, իր հերթին, իրականացվել է երկու՝ հաստատուն արդյունքի և պատահական արդյունքի մեթոդներով: Հաստատուն արդյունքի մեթոդի իմաստն այն է, որ յուրաքանչյուր զույգ երկրների միջև հնարավոր է գոյություն ունի մի այնպիսի հաստատուն արդյունք, որը ժամանակի ընթացքում չի փոփոխվում, սակայն ազդում է դրանց արտաքին առևտրի ծավալի վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր երկիր իր հերթին կարող է ունենալ որոշակի հաստատուն արդյունք, որը ժամանակի ընթացքում չի փոփոխվում, բայց ազդեցություն է գործում երկրի արտաքին առևտրի ծավալի վրա, մենք նաև գրավիտացիոն մոդելը գնահատել ենք արտահանող և ներմուծող երկրների հաստատուն արդյունքի մեթոդով (տե՛ս հավելված 6): Գրավիտացիոն մոդելի բոլոր 5 մեթոդներով գնահատման արդյունքներով մեր կողմից առաջ քաշված վարկածները հիմնականում ընդունվում են, ինչը հիմք է գնահատման արդյունքների հավաստիության համար:

Ըստ ստացված արդյունքների՝ արտահանող երկրի մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի 1% աճի դեպքում արտահանման ծավալը կաճի 0.97%-ով:

Հայաստանի նման փոքր երկրի պարագայում այս արդյունքը շատ ավելի նշանակալի կլինի, քանի որ Հայաստանի դեպքում առկա է ոչ տարողունակ ներքին շուկա: Մյուս կողմից, ներմուծող երկրի մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի 1% ավելացումը կրեթի արտահանման 0.17%-ով ավելացման: Գաղութատիրական կապերի առկայությունը զգալի ազդեցություն է թողնում արտաքին առևտրի ծավալների վրա: Այսպես, դրանց առկայության դեպքում, այլ հավասար պայմաններում, արտահանումը կլինի ավելի քան 50%, քան դրանց բացակայության դեպքում: Այստեղ հարկ է նշել, որ շատ մասնագետներ նախկին Խորհրդային Միությունը և դրա անդամ երկրներին դիտարկում են որպես գաղութատիրական համակարգի մի մաս, այդ պատճառով էլ մենք ԱՊՀ երկրների դեպքում դիտարկել ենք դրանց միջև գաղութատիրական կապերի առկայությունը: Հաշվի առնելով այս հանգամանքը, կարող ենք փաստել, որ այստեղ սա լուրջ փաստարկ է ՀՀ Եվրասիական տնտեսական միության անդամակցության համար: Ըստ արդյունքների՝ գործընկեր երկրների միջև հեռավորության 1%-ով ավելացումը բերում է արտահանման 0.87%-ով կրճատման: Այստեղ հարկ է նշել, որ հեռավորության ավելացումը, այլ հավասար պայմաններում, բերում է նաև մշակութային տարբերությունների ավելացման: Վերջինս, ինչպես մենք արդեն առաջ ենք քաշել մեր վարկածներում, կարող է բացասաբար ազդել արտահանման ծավալների վրա: Այս համատեքստում, ինչպես ցույց են տալիս հետազոտության արդյունքները, ընդհանուր լեզվի առկայության պարագայում, այլ հավասար պայմաններում, արտահանման ծավալը 49.7%-ով շատ ավելի մեծ կարող է լինել, քան դրա բացակայության դեպքում: Սա կարող է շատ լուրջ փաստարկ լինել ՀՀ Եվրասիական տնտեսական միության անդամակցության համար, քանի որ այդ ինտեգրացիոն խմբավորման շրջանակներում անդամ երկրներին միավորում է մեկ ընդհանուր լեզու: Ընդհանուր սահմանի առկայության պարագայում, այլ հավասար պայմաններում, արտահանման ծավալը 49.6% շատ ավելի մեծ է, քան դրա բացակայության դեպքում: Այս հանգամանքը հաստատում է միևնույն տարածաշրջանում գտնվող երկրների միջև տարածաշրջանային ինտեգրման խորացման անհրաժեշտությունը: Դեպի ծով ելք չունենալը զգալի ազդեցություն է ունենում արտաքին առևտրի ծավալների վրա: Ըստ մեր հետազոտության արդյունքների՝ այլ հավասար պայմաններում, դեպի ծով ելք չունեցող երկրների արտահանման ծավալները 28.4%-ով ավելի քիչ կլինի, քան դեպի ծով ելք ունենալու պարագայում: Ինչպես գիտենք, Հայաստանը դեպի ծով ելք չունեցող երկիր է, ավելին՝ շրջափակված է երկու կողմից: Այստեղ մեզ առավել հետաքրքրող ինտեգրման ինդեքս փոփոխականի նշանը դրական է (տե՛ս Հավելված 4, Աղյուսակ 4.2): Ավելին, ըստ մոդելի և ընտրված գնահատման մեթոդի արդյունքների՝ ինտեգրման ինդեքսի մեկ միավոր աճը կրեթի 34.7% արտահանման ավելացման:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք նշել, որ ըստ մեր կատարած գրավիտացիոն մոդելի վերլուծության արդյունքների, ինտեգրացիոն ինդեքսի մեկ միավորով ավելացումը կապահովի ՀՀ արտանման ծավալի առավելագույնը 34.7, իսկ նվազագույնը՝ 5% ավելացում: Մեր առաջ քաշած սոցիալ-

մշակութային փոփոխականներով պայմանավորված բոլոր վարկածերն ընդունվել են, ուստի կարող ենք հետևություն անել, որ Եվրասիական տնտեսական միության կամ Մաքսային միության պարագայում ակնկալվող դրական արդյունքը Հայաստանի համար շատ ավելի կարող է լինել ընդհանուր լեզվի և նախկին կապերի առկայության շնորհիվ: Ստացված արդյունքներից ակնհայտ է նաև, որ դեպի ծով ելք չունենալը զգալիորեն նվազեցնում է երկրի արտահանման ներուժը:

Միջազգային տնտեսական զարգացումների ընդհանուր միտումը նոր որակով ներկա տնտեսական համագործակցության գլխավոր բնութագրիչը փոխհամաձայնեցված կամ միասնական քաղաքականության միջոցով ապրանքների, ծառայությունների, կապիտալի, աշխատուժի ազատ տեղաշարժի ապահովումն է: Նույնիսկ զարգացած երկրները ներառված են այս գործընթացներում, և նոր հազարամյակում այն այլընտրանք չունի: Գլխավոր խնդիրն այն է, թե որքանով է ապահովվում նման ինտեգրման փոխշահավետությունը և ներդաշնակությունը տվյալ երկրի տնտեսական զարգացման ընդհանուր միտումներին:

Ստորև ներկայացվում են սույն հետազոտության հիմնական եզրակացություններն ու առաջարկությունները.

1. Եվրասիական ինտեգրման կարևոր առանձնահատկությունը, այն է՝ նոր որակը, ինչն առանձնացնում է ԵՏՄ-ն մի շարք այլ տարածաշրջանային միավորումներից, այն է, որ ինտեգրացիոն գործընթացներն այստեղ ընթանում են բնականոն, էվոյուցիոն ճանապարհով, առանց որևէ արագացման և այլ երկրների արհեստական ներ-գրավման: Սույն որակը դառնալու է Եվրասիական տնտեսական միության ապագայի կայուն հիմքը: Ժամանակակից գլոբալ նախագծերին համապատասխան՝ այդ ձևաչափում քննարկվում է ոչ միայն մաքսասակագնային թեման, այլև իրավական, տեխնիկական կանոնակարգերի, ֆիտոսանիտարական վերահսկողության պրակտիկայի համահարթեցումը և տեխնոլոգիական, շինարարական և ենթակառուցվածքային քլաստերների հասանելիությունը:
2. Երկրների՝ ինտեգրացիոն միավորումների անդամակցության հիմքերի առանցքում պետք է դրվեն երկրի մրցունակության բարձրացումը, տնտեսության արդիականացումը, զարգացած երկրների չափանիշներին հնարավորինս մոտարկումը, գիտելիքահենք տնտեսության ձևավորման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծումը: Ընդ որում՝ երկարաժամկետ կայուն զարգացման հիմքերն ու համակարգային լուծումները պետք է գերակշռեն կարճաժամկետ և արագ արդյունքներին:
3. ՀՆԱ-ի աճի ուղղությամբ հիմնական ռիսկերը պայմանավորված կլինեն ՀՀ կառավարության կողմից իրականացվող տնտեսական բարեփոխումների ընթացքով: Եթե հատկապես գործարար միջավայրի և հարկային վարչարարության բարելավման, ինչպես նաև արդյունաբերական արտահանման խթանման քաղաքականության ուղղությամբ արդյունքները արտահայտվեն ավելի արագ, քան ակնկալվում

է, ապա *յնտեսական աճի մակարդակը կլինի կանխատեսվածից ավելի բարձր:*

4. Հարկային և մաքսային օրենսդրության ներդաշնակեցման ռազմավարական սկզբունքների մշակման տեսանկյունից հարկային և մաքսային վարչարարության բարելավումը պետք է դիտարկվի որպես գործարար և ներդրումային միջավայրի առաջիկա բարեփոխումների գերակայություն:
5. Հարկային ներդաշնակեցումը պետք է ընթանա հետևյալ առանցքային ուղղություններով՝ օրենսդրական դրույթների հնարավորինս համապատասխանեցում, պարզեցում, երկիմաստությունների և անորոշությունների վերացում, կրկնությունների բացառում, փոփոխությունների ընթացքի մշտադիտարկում, ներդաշնակեցման ողջ գործընթացի հրապարակայնություն (թափանցիկություն):
6. ԵՏՄ անդամ երկրների հետ հարկային և մաքսային դրույքաչափերի ներդաշնակեցման գործընթացին զուգահեռ պետք է առաջնորդվել հետևյալ դրույթներով՝
 - հարկման դրույքաչափերը պետք է սահմանվեն այնպես, որ դրանց գործողությունը ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ ունենա *ստավեյագոյն չեզոքություն* և ընդունելի լինեն ձեռնարկատիրական գործունեության շահութաբերության համատեքստում,
 - բոլոր տիպի համադրություններում պետք է հաշվի առնվեն հարկման *արդյունավետ* դրույքաչափերը,
 - այն ապրանքները, որոնց նկատմամբ պահանջարկի գնային ճկունությունը հարաբերականորեն ցածր է և, որոնք չեն հանդիսանում առաջնային սպառման ապրանքներ (ալկոհոլ, ծխախոտ և այլն) կարող են հարկվել առավել բարձր դրույքաչափերով՝ հաշվի առնելով, որ գների այսօրինակ բարձրացումը չի բերի շուկայի իրադրության կտրուկ փոփոխության:
7. Մաքսային համակարգի փոփոխություններին վերաբերող նախաձեռնություններն ու օրենսդրական նախագծերը պետք է մատչելի լինեն հասարակությանը, քննարկվեն տարբեր շահագրգիռ կողմերի հետ և նոր միայն որոշումներ կայացվեն՝ հաշվի առնելով բոլոր հիմնավոր եզրահանգումները:
8. Համադրելով մաքսային առավել մեծ արժեք ունեցող ապրանքների ներմուծման ներկայիս կառուցվածքի պահպանման դեպքում Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցելու, հետևաբար մաքսային դրույքաչափերի փոփոխության ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա, կարող ենք ասել, որ ընդհանուր առմամբ, տարեկան այն կարող է ունենալ մինչև 140 մլն ԱՄՆ դոլարի օգուտ, որի հիմ-

նական մասը բաժին է ընկնում գազի ներմուծման գնի իջեցմանն ու ՌԴ կողմից արտահանման մաքսատուրքի վերացմանը Հայաստանի համար: Սակայն եթե հաշվի առնենք այն, որ գազի իրացումը ՀՀ-ում իրականացվում է ամբողջությամբ ռուսական կապիտալով բաշխող ընկերության կողմից, ապա տնտեսական օգուտը կարող է զգացվել միայն այն դեպքում, երբ գազի գինը նվազի շարքային սպառողի համար: Հակառակ պարագայում՝ սահմանին իջեցված գազի գնի և սպառողին հասնող թանկ գազի գնի տարբերությամբ ստացված շահույթն ամբողջությամբ կարող է շահաբաժինների տեսքով հոսել Ռուսաստան՝ գրոյացնելով վերոհիշյալ տնտեսական օգուտը ՀՀ տնտեսության համար:

